ԱՌԱՋԱԲԱՆ ՁՈՆ ՄՔԱՐԹՈՒՐԻ ԿՈՂՄԻՑ

ԳԵՐԱԶԱՆՑ ՔՐԻՍՏՈՍԸ

Աստծո գեղեցիկ
և անփոփոխ Ավետարանը

ՓՈԼ
ՎՈՇԵՐ

Գերազանց
Քրիստոսը

Գերազանց Քրիստոսը

Աստծո գեղեցիկ և անփոփոխ Ավետարանը

Փոլ Վոշեր

Գերազանց Քրիստոսը, Փոլ Վոշեր, հայերեն
Թարգմանված է անգլերենից, 2023 թ.
Հեղինակային իրավունքները պատկանում են
«2023 by Paul Washer»-ին

Հրատարակված է ԱՄՆ-ում՝
23 24 25 26 27 28/10 9 8 7 6 5 4 3 2 1

«Reformation Heritage Books»
Գրանդ Ռափիդս, Միչիգան 49512
616-977-0889
orders@heritagebooks.org
www.heritagebooks.org

Բոլոր իրավունքները պաշտպանված են: Այս գրքի ոչ մի մասը չի կարող օգտագործվել կամ կրկնօրինակվել որևէ կերպ՝ առանց գրավոր թույլտվության:

Աստվածաշնչյան մեջբերումները հայերեն Աստվածաշունչ մատյան «Արարատ» թարգմանությունից են, եթե չկան այլ նշումներ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Առաջաբան Ջոն ՄքԱրթուրի կողմից VII

1. Պրոլեգոմենոն.....1
2. Ներողություն..... 7
3. Ավետարանի առանցքային բովանդակությունը.....15
4. Նույն Ավետարանը՝ դարեդար 33
5. Ավետարանի գերազանցությունը 47
6. Աստծո գերազանց հայտնությունը.....51
7. Փրկության ուղերձի գերազանցությունը 57
8. Սրբացման գերազանց միջոցը 63
9. Ուսումնասիրության գերազանց թեման 71
10. Քարոզչության գերազանց թեման 83
11. Պարծանքի գերազանց թեման.....91
12. Ավետարանն անտեսելու զգուշացում.....103
13. Եզրափակիչ հորդոր.....123

ՆԱԽԱԲԱՆ

Հիսուս Քրիստոսի Ավետարանը հռչակում է Աստծո անիմանալի փառքը մեղավորների փրկության մեջ, ուստի Ավետարանն ինքնին անգնահատելիորեն փառավոր է: Եվ սա անկարևոր պնդում չէ:

Հրաշալիքներով լի հսկայական այս տիեզերքում չկա ավելի մեծ և ավելի բարձր բան, քան Աստծո փառքն է: Ավելին՝ գոյություն ունեցող ամեն բանի վերջնական *նպատակը* Աստծո փառքն է: Տիեզերքը և դրանում պարփակված ամեն ինչ ստեղծված են մեկ նպատակի համար, այն է՝ ցույց տալ Աստծո փառքը: Մեզնից յուրաքանչյուրը ստեղծված է նույն այդ նպատակի համար: Այս պատճառով էլ առաջին բանը, որի մասին Վեսթմինսթերյան դավանանքը հիշեցնում է, այն է, որ մեր վերջնանպատակը պետք է լինի Աստծուն փառավորելը և Նրան հավիտենապես վայելելը: Սուրբ Գիրքը սովորեցնում է, որ անկախ նրանից, թե ինչով ենք մենք զբաղվում տվյալ պահին, Աստծո փառքը պետք է գերակայի մեր գիտակցության մեջ. «Ուրեմն թե՛ ուտեք, թե՛ խմեք, թե՛ ինչ գործ էլ որ անեք, ամեն բան Աստծո փառքի համա՛ր արեք» (Ա Կորնթ. 10.31):

Տարիներ առաջ մի հրատարակիչ խնդրեց ինձ մասնակցել մի գրքի մշակման աշխատանքներին, որում մի շարք հեղինակներ մեկնում և սովորեցնում էին իրենց սիրած աստվածաշնչյան որևէ խոսք: Քանի որ *ամբողջ* Սուրբ Գիրքը ներշնչված է Աստծուց և օգտակար է արդարություն սովորեցնելու համար, չկա մի խոսք, որը ես

ավելի եմ սիրում, քան մյուսները: Այդուհանդերձ, կան սուրբգրային մի շարք խոսքեր, որոնք մասնավորապես գնահատում եմ՝ դրանց արտասովոր պարզության և խիստ կենտրոնացված լինելու համար: Այդ գրքի իմ մասը գրելիս առաջինը հիշեցի Բ Կորնթացիս 3.18-րդ խոսքը. «Բայց մենք ամենքս, բաց երեսով Տիրոջ փառքն ինչպես հայելու մեջ տեսնելով, նույն պատկերի նման կերպարանափոխվում ենք փառքից դեպի փառք, ինչպես թե Տիրոջ Հոգուց»: Այս խոսքում նկարագրվում և ցույց է տրվում, թե որքան անքակտելիորեն են փոխկապակցված Աստծո փառքը և Ավետարանի ուղերձը:

Աստվածային փառքի թեման գերակշռում է այն համատեքստում, որը Պողոսը կառուցել է Բ Կորնթացիս 3.18-ի շուրջը: Առաքյալն ասում է, որ մարմին առած Քրիստոսը Աստծո փառքի կենդանի մարմնավորումն է: Ավելին՝ նա ասում է, որ Քրիստոսը մեզ ցույց է տալիս Աստծո փառքը, որն անսահմանորեն գերազանց է այն «շեկինահ» փառքից, որի մասին կարդում ենք Հին Կտակարանում: Մովսեսի ժամանակներում Աստծո փառքի ֆիզիկական դրսևորումն այնքան ուժգին էր (նույնիսկ սարսափեցնող), որ այն պետք էր քողարկել: Այդուհանդերձ, Ավետարանի ժամանակներում «Աստծո փառքի գիտության լուսավորությունը [փայլում է] Հիսուս Քրիստոսի դեմքում» (Բ Կորնթ. 4.6), և մենք կարողանում ենք տեսնել այն «բաց երեսով» (3.18):

Եբրայեցիս 1.3-ը նկարագրում է Քրիստոսին որպես «Նրա [Աստծո] փառքի լույսը»: Հաշվի՛ առեք, որ փառքը, որ Քրիստոսը հայտնում է մեզ, շատ ավելին է, քան պայծառ փայլող ֆիզիկական լույսն է: Քրիստոսն Ինքը «աներևույթ Աստծո պատկերն» է (Կող. 1.15). Նա կենդանի կատարելությունն է՝ «Հորից եղած Միածնի փառքը՝ լիքը շնորհքով և ճշմարտությունով» (Հովհ. 1.14): Նա «ճշմարիտ լույսն է, որ ամեն մարդու լուսավորում է» (1.9): Նրա փառքն ակնհայտ է ոչ միայն տեսանելի փայլի, այլև Իր սրբութ-

յան, այն պարզ և անփոփոխ ճշմարտության մեջ, որը Նա մարմնավորում է, ինչպես նաև Իր արդարության բարոյական գեղեցկության և այլ կատարելությունների մեջ:

Ահա ամենազարմանալի մասը. Բ Կորնթացիս 3.18-ում ասվում է, որ նրանք, ովքեր ունեն Քրիստոսին՝ որպես իրենց Տիրոջ և Փրկչի, մասնակից են Նրա աստվածային փառքին: Բոլոր հավատացյալներն անցնում են «փառքից փառք» (փառքի մի մակարդակից դեպի մյուսը) վերափոխման ընթացքը: Կարճ ասած՝ մենք Քրիստոսին կերպարանակից ենք դառնում (Հռոմ. 8.29): Ի հակադրություն Մովսեսի, որի դեմքը ժամանակավորապես կրում էր Աստծո փառքի մարող արտացոլանքը՝ մենք վերափոխվում ենք Սուրբ Հոգու կողմից՝ դառնալով Քրիստոսին նման անոթներ՝ ստեղծված հավիտենապես արտացոլելու Աստծո փառքը: Փառքը մերը չէ, այն միայն Աստծունն է, սակայն քանի որ Քրիստոսի Հոգին բնակվում է հավատացյալների մեջ, այդ փառքը շողում է մեր ներսից, ոչ թե պարզապես արտացոլվում: Մովսեսի փայլը Սինա լեռան լանջին արտացոլանք էր, որ աստիճանաբար մարեց և անցավ: Ի հակադրություն սրան՝ Բ Կորնթացիս 3.18-ում նկարագրված փառքը ժամանակի ընթացքում ավելի է ուժգնանում և մնում է հավիտյան:

Այդպիսով Ավետարանը բացատրում է, թե ինչպես է հնարավոր ընկած և մեղավոր մարդկանց փրկագնումը և վերստեղծումը՝ որպես վայելուչ անոթներ Աստծո իսկ հավիտենական փառքի համար:

Ուստի հասկանալի է, թե ինչու է առաքյալն իր ուղերձը կոչում «Քրիստոսի փառավոր Ավետարան» (Բ Կորնթ. 4.4): Կրկին՝ Ավետարանն ինքնին *փառավոր* է: Առաջին Տիմոթեոս 1.11-ում Պողոսն այն անվանում է «երանելի Աստծո փառավոր Ավետարան, որն ինձ վստահվեց»:

Ավետարանն ավելի մեծ գանձ է, քան աշխարհի բոլոր հարստությունները միասին վերցրած, քանի որ այն,

ինքնին փառավոր լինելով, մեղավորներին ապահովությամբ փոխադրում է Աստծո փառքի մեջ: Ուրեմն Պողոսն իրավացի էր՝ տեսնելով Ավետարանը որպես թանկարժեք վարդապետություն, որը պետք է ամուր պահել և հավատարմաբար ու անխոնջ տարածել աշխարհով մեկ: Նա Տիմոթեոսին հորդորում էր այն լավ պահել (Ա Տիմ. 6.20). «Ունեցի՛ր ողջամիտ խոսքերի օրինակը, որ ինձնից լսեցիր... Այն բարի ավանդը պահի՛ր... որ բնակված է մեզանում» (Բ Տիմ. 1.13-14): Ավելին՝ առաքյալը հավատքի մեջ իր որդուն ասում է. «Եվ այն բաները, որ ինձնից լսեցիր շատ վկաներով, հանձնի՛ր հավատարիմ մարդկանց, որ կարող լինեն ուրիշներին սովորեցնել» (Բ Տիմ. 2.2):

Վախենամ՝ ներկայիս տեսանելի եկեղեցում Ավետարանի փառքը և արժեքը շատ հաճախ թերագնահատվում և թերարժևորվում են: Ես շնորհակալ եմ Փոլ Վոշերի ձայնի և գրչի համար, որ խիստ հակադրվում են մեր սերնդի անարժեք մակերեսայնությանը: Նա հասկանում և հավատարիմ է մնում Ավետարանի արժեքին և գերազանցությանը և այդ մասին գրում է խանդավառությամբ ու հստակորեն:

Ինձ դուր է գալիս այն, ինչ նա արել է այս գրքում՝ հմտորեն մեկնելով Ավետարանը, նկարագրելով դրա թողած անհավանական ժառանգությունը, մատնացույց անելով դրա անգնահատելի արժեքը և վճռականորեն պայքարելով, որ Ավետարանն իրեն իրավամբ պատկանող, այն է՝ *առաջին* տեղը զբաղեցնի անհատ քրիստոնյաների և հավաքական եկեղեցու ուսումնասիրություններում, խոսակցություններում, շփման և երկրպագության մեջ: Ես մի շարք գրքեր եմ հեղինակել, որոնք մեկնում, պաշտպանում և հռչակում են Ավետարանը: Փոլ Վոշերն ամփոփել է այդ ամենն այս փոքրիկ, սակայն հարուստ հատորի մեջ, որն արժանի է բոլոր այն քրիստոնյաների ընթերցանությանը, ում հետաքրքրում է Աստծո փառքը:

1

ՊՐՈԼԵԳՈՄԵՆՈՆ

«Պրոլեգոմենոն» բառը ծագել է հունարեն «prolegein» բայից և նշանակում է «նախապես խոսել»: Գրականության մեջ այն վերաբերում է գրքի նպատակի համառոտ նկարագրին և բացատրությանը, թե ինչպես է հեղինակը ցանկանում հասնել այդ նպատակին:

Աստվածաբանության և փիլիսոփայության մեջ ընդունված տեսակետ է այն, որ բանական արարածն ընտրում է ցանկացած աշխատանքի բարձրագույն վերջնակետը կամ նպատակը: Քրիստոնյա հեղինակի համար այդ մեծ վերջնակետը կամ «summum bonum» ասվածը (լատիներենից թարգմանաբար՝ «մեծագույն բարիք») պետք է միշտ լինի Աստծո փառքը կամ գովաբանությունը: Ինչպես Պողոս առաքյալն է պատվիրել Ա Կորնթացիս 10.31-ում. «Ուրեմն թե՛ ուտեք, թե՛ խմեք, թե՛ ինչ գործ էլ որ անեք, ամեն բան Աստծո փառքի համա՛ր արեք»: Հետևաբար այս համառոտ աշխատությունը գրվել է Աստծո փառքի համար և մեծապես նվիրված է Քրիստոսին ու Նրա Ավետարանին:

Աստծո փառքը

Ինչպե՞ս կարող է մարդը անել կամ գրել որևէ բան, որը կծառայի Աստծուն փառք բերելուն: Սաղմոսերգուն հարցնում է. «Ի՞նչ է մարդը, որ Դու հիշում ես նրան, և մարդի որդին, որ Դու խնամք ես տանում նրա համար» (Սաղմ. 8.4): Երբ համեմատում ենք Աստծուն և մարդուն, մեծա-

գույն անհեթեթություն է թվում այն, որ վերջինը կարող է օրհնել առաջինին, կամ ավելի նվազը կարող է ինչ-որ բան գրել, որը փառք կբերի ավելի մեծին (Եբր. 7.7): Այդուհանդերձ, Սուրբ Գիրքը հստակ ասում է, որ մենք կարող ենք և պետք է փառավորենք Աստծուն մեր խոսքերով և գործերով (Ա Կորնթ. 10.31): Բացի այդ՝ Սուրբ Գիրքը մեզ սովորեցնում է, որ մենք կարող ենք դա անել միայն, եթե խոսենք և գրենք համաձայն այն ամենի, ինչ Ինքն է ասել Իր մասին (Ես. 8.20):

Որքան էլ անուսում լինեմ, իմ նպատակն է գրել Աստծո մասին այն, ինչ Ինքն է Իր մասին հայտնել Սուրբ Գրքում՝ հատկապես մեր Տեր և Փրկիչ Հիսուս Քրիստոսի Ավետարանում: Չնայած որ Աստված Իրեն բազում միջոցներով է հայտնել՝ արարչությամբ, նախախնամությամբ, օրենքով, այդ ամենի հանրագումարը չի հավասարվում Ավետարանի մեկ տասներորդին անգամ: Այդ եզակի ուղերձում է, որ Աստված ամբողջությամբ հայտնում է Իրեն և ամբողջությամբ ճանաչվում է: Խաչն ու դատարկ գերեզմանն են մեզ իրավունք տվել ճանաչելու Աստծուն և փորելու Աստծո Խոսքի հանքերը: Ոսկու, ադամանդի և թանկարժեք քարի հայտնաբերված ամեն կտորը միտված է մեծացնելու մեր սրտերը, որպեսզի գնահատենք, հավատանք և փառավորենք Աստծուն: Ինչպես Ջոն Օուենն է գրել. «Իրական աստվածաբանության վերջնակետը մեղավորների հավիտենական փրկության համար Աստծուն գովաբանելն է՝ Նրա փառքն ու շնորհքը տոնելը»[1]:

Աստծուն մեծարելը

Աստծուն փառավորելու և գովաբանելու համար պետք է մի բան իմանանք Նրա հայտնի գերազանցություններիրի մասին: Դրանք իրենց ամենահստակ դրսևորումն են

1 John Owen, *Biblical Theology* (Morgan, Pa.: Soli Deo Gloria, 1996), 619.

ստանում Հիսուս Քրիստոսի Անձի մեջ: Բ Կորնթացիս 4.6-ում Պողոս առաքյալը գրել է, որ «Աստծո փառքի գիտության լուսավորությունը» հայտնի է դառնում Քրիստոսում: Այդ խոսքերի իմաստն անսխալական է. Աստծո գիտությունը ամենահստակն արտահայտվել է Հիսուս Քրիստոսի Անձի և Իր ժողովրդին փրկագնելու Նրա մեծ գործի մեջ:

Առանց որևէ վերապահման կամ բացառության Սուրբ Գիրքը Հիսուս Նազովրեցուն և Գողգոթայի վրա Նրա մահը հռչակել է Աստծո ամենամեծ հայտնությունը մարդկանց և հրեշտակներին: Անկախ այն բանից, թե որքան լույս է երևում արարչության, օրենքի կամ Աստծո նախախնամության մեջ, այդ ամենը պարզապես առկայծում է՝ համեմատած «Արդարության արեգակի» և այն լույսի հետ, որ Նա սփռում է աշխարհի վրա (Մաղ. 4.2): Հիսուսն ասել է՝ «Ինձ տեսնողը Հորը տեսավ» (Հովհ. 14.9), իսկ Պողոս առաքյալը՝ «Որովհետև Նրանում բնակված է Աստվածության ամեն լիությունը մարմնապես» (Կող. 2.9): Եբրայեցիս թղթի հեղինակը ևս հաստատում է դա՝ ասելով «Որ [Քրիստոսը] Նրա փառքի լույսն է և Նրա էության նկարագիրը» (Եբր. 1.3):

Հետևելով աստվածաշնչյան, ռեֆորմացիոն և ավետարանական այս մեծ ճշմարտությանը՝ մենք կփորձենք ճանաչել Աստծուն՝ ճանաչելով Քրիստոսին և Նրա Ավետարանը:

Կդիտարկենք մարմին առած Որդուն փառքի մեջ, Նրա մարմնացումը, կատարյալ կյանքը, չարչարանքները և մահը Գողգոթայում, ինչպես նաև Նրա հարությունը և, ի վերջո, փառավորումն ու մեծարումը՝ որպես Փրկչի, Տիրոջ և ամենքի Դատավորի: Մեր հաստատ հույսն է, որ որքան ավելի ճանաչենք Քրիստոսին, այնքան ավելի կճանաչենք Աստծուն, ավելի մեծ կլինի մեր գնահատանքը Նրա նկատմամբ, և ավելի գերակա ու մաքուր կլինի մեր փառաբանությունը:

Թեև հնարավոր չէ շրջանակի մեջ առնել Քրիստոսի անսահմանորեն փառավոր Անձը, իմ ցանկությունն է սպառել ինքս ինձ՝ ջանասիրաբար փորձելով Ձեզ ներկայացնել Քրիստոսին: Եթե գիրքն ավարտելով ավելի շատ գիտելիք և գնահատանք ունենաք դեպի Քրիստոսը, ապա ես բավարարված կլինեմ:

Ինչպես Ջոն Ֆրեյվելն է գրել.

> «Եթե իմ գրիչը կարողանար թղթից փառք ստանալ, դա կլիներ ոչ այլ ինչ, քան թղթե փառք: Սակայն եթե, ներկայացնելով Հիսուս Քրիստոսի վեհագույն գերազանցությունը (ինչն այս թղթերի նպատակն է), Ձեզնից կամ նրանցից, ում ձեռքերում կհայտնվեն այս թղթերը, փառք շահեմ Նրա համար, Ում խոնարհաբար ընծայում եմ դրանք, ապա դա իսկապես փառք կլինի՝ Աստծուն հավիտենապես փառավորելու ճանապարհին մի հնարավորություն միայն»[2]:

Խնդրում եմ՝ հիշե՛ք, որ մենք ինքնանպատակ չենք ներկայացնում Քրիստոսին, այլ խոր նպատակ ենք հետապնդում, այն է՝ որ տեսնենք և հավիտենապես հմայված լինենք Նրանով: Մեղավորի ամենամեծ կարիքը Սուրբ Գրքում Քրիստոսին տեսնելն է Սուրբ Հոգու վերածնող և լուսավորող գործի շնորհիվ: Ինչպես Աստված հռչակել է Եսայիա մարգարեի միջոցով. «Ո՛վ երկրի բոլոր ծայրերը, դեպի Ինձ դարձե՛ք, որ փրկվեք, որովհետև Ես եմ Աստված, և ուրիշը չկա» (Ես. 45.22): Բոլոր քրիստոնյաների ամենամեծ կարիքը նույնն է, տարբերվում է միայն ուժգնության աստիճանով: Մենք ավելի շատ Քրիստոսին տեսնելու կարիք ունենք, որպեսզի նմանվենք նրան (Ա Հովհ. 3.1): Ինչպես Պողոս առաքյալն է գրել. «Բայց մենք ամենքս, բաց երեսով Տիրոջ փառքն ինչպես հայելու մեջ տեսնելով, նույն

2 John Flavel, *The Works of John Flavel* (Carlisle, Pa.: Banner of Truth, 1997), 1:xvii.

պատկերի նման կերպարանափոխվում ենք փառքից դեպի փառք, ինչպես թե Տիրոջ Հոգուց» (Բ Կորնթ. 3.18):

Վերածնված սրտում անմիջական կապ կա Քրիստոսին ավելի լավ տեսնելու և Նրան ավելի մոտենալու մեջ: Աստծո մարդիկ որքան ավելի են ուսումնասիրում և բացահայտում Նրա Անձի անսահման գերազանցությունը, այնքան ավելի են սիրում և մոտենում Նրան՝ հաղորդակցվելով և աշակերտելով: Լինի դա ամբիոնից թե գրիչը ձեռքին, սա է մեկնողի առաջնային հանձնարարականը: Այս պատճառով է, որ նա առանձնանում է մարդկանց բազմությունից, մտնում իր աշխատասենյակը և ուսումնասիրում Սուրբ Գիրքը՝ գտնելու Ավետարանի թանկագին քարերը: Չնայած որ նա ձգտում է հարստացնելու նաև սեփական սիրտը, նրա ամենամեծ ձգտումն է, որ Աստծո ժողովուրդը տեսնի այն, ինչ ինքն է տեսնում, և հիանա ու ուղղորդվի դրանով: Հյու Մարտինը գրել է.

> «Ինչպե՞ս է խոր աստվածաբանության իրական փառքը երևան գալիս. ո՛չ որպես չոր, պաշտոնական և վերացական տեսություն, այլ որպես բոլոր եկեղեցիների հոգևոր կյանքի ուրախ սպասուհի և, այո՛, սիրող, խնամատար մայր: Դա տեղի է ունենում այն ժամանակ, երբ աստվածաբանությունն օգտագործում է իր ամենապայծառ գանձերը՝ վերածելով դրանք փաստարկների և ներս հրավիրելով հետաքրքրված մարդկանց: Այն շրջանակի մեջ է առնում իր ամենալավ և ամենահարուստ թեորեմները՝ վերածելով դրանք զորավոր դրդապատճառների, որոնք բանտարկվածին ստիպում են առաջ գալ և խավարում նստածներին ստիպում են լույսի մեջ մտնել»[3]:

3 Hugh Martin, *The Atonement: In Its Relations to the Covenant, the Priesthood, the Intercession of Our Lord* (Edinburgh: James Gemmell George IV. Bridge, 1882), 221.

Ավետարանի ճշմարիտ մեկնությունը պակաս մտավոր աշխատանք չէ, շատ ավելին է, քան դա: Դրա նպատակն այն է, որ մարդու միտքը լցվի Աստծո վեհ մտքերով, սիրտը բոցավառվի Աստծո սիրով, մարմինը ծառայի Աստծուն, իսկ շուրթերը նվիրված լինեն Աստծուն փառաբանելուն: Սա է այս գրքի նպատակը: Իմ ցանկությունը նույնն է, ինչ Իսահակ Ամբրոսինը, երբ գրում էր իր դասական գրվածքի՝ «Նայել Հիսուսին» գրքի ներածությունը:

> «Օ՜, ցանկանում եմ, որ բոլոր մարդիկ (հատկապես նրանք, ում ձեռքերում է այս գիրքը) սկսեն վարժվել «Հիսուսին նայելու» ավետարանական արվեստի մեջ: Եթե այս աշխատության մեջ երկնային որևէ բան չգտնեն, ապա իմ շնորհն ինձ ձախողել է: Այդ դեպքում թող միայն աղոթեն, որ մինչ իրենք նայում են Նրան, Նրանից զորություն թափվի և լցնի իրենց անձերը... Քրիստոսին և Նրա հավիտենական գործին նայելը ցանկություն է առաջացնում դեպի Քրիստոսը՝ մյուս բոլոր ցանկություններից վեր. սիրտը հագենում է միայն Նրանով, իսկ Նա ամենն է՝ ամբողջ զորությունը, ամբողջ սերը, ամբողջ սրբությունը և ամբողջ երջանկությունը: Եթե սա ճաշակած մարդուն պատմես աշխարհի, ոսկու ու փառքի մասին, մի՞թե դրանք արժեք կունենան նրա աչքերում. նա անմիջապես կասի Ձեզ, որ աշխարհը աղբ է, փառքը աղբ է, «ամեն բաներ էլ վնաս եմ համարում իմ Տեր Հիսուս Քրիստոսի գերազանց գիտության համար» (Փիլիպպ. 3.8): «Տվեք ինձ Աստծուն և Քրիստոսին,- կասի նա,- այլապես կմահանամ: Իմ ցանկությունը Նրան է ուղղված, Ով այս ամենն արել է ինձ համար»»[4]:

4 Isaac Ambrose, *Looking unto Jesus: A View of the Everlasting Gospel* (Harrisonburg, Va.: Sprinkle Publications, 1986), viii, 75.

2

ՆԵՐՈՂՈՒԹՅՈՒՆ

Օքսֆորդի անգլերեն բացատրական բառարանում «ներողություն» բառը սահմանված է որպես «ձախողման ընդունում ափսոսանքով»: Ճիշտ այդպես ես ցանկանում եմ ներողություն խնդրել այս գրքի ամենասկզբում: Որքան էլ գիտակ կամ պերճախոս լինի քարոզիչը, որքան էլ ջանասեր և անվրեպ լինի գրողը, նրա խոսքը չի կարող համեմատվել Հիսուս Քրիստոսի Ավետարանի փոքրագույն մասի հետ անգամ: Ոչ ոք չի կարող հաշվել անապատի ավազահատիկները կամ աստղերի բազմությունը. այդուհանդերձ, նշված երկու աշխատանքը կատարելը շատ ավելի հեշտ է, քան Քրիստոսի և Նրա Ավետարանի գեղեցկությունը նկարագրելը: Ջոն Նյուտոնը գրել է. «Մարդկանց և հրեշտակների համար անհնար է լիովին փոխանցել այս մեկ նախադասության խորությունը. «Քրիստոս Հիսուսն աշխարհ եկավ՝ մեղավորներին փրկելու» (Ա Տիմ. 1.15)»[1]: Այս մեծ ճշմարտության հետ համաձայնել է Ուիլիամ Բեյթսը.

> «Ավետարանի ուսմունքը գերազանցում է ամենաազնիվ գիտությունները՝ թե՛ հայեցողական և թե՛ կիրառական... Այն բարձրագույն հիացմունք է առաջացնում մարդու մեջ: Ամենաուժեղներն անգամ չեն կարող ըմբռնել դրա իրավացի մեծությունը. մարդկային հասկացողությունը ճկվում է դրա փառքի ծանրությունից: Առաքյալը, որը տեսել էր երկնքի

1 John Newton, *The Works of John Newton* (Carlisle, Pa.: Banner of Truth, 1988), 2:279.

> լույսը և գիտեր այնպիսի բաներ, որ իրենից առաջ ոչ ոք չէր իմացել, աստվածային իմաստության մեկ պատառիկի մասին խոսելիս զարմանքից պոռթկում է. «Ո՜վ Աստծո մեծության և իմաստության և գիտության խորությունը. ինչպե՞ս անքննելի են Նրա դատաստանները, և անհասկանալի են Նրա ճանապարհները» (Հռոմ. 11.33): Այն բանից հետո, երբ ամբողջությամբ գործի ենք դրել մեր մտքի ուժը՝ փորձելով հասկանալ այս բացառիկ թեման և հատել մեր մտքի ճկունության սահմանը, հարիր կլինի մեր հասկացողության բացերը լրացնել հիացմունքով, ինչպես սաղմոսերգուն է ասում. «Տե՛ր, որքան հրաշալի են Քո մտքերը մեր մասին»»[2]:

Գրողները և քարոզիչները հակված են ձախողվելու, և այո՛, նույնիսկ նրանց վիճակված է ձախողվել, քանի որ մեր զրույցի թեման մարդկանց և հրեշտակների մտքից և խոսքերից վեր է: Նույնիսկ այն բանից հետո, երբ քարոզիչը գործի է դնում իր ամբողջ կարողությունը թեմայի ուսումնասիրության մեջ, սիրտն աղոթքի մեջ թափում է Աստծո առջև և սպառում իրեն ամբիոնի մոտ, այնտեղից պետք է իջնի գլուխը կախ՝ իմանալով, որ կեսը կամ մեկ տասներորդն անգամ չասվեց: Այս ճշմարտությունը լավ է ձևակերպել Ջոն Ֆլեյվելը.

> «Օ՜, գեղեցիկ է արեգակը, գեղեցիկ է լուսինը, գեղեցիկ են աստղերը, գեղեցիկ են ծաղիկները, վարդերը, շուշանները. գեղեցիկ են ստեղծվածները: Սակայն տասը հազար, հազարավոր անգամներ ավելի գեղեցիկ է Տեր Հիսուսը: Ավա՜ղ, ես անարդար գտնվեցի Նրա նկատմամբ՝ անգամ այս համեմատությունն անելով: Օ՜, խավար արեգակ և լուսին, բայց՝ գեղե-

2 William Bates, *The Harmony of the Divine Attributes* (Birmingham, Ala.: Solid Ground Christian Books, 2010), 101–2.

> ցիկ Տեր Հիսուս: Օ՜, խամրած ծաղիկներ, վարդեր և շուշաններ, սակայն՝ գեղեցիկ, գեղեցիկ ու էլ ավելի գեղեցիկ Հիսուս: Օ՜, ամեն ստեղծվածներ՝ խավար ու տձև, գեղեցկությունից զուրկ՝ ամենագեղեցիկ Հիսուսի հետ համեմատության մեջ: Օ՜, խավար երկինք, սակայն՝ օ, գեղեցիկ Քրիստոս: Օ՜, սև հրեշտակներ, սակայն՝ գերազանցապես գեղեցիկ Տեր Հիսուս»[3]:

Քրիստոնեական աշխարհի ամենամեծ սրտերն ու մտքերը չեն հասել Ավետարանի «Էվերեստի» լանջին անգամ: Նույնիսկ երկնքում հավիտենության հավիտենություններից հետո մենք չենք հասնի գագաթին: Սա նշանակում է, որ Ավետարանը չի կարող հասկացվել մակերեսայնորեն, առավել ևս՝ խորությամբ: Մենք պարզապես ընդունում ենք դրա անսահմանությունը: Նույնիսկ Պողոս առաքյալն է ընդունել դա՝ «...հիմա հայելու մեջ օրինակով ենք տեսնում» (Ա Կորնթ. 13.12): «Ո՜վ Աստծո մեծության և իմաստության և գիտության խորությունը. ինչպե՜ս անքննելի են Նրա դատաստանները, և անհասկանալի են Նրա ճանապարհները» (Հռոմ. 11.33): Էդվարդ Փեյսոնը գրել է.

> «Ավետարանը Եհովայի բարոյական գերազանցության և կատարելությունների մեծ ցուցադրումն է, որը ոչ ոք չի կարող հերքել՝ բացի հոգևորապես կույրերից, որոնք անտեղյակ են դրա բնույթին: Այդուհանդերձ, անհնար է մեկ զրույցի կամ նույնիսկ մեկ հատորի միջոցով ընդհանուր պատկերացում տալ Աստծո բնույթի այդ մեծ դրսևորման վերաբերյալ: Ավելի հեշտ կլինի արևը լապտերի մեջ ամփոփել: Ուստի չպետք է փորձել նկարագրել մի բան, որին կնսեմացնեն ոչ միայն նկարագրությունները, այլև գաղափարները. չեմ ասում

3 Flavel, *Works of John Flavel*, 1:xix–xx.

մարդկանց, այլ Գահի առջև կանգնող ամենաբարձր հրեշտակապետի մասին: Ոչ մի էջ, որն ավելի փոքր է, քան փրկության Ավետարանի ծրագիրը մշակող հավիտենական, ամեն բան պարփակող միտքն է, չի կարող ցուցադրել դրա փառքերը. այն նաև չի կարող ամբողջապես ընկալվել ավելի նվազ մտքի կողմից»[4]:

Տասնյոթերորդ դարի պուրիտան Ջոն Օուենը ամենամեծ աստվածաբաններից է, որ եկեղեցին երբևէ ունեցել է: Նրա *աշխատությունները,* որոնք ամփոփված են տասնվեց հատորի մեջ, ինչպես նաև Եբրայեցիս թղթի նրա մեկնությունը՝ բաղկացած յոթ հատորից, նմանը չունեն: Այդուհանդերձ, գիտակցելով Ավետարանի անսահման մեծությունը, որը խանդավառությամբ ցանկանում էր բացատրել, նա իրեն պարտավորված է համարել գրել հետևյալը իր «Աստվածաշնչյան աստվածաբանություն» գրքում.

«Քրիստոսի աստվածաբանությունը նկարագրելը եղել է իմ դավանած մտադրությունը և սահմանած նպատակը՝ այս աշխատության գրեթե միակ նպատակը: Սա պարզապես Ավետարանի ուսմունք չէ, այլ մտադրվածություն, որով միայն հնարավոր է ընդունել այն. այդ նպատակն է եղել աչքիս առջև այն պահից ի վեր, երբ սկսել եմ գրել այս հատորը... Ես անձնապես չեմ կարող ասել, թե երկնային իմաստության ուսումնասիրության մեջ հասել եմ որևէ բարձրակետի կամ կարողացել եմ անել ավելին, քան խեղճությամբ կմկմալն է նման բարձր բաներ քննարկելիս կամ սովորեցնելիս: Ահա՛ մենք՝ գետնի վրա, որտեղ լավագույն դեպքում կարող ենք հուսալ, մասնակիորեն ինչ-որ բան տեսնել: Ահա՛ մի թեմա, որը մարդկային միտքն

4 Edward Payson, *The Complete Works of Edward Payson* (Harrisonburg, Va.: Sprinkle Publications, 1998), 3:42–43.

> իր ամբողջ լայնությամբ երբեք չի կարողանա ընկալել: Եվ դա կշարունակվի այդպես, քանի դեռ մենք հայելու մեջ օրինակով ենք տեսնում, մինչև գա ժամանակը, և այնպես կճանաչվենք, ինչպես որ *Նրանից* ճանաչվեցինք (Ա Կորնթ. 13.12): Կարիք չկա հերքելու մեր խոր անտեղյակությունը և ծուլության ամոթը, քանի որ նույն առաքյալը նույն թղթի մեջ ընդունում է, որ «Եթե մեկը կարծում է, թե բան գիտի, նա դեռ բան չգիտաց, ինչպես պետք է գիտել» (Ա Կորնթ. 8.2)[5]:

Եթե Ջոն Օուենի նմանները և նույնիսկ մեծն Պողոս առաքյալը բացեիբաց ընդունում էին Ավետարանի՝ իրենց սահմանափակ ընկալումը և այն մեկնելու գրեթե անկարողությունը, որքան ավելի ես պետք է խոստովանեմ նման վեհ թեմային անդրադարձ կատարելու իմ անընդունակությունը: Իմ ամբողջ ուժը և ուսումնասիրություններ անելով կարողություններս սպառելուց հետո ես ընդունում եմ, որ գրեթե ոչինչ չեմ բացահայտել, եթե հաշվի առնենք, թե դեռ որքան բաներ կան, որ պետք է ընկալվեն: Երբ քննում եմ ավետարանական այն ճշմարտությունները, որոնք գրել եմ այս գրքի էջերում, ցանկանում եմ ինչպես Հոբը գոռալ. «Ահա սրանք են Նրա ճանապարհների ծայրերը, և ի՞նչ չնչին բան է Նրա վրա լսվածը, և ո՞վ կարող է իմանալ Նրա զորության որոտումը» (Հոբ 26.14): Երբ ուսումնասիրում եմ այս ճշմարտությունների իմ մատուցումը, կրկին ստիպված եմ լինում Հոբի հետ միասին խոստովանել, որ. «…Իրավ խոսել եմ, բայց չեմ հասկացել, ինձ համար անիմանալի են եղել, և ես չգիտեի» (Հոբ 42.3): Այդուհանդերձ, ինձ մխիթարում և քաջալերում են Ջոն Ֆլեյվելի խոսքերը, նա ողբում էր նույնիսկ ամենամեծ գիտնականների անընդունակությունը՝ Քրիստոսին

5 Owen, *Biblical Theology*, 591.

ներկայացնելու Իրեն արժանի ձևով.

> Սակայն թույլ տվեք ասել Ձեզ, որ նույնիսկ ամբողջ աշխարհը՝ որպես հարթակ, բավականաչափ մեծ չէ՝ ցույց տալու Քրիստոսի փառքը կամ բացահայտելու կեսն անգամ այն անքննելի հարստություններին, որոնք պահված են Նրանում: Այդ ամենի մասին շատ ավելի լավ կխոսվի և կհասկացվի Երկնքում՝ աստվածային լույսի մեջ, որով լուսավորված ժողովը կքարոզի Նրա փառքերը, քան իմ կակազող լեզուն կամ խզբզոցներ անող գրիչն է անում՝ պարզապես աղավաղելով դրանք: Ափսո՛ս: Ես Նրա փառքերի մասին գրում եմ լուսնի լույսի ներքո. չեմ կարող Նրա փառքի կեսն անգամ Իրեն տալ: Իսկապե՛ս, ոչ մի լեզու՝ բացի Նրա լեզվից (ինչպես Նազիանացին է ասել Բազիլի մասին), չի կարող այդ աշխատանքն անել: Հապա ի՞նչ կարող եմ ասել Քրիստոսի մասին: Նրա գերազանց փառքը կուրացնում է ամեն պատկերացում, կուլ է տալիս ամեն դրսևորում: Երբ մենք նմանեցնում ենք Նրան ամեն արարածի, որն ինչ-որ գերազանց կամ դուրեկան հատկանիշ ունի, այնքան, որ ամբողջ արարչությունից քերում ենք իր ամբողջ զարդարանքը և Քրիստոսին հագցնում այդ ամբողջ փառքը ու նույնիսկ երբ, Նրան փառք ընծայելով, հոգնեցնում ենք մեր լեզուները, ավա՜ղ, ոչինչ արած չենք լինում, քանզի ամենն արված է[6]:

Ի հեճուկս ձախողվելու համոզվածության՝ ես պետք է գրեմ ու խոսեմ, քանի որ «վայ է ինձ, եթե Ավետարանը չքարոզեմ» (Ա Կորնթ. 9.16): Հետևաբար, կիսվելով Ավետարանը մեկնելու իմ անկարողության և դա անելու բացարձակ անհրաժեշտության միջև, ես այս

6 Iavel, *Works of John Flavel*, 1:xviii.

աշխատությունը հանձնում եմ Քրիստոսի եկեղեցուն հավաքականորեն և յուրաքանչյուր հավատացյալի՝ անհատապես: Ինչպես Հյու Մարտինն է ողբացել Ավետարանի մասին գրելիս՝ ասելով. «Ամաչում եմ, երբ հասկանում եմ, թե որքան փոքր է այս աշխատությունը՝ կատարելու այն պարտականությունը, որը հանձն եմ առել: Բայցևայնպես, իմ այս լուման գցում եմ գանձանակի մեջ»[7]: Ներողության այս խոսքերը կեզրափակեմ՝ ընթերցողին առաջարկելով Ջոն Բանյանի դասական ստեղծագործության՝ «Ուխտավորի ճամփորդությունը» գրքի ամփոփիչ խոսքերը.

> Ի՞նչ կասես այս կեղտի մասին. համարձակությա́մբ ասա,
> Ի՞նչ կասես, եթե դրանից ձերբազատվեմ, բայց ոսկին պահեմ.
> Իսկ ի՞նչ, եթե ոսկին պատված լինի հանքաքարով,
> Ոչ ոք խնձորը դեն չի նետում միջուկի պատճառով:
> Սակայն եթե ամենն էլ զուր համարես,
> Չգիտեմ՝ ուրիշներն՝ ինչպես,
> Բայց ես նորից կերազեմ[8]:

7 Hugh Martin, *The Shadow of Calvary* (Carlisle, Pa.: Banner of Truth Trust, 2016), 9–10.

8 John Bunyan, *The Pilgrim's Progress* (Carlisle, Pa.: Banner of Truth Trust, 2017), 190.

3

ԱՎԵՏԱՐԱՆԻ ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

«Ավետարանը» քրիստոնեական բառապաշարում ամենահաճախ օգտագործվող բառերից է: Այդուհանդերձ, այս խոսքի իրական զորությունը երևում է միայն այնքանով, որքանով մենք հասկանում ենք դրա աստվածաշնչյան իմաստը: Մի կողմից՝ Ավետարանը կարելի է գտնել Սուրբ Գրքի բոլոր էջերում, մյուս կողմից՝ այն վերաբերում է միայն շատ հստակ և առանձնահատուկ ուղերձի, որի կենտրոնում Հիսուս Քրիստոսի՝ Աստծո Որդու Անձը և փրկագնող աշխատանքն է: Այս վերջին իմաստով էլ մտադրություն ունեմ կիրառելու «ավետարան» բառն այս աշխատության մեջ:

Սուրբ Գրքի էջերով անցնելով՝ մենք սովորում ենք, որ Ավետարանը բազում ուղերձներից մեկը չէ, այլ *գլխավոր* ուղերձն է՝ մյուս բոլոր ուղերձներից վեր: Այն պետք է ուսումնասիրել, փայփայել ու հռչակել որպես Աստծո մեծագույն հայտնությունը մարդուն, մարդուն տրված փրկության միակ ուղերձը և այն մեծագույն միջոցը, որով քրիստոնյան վերափոխվում է՝ համապատասխան Աստծո բնությանն ու կամքին:

Եզրույթների սահմանում

Անգլերենում «gospel» (ավետարան) բառը ծագել է հին անգլերեն «godspel»-ից (*gōd* [բարի] + *spel* [լուր, պատ-

մություն]): Ի հակադրություն տարածված կարծիքի՝ հին անգլերեն «gōd» բառում օգտագործված է երկար ō ձայնավորը, և այն նշանակում է ոչ թե «Աստված», այլ «այն, ինչ բարի է»: Ուստի բառը նշանակում է ոչ թե «Աստծո պատմություն», այլ «բարու պատմություն»: Նոր Կտակարանում «ավետարան» բառը թարգմանված է հունարեն «euangélion» բառից (*eú* [բարի] + *aggéllō* [հռչակել]): Նշանակում է բարի լուր, ուրախ լուր կամ ավետիս: Եկեղեցական լատիներենում «ավետարանը» թարգմանված է «bona annuntiatio» (բարի հայտարարություն) կամ «bonus nuntius» (բարի ուղերձ):

Այս գլխում համառոտ կքննարկենք Ավետարանի առանցքային տարրերը, որպեսզի մեր ուսումնասիրությունը սկսենք հասկանալի սահմանումով: Սակայն մինչ առաջ անցնելը կա մի ճշմարտություն, որն ընթերցողը պետք է ամուր պահի. Ավետարանը բարի լուր է, և այն պետք է հռչակվի որպես այդպիսին: Թեև Ավետարանն Աստվածաշնչում անդրադարձ է կատարում շատ մռայլ թեմաների, ինչպիսիք են մեղքը, աստվածային բարկությունը, հանդիմանությունը և մահը, այս թեմաներն ինքնանպատակ չեն, այլ միջոց են՝ ցույց տալու Աստծո շնորհքը և այն փրկությունը, որը Նա առաջարկում է:

Նոր Կտակարանում կա երկու հատված, որոնցում առավել արտահայտված են Ավետարանի ուղերձին հատուկ բարությունն ու ուրախությունը: Առաջինը Ղուկասի 2.9-10-ն է. «Եվ ահա Տիրոջ հրեշտակը կանգնեց նրանց առաջ, և Տիրոջ փառքը նրանց շուրջը ծագեց, և մեծ վախով վախեցան: Եվ հրեշտակն ասաց նրանց. «Մի՛ վախեցեք, որովհետև ահա մեծ ուրախություն եմ ավետում ձեզ, որ բոլոր ժողովրդին պիտի լինի»»:

Երբ Սուրբ Աստված մոտենում է մեղավոր մարդուն՝ նույնիսկ պատգամաբերի միջոցով, երկյուղելու առիթ կա: Արդյոք Աստված եկել է խաղաղության ձիթենո՞ւ ճյուղով,

թե դատաստանի սրով: Երբ Սամուել մարգարեն մոտեցավ Բեթլեհեմին. «...քաղաքի ծերերը դողալով դիմավորեցին նրան և ասացին. «Խաղաղութեա՞մբ է գալդ»» (Ա Թագ. 16.4): Եթե քաղաքի ծերերը նման երկյուղով մոտեցան իրենց նման մարդուն, կարելի է միայն պատկերացնել, թե ինչպիսի երկյուղով լցվեցին հովիվների սրտերը, երբ Տիրոջ հրեշտակի ներկայության մեջ հայտնվեցին: Եվ ինչպիսի՜ թեթևություն զգացին, երբ լսեցին, որ հրեշտակն Աստծո կողմից ուղարկվել է «մեծ ուրախության բարի ավետիսով»: Մեզնից նրանք, ովքեր կանչված են Ավետարանի ծառայության մեջ, միշտ պետք է հիշեն, որ մենք ևս ուղարկված ենք՝ տարածելու նույն ավետիսը: Չնայած որ պետք է առնչվենք ծանր՝ նույնիսկ վշտալի ու ցավալի բաների, փրկության խոստումը պետք է առաջարկենք բոլոր նրանց, ովքեր կհավատան և կապաշխարեն: Մեր ուղերձը դատապարտում է միայն նրանց, ովքեր մերժում են այն:

Երկրորդ հատվածը, որը զորավոր կերպով փոխանցում է Ավետարանի բարությունը և ուրախությունը, Հռոմեացիս 10.15-ն է, որտեղ Պողոս առաքյալը մեջբերում է Եսայիա 52.7-րդ խոսքը. «Ինչ գեղեցիկ են սարերի վրա ավետարանչի ոտքերը, որ խաղաղություն է քարոզում, բարիք ավետում, փրկություն քարոզում, որ ասում է Սիոնին՝ քո Աստվածը թագավոր է»:

Առաջինը՝ ուշադրությունն դարձրեք կրկնությանը: Եսայիայի և Պողոսի համար շատ դժվար կլիներ լեզվական միջոցներով ավելի մեծ շեշտադրում անել Ավետարանի բարության վրա՝ չխախտելով բնագիր լեզվի քերականական կանոնները: Նրանք օգտագործում են լեզվական բոլոր հնարքները, որպեսզի հաղորդեն, որ Ավետարանը բոլոր լուրերից ամենալավն է: Երկրորդը՝ ուշադրությունն դարձրեք «գեղեցիկ» բառին: Ավետարանն այնպիսի բարի լուր է ընդունող և հավատացող սրտի համար, որ այն «գեղեցկացնում է» նույնիսկ պատգամաբերի կոշտացած և հողոտ ոտքերը:

Պատկերացրեք այն բանտարկյալի վախն ու անհուսությունը, որին որպեներ անց մահապատիժ է սպասում: Սակայն մինչ կախաղան բարձրացնողը ամրացնում է պարանի հանգույցը, մի սուրհանդակ վազում է աստիճաններով դեպի վեր և գոռում. «Բարի լուր: Բարի լուր: Թագավորը ներում է շնորհել»: Չնայած այն բանին, որ սուրհանդակը պատված է քրտինքով և փողոցի տիղմով, նրան գեղեցկացնում է իր ուղերձը, և բանտարկյալը գրկում է նրան՝ առանց վերապահության:

Կամ պատկերացրեք մի փոքր քաղաք, որի սահմանների մոտ հավաքված է մեծ բանակ՝ պատրաստ սպանելու բնակիչներին և թալանելու քաղաքը: Ի պատասխան՝ թագավորը հավաքում է իր զորքը և գնում դիմավորելու ներխուժել պատրաստվող հրոսակախմբին: Օրերն անցնում են՝ առանց քաղաքի ճակատագրի ապահովության մասին որևէ լուրի: Այնուհետև հեռվից քաղաքին է մոտենում մի վազորդ: Քաղաքացիները վախից շունչները պահում են: «Թագավորն ու ամբողջ բանակը ոչնչացվե՞լ են: Ընդամենը մեկ մա՞րդ է կենդանի մնացել, որ մահվան բոթը հասցնի քաղաք»: Եվ երբ հույսի վերջին նշույլը մարում է, հանկարծ լսվում է սուրհանդակի ձայնը. «Բարի լուր: Բարի լուր: Թագավորը հաղթել է: Թշնամին հետ է շպրտվել: Դուք կապրեք, չեք մահանա»: Սուրհանդակը պատված է արնաշաղախ հողով, նրանից պատերազմի գարշահոտություն է գալիս, սակայն նրան գեղեցկացնում է իր ուղերձը, և մարդիկ ուրախության աղաղակներով, գրկաբաց ընդունում են նրան:

Աստված չէր կարող ավելի լավ մի բառ ընտրել, քան «ավետարան»-ն է՝ նկարագրելու Իր Որդու կատարած փրկագնման գործը: Հաղթահարելով մահը, դժոխքը և գերեզմանը՝ Նա այժմ Իր բանագնացներին ուղարկում է աշխարհի հեռավոր անկյունները՝ հռչակելու Իր ժողովրդի համար Իր հաղթանակի և փրկության բարի լուրը:

Առանցքային տարրեր

Սուրբ Գրքի Հին և Նոր Կտակարաններում կան բազմատեսակ ամփոփ պնդումներ Ավետարանի բովանդակության մասին: Ամենակարևորներից մի քանիսը կարելի է գտնել Ծննդոց 3.15-րդ, Եսայիա 53.1-12-րդ, Հովհաննես 3.16-17-րդ, Հռոմեացիս 3.25-26-րդ, Ա Կորնթացիս 15.3-4-րդ և Բ Կորնթացիս 5.21-րդ խոսքերում: Այս գրքում մենք խորությամբ ուսումնասիրելու ենք դրանցից յուրաքանչյուրը և շատ այլ խոսքեր: Այդուհանդերձ, այս պահին որպես ներածություն համառոտ կնշեմ Ավետարանի հիմնական կամ առանցքային տարրերը, ինչպես որ դրանք ներկայացված են Սուրբ Գրքում:

Աստծո բնավորությունը

Մարդը չի կարող հասկանալ իրականությունը՝ առանց հասկանալու, թե Ով է Աստված: Ուստի Առակաց 9.10-րդ խոսքում կարդում ենք. «Իմաստության սկիզբը Տիրոջ երկյուղն է, և Ամենասուրբին ճանաչելը՝ հանճար»: Սա հատկապես ճշմարիտ է, երբ խոսքը վերաբերում է Հիսուս Քրիստոսի Ավետարանին: Մենք չենք կարող ճիշտ հասկանալ Ավետարանը, եթե չհասկանանք Աստծո բնավորությունը: Ինչո՞ւ պետք է Քրիստոսը մահանար. քանի որ Աստված սուրբ է և արդար: Ինչո՞ւ Քրիստոսը մահացավ. քանի որ Աստված սեր է: Երկու հարցերի պատասխաններն էլ Աստծո բնավորության մեջ են:

Հաճախ ասվում է, որ մարդու ամենամեծ խնդիրը մեղքն է: Այդ պնդումը սխալ չէ, սակայն այն անավարտ է: Մեղքը Աստծո հետ հաղորդակցության խոչընդոտ չէր լինի, եթե Նա բարոյազուրկ Աստված լիներ: Մեղքը խնդիր է, քանի որ Աստված սուրբ է և արդար: Իրականում ամբողջ Ավետարանը հաշտեցնում է Աստծո արդարությունը, որով Նա մեղավորների պատիժն է պահանջում (Ելից 34.7), Նրա ողորմության հետ, որով Նա «չի ուզում ամբարշտի

մեռնելը» (Եզեկ. 18.23, 33.11): Ինչպե՞ս կարող է Աստված միաժամանակ ողորմություն ցուցաբերել և պատժել չարերին: Ինչպե՞ս կարող է Նա լինել սիրող և արդար: Պատասխանը կարելի է գտնել միայն Քրիստոսի Անձի և կատարած գործի մեջ, Ով կրեց Իր ժողովրդի մեղքերը, նրանց փոխարեն տառապեց Աստծո բարկությունից և բավարարեց Աստծո՝ արդարության պահանջը, որը նրանց դեմ էր: Սա է Ավետարանի սիրտը, բայցևայնպես այն հնարավոր է հասկանալ միայն Աստծո բնավորության հայտնության լույսի մեջ:

Մարդու այլասերվածությունը

Ավետարանը ճիշտ հասկանալու համար մենք պետք է հասկանանք և ընդունենք Սուրբ Գրքի վկայությունը մարդու բարոյական այլասերվածության և Աստծուն ուղղված անկոտրում ապստամբության մասին: Ադամը ստեղծված էր *imago Dei*՝ Աստծո պատկերով (Ծննդ. 1.27): Այդուհանդերձ, նրա ապստամբությունն Աստծո դեմ և դրան հետևող անկումն իր արդարության սկզբնական դիրքից պատճառ դարձան մարդկության անկման և նյութական տիեզերքի ապականման (Հռոմ. 5.12, 8.20-22): Թեև Աստծո պատկերից ինչ-որ բան մնացել է մարդու մեջ (Հակ. 3.9), մարդկությունը կրում է Ադամի մեղքը, նրա բարոյապես խեղված բնությունը և ինքնակամ մասնակցում է նրա ապստամբությանը (Ծննդ. 5.3, 8.21, Հռոմ. 3.10-23, Եփես. 2.1-3, 4.17-19): Արդյունքում մարդկությունը զատվել է Աստծո հետ հաղորդակցությունից և գտնվում է Նրա արդար բարկության ներքո (Հովհ. 3.36, Հռոմ. 1.18): Մեր կողմից բոլորովին անհնար է Աստծո հետ հաշտվելը, սակայն «այն բաները, որ անկարելի են մարդկանց մոտ, կարելի են Աստծո մոտ» (Ղուկ. 18.27): Նա մարդկանց փրկություն է տվել Իր Որդու մահվամբ և հարությամբ: Հիսուս Քրիստոսի Ավետարանը չի անտեսում կամ փոքրացնում մեղքի կարևորությունը, ընդհակառակը՝

առաջ է բերում այն իր ամբողջ տգեղությամբ և խաչի վրա լուծում դրա հարցերը (Ես. 53.4-6,10, Ա Պետր. 2.24, 3.18): Եթե մենք ջնջենք կամ անլուրջ վերաբերվենք Ավետարանի այս առանցքային ճշմարտությանը, ապա ապականած կլինենք դրա բովանդակությունը, կրճատած կլինենք դրա զորությունը, և ինքներս մեզ վրա դատաստան կբերենք (Գաղ. 1.8-9):

Քրիստոսի Անձը և փառքը մինչ մարմին առնելը

Ավետարանը պատմական գրվածք է այն մասին, թե ինչպես Աստծո Որդին մարմին առավ (Հովհ. 1.1), ապրեց մեղավոր մարդկանց հետ (Հովհ. 1.4), չարչարանքներ կրեց և մահացավ որպես փոխանորդ կամ փոխարինող Իր ժողովրդի համար (Մատթ. 27.50, Մարկ. 15.37, Ղուկ. 23.46, Հովհ. 19.30): Այս զարմանահրաշ գործողությունը հաճախ անվանել են նվաստացում կամ իջեցում: Այնուամենայնիվ, այդ եզրույթներից ոչ մեկը չի կարող լիովին փոխանցել Որդու խոնարհման աստիճանը, եթե նախ և առաջ չհասկանանք Նրա փառքը մինչ մարմին առնելը: Նա հասարակ մի մարդ չէր, ոչ էլ հրեշտակապետ կամ նույնիսկ կիսաստված, որ տառապեց և մահացավ Գողգոթայի վրա: Նա հենց այն Մեկն էր, Ում Եսայիան տեսել էր «բարձր և վերացած աթոռի վրա նստած, և Նրա քղանցքը լցրել էր [երկնային] տաճարը», այն Մեկն էր, Ով շրջապատված էր սերովբեներով, որոնք ծածկել էին իրենց երեսները և գոչում էին Նրան. «Սուրբ, Սուրբ, Սուրբ է Զորաց Տերը. ամբողջ երկիրը լի է Նրա փառքով» (Ես. 6.1-3, տե՛ս նաև Հովհ. 12.41):

Վեհ արարք է, երբ մի մարդ իր կյանքը տալիս է մյուսի համար: Սակայն այն, որ Աստծո Որդին՝ տիեզերքի Արարիչը և Պահպանողը, Իր կյանքը տվեց մեղավոր մարդու համար, անըմբռնելի է: Հռոմեացիս 5.7-8-ում Պողոս առաքյալը գրել է. «Վասնզի հազիվ թե մի արդարի համար մեկը մեռնի (բայց մի բարի մարդու համար իցե թե

մեկը համարձակվի մեռնել): Բայց Աստված հայտնեց Իր սերը դեպի մեզ, որ երբ մենք դեռ մեղավոր էինք, Քրիստոսը մեզ համար մեռավ»: Որքան ավելի ենք ինչ-որ բան հասկանում Որդու անվերջ ու հավիտենական փառքի մասին, այնքան ավելի ենք ընկալում Նրա խոնարհման մեծությունը, և ավելի մեծ է լինում մեր գնահատանքը Նրա նկատմամբ: Միայն այդ ժամանակ կկարողանանք հասկանալով երգել Չարլզ Ուեսլիի խոսքերը. «Զարմանալի՛ սեր: Ինչպե՞ս կարող էր պատահել, որ Դու, իմ Աստվա՛ծ, պիտի մահանայիր ինձ համար»[1]:

Քրիստոսի մարմնացումը

«Մարմնացում» բառը վերաբերում է Աստծո Որդու բեղմնավորմանը կույս Մարիամի արգանդում՝ Սուրբ Հոգու զորությամբ (Ղուկ. 1.35), և որպես Աստված-մարդ՝ Հիսուս Նազովրեցու ծնվելուն: Այս մարմնացման մեջ հավիտենական Որդին իսկական մարդ դարձավ՝ այդ բառի բուն իմաստով, և սակայն ամբողջապես մնաց Աստված: Ինչպես Պողոս առաքյալն է գրել. «Որովհետև Նրանում բնակված է Աստվածության ամեն լիությունը մարմնապես» (Կող. 2.9): Մարմնացումը միանշանակ Ավետարանի առանցքային ուսմունք է և փառքի ամենամեծ շտեմարաններից մեկը: Մի կողմից՝ Քրիստոսը պետք է լիներ մարդ: Մարդն էր, որ մեղք էր գործել, և մարդն էր, որ պետք է մահանար: Զոհի բնույթը պետք է լիներ այնպիսին, ինչպիսին գործված մեղքի բնույթն էր. «Վասնզի անկարելի է, որ նոխազների և ցուլերի արյունը մեղքեր վեր առնի» (Եբր. 10.4): Մյուս կողմից՝ Քրիստոսը պետք է լիներ Աստված: Հասարակ մարդը, հրեշտակը կամ նույնիսկ ինչ-որ կիսաստված բավական չէին լինի: Հավիտենական արժեք ունեցող զոհ և կատարյալ ներհատուկ արդարություն էր անհրաժեշտ՝ արժեք և արդարություն, որը միայն

1 Charles Wesley, “And Can It Be That I Should Gain,” 1738.

Աստված ունի: Ուստի Պողոսը վկայում է, որ Քրիստոսում Աստված եկեղեցին գնեց «Իր արյունով» (Գործք 20.28), և «Աստված էր Քրիստոսում, որ աշխարհը հաշտեցրեց Իր հետ» (Բ Կորնթ. 5.19): Հավիտենությունների հավիտենություն անհրաժեշտ կլինի խոսելու մարմնացման մեջ ամփոփված փառքերի մասին, սակայն չկա դրանից ավելի ազնիվ աշխատանք: Որքան ավելի ենք հասկանում, թե ինչ է նշանակում այն, որ Աստված մարդ դարձավ, և որ այդ մարդն Էմմանուելն է (Աստված մեզ հետ), այնքան ավելի մեծ է լինում մեր նվիրումը, ավելի ամբողջական և կայուն է լինում մեր հնազանդությունը, և ավելի հնչեղ են լինում մեր հռչակումներն ու երկրպագությունը:

Քրիստոսի կատարյալ հնազանդությունը

Շատ աստվածաբաններ Քրիստոսի կատարյալ հնազանդությունը համարում են Նրա ամենամեծ հրաշքը, մինչդեռ այն հաճախ անտեսվել է որպես Ավետարանի առանցքային ուսմունք: Քրիստոսի կատարյալ հնազանդությունն անհրաժեշտ էր ոչ միայն, որպեսզի Նա մահանար ամբարիշտների մեղքերի համար, այլև որպեսզի Նրա կատարյալ կյանքը վերագրվեր անհնազանդներին: Սաղմոս 15.1-ում սաղմոսերգուն հարցնում է. «Տեր, ո՞վ կկենա Քո Խորանում: Ո՞վ կբնակվի Քո սուրբ սարում»: Երկրորդ խոսքում տրվում է պատասխանը. «Ուղիղ գնացողը և արդարություն գործողը և իր սրտում ճշմարտություն խոսողը»: Կրկին՝ Սաղմոս 24.3-ում նույն հարցն է տրվում. «Ո՞վ վեր կգնա Տիրոջ սարը, և ո՞վ կկանգնի Նրա սրբության տեղում»: Չորրորդ խոսքում պատասխանը կրկին նույնն է՝ «Նա, որ սուրբ է ձեռքով և անարատ՝ սրտով. որ իր անձը անիրավության չի տալիս և երդում չի անում նենգությունով»: Այն բանի համար, որ Աստծո ժողովուրդը լիովին ընդունված լինի Նրա ներկայության մեջ, անհրաժեշտ է ավելին, քան ներումն է կամ մաքրության ծածկոցը: Մենք պետք է կատարյալ արդարություն ունենանք՝ կատարյալ

համապատասխանություն Նրա բնությանը և կամքին: Սակայն ինչպե՞ս հասնել դրան: Սուրբ Գիրքը վկայում է, որ «արդար չկա, մեկն էլ չկա» (Հռոմ. 3.10), և «դաշտանի շորի պես է մեր ամեն արդարությունը» (Ես. 64.6): Բարի լուրը ոչ միայն այն է, որ Քրիստոսն Իր կատարյալ կյանքը զոհեց՝ քավելու մեր մեղքերը, այլև այն, որ Նրա կատարյալ կյանքը վերագրվեց մեզ կամ համարվեց մերը այն վայրկյանից, երբ հավատացինք Նրան: Մենք, որ զուրկ կամ մերկացած էինք սեփական արդարությունից, այժմ հագանք Քրիստոսի կատարյալ արդարությունը: Ինչպես Պողոս առաքյալն է գրել. «Որովհետև Աստված նրան, որ մեղք չգիտեր, մեզ համար մեղք արեց, որ մենք Աստծո արդարությունը լինենք Նրանում» (Բ Կորնթ. 5.21), և կրկին՝ «[Քրիստոսը] Աստծուց մեզ համար եղավ իմաստություն և արդարություն և սրբություն և փրկություն» (Ա Կորնթ. 1.30): Նա է «...ՏԵՐԸ՝ ՄԵՐ ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆԸ» (Երեմ. 23.6):

Քրիստոսի մահը

Քրիստոսի մահը Ավետարանի առանցքային բոլոր տարրերից ամենաառանցքայինն է: Այդուհանդերձ, բավական չէ միայն հավատալ և քարոզել, որ Քրիստոսը մահացել է. մենք պետք է նաև հասկանանք և ընդունենք Նրա մահվան նպատակն ու նշանակությունը, ինչպես այդ մասին մեզ հայտնում է Սուրբ Գիրքը: Անհերքելի պատմական փաստ է այն, որ Հիսուս Նազովրեցին մահացել է Պոնտացի Պիղատոսի օրոք Երուսաղեմ քաղաքից դուրս: Այդուհանդերձ, մենք աստվածաշնչյան հավատքին հանգում ենք միայն այն ժամանակ, երբ ընդունում ենք, որ Նրա մահը փոխարինում էր ուրիշների մահվանը, և դրա նպատակը փրկագնումն էր: Հիսուսը չմահացավ որպես նահատակ և ոչ էլ մահացավ՝ պարզապես հաստատելու աստվածային սերը կամ օրինակ ծառայելու Իր աշակերտներին: Քրիստոսը մահացավ Իր ժողովրդի

համար, Իր ժողովրդի *փոխարեն* և որպես Իր ժողովրդի *փոխանորդ*: Գողգոթայի վրա Նա կրեց մեր մեղքերը, կրեց Աստծո՝ մեր դեմ ուղղված բարկությունը, հանդարտեցրեց Աստծո բարկությունը և հնարավոր դարձրեց այն, որ Աստված ներեր մեր մեղքերը՝ առանց ոտնահարելու Իր արդարությունը: Խաչի վրա Քրիստոսն անասելի ֆիզիկական չարչարանք կրեց: Եվ միայն Նրա մեջքի պատռվածքներով, գլխին դրված փշե պսակով, ձեռքերի և ոտքերի գամերով չէ, որ Նա գնեց մեր փրկությունը: Մենք չփրկվեցինք միայն մարդկանց կողմից Հիսուսին հասցված չարչարանքներով, այլ նրանով, ինչ Հայրն արեց Իր միածին Որդուն: Նա Հիսուսին վերագրեց կամ Հիսուսինը համարեց մեր մեղքը և Նրա հետ վարվեց որպես մեղավորի (Ես. 53.6, Բ Կորնթ. 5.21): Հայրը Քրիստոսից վեր առավ Իր բարեհաճ ներկայությունը (Մատթ. 27.46) և հարվածեց Նրան Իր աստվածային բարկությամբ, որը մեր բաժինն էր: Ինչպես Եսայիա մարգարեն է նկարագրել. «Բայց ՏԵՐԸ հաճեց Նրան զարկել՝ ցավեցնել. երբ որ Նրա հոգին մեղքի զոհն արեց» (Ես. 53.10): Քրիստոսի մահվան վերաբերյալ մարդկային կամ հրեշտակային որևէ այլ տեսության հավատալը կնշանակի հերքել Ավետարանը և ենթարկվել հավիտենական դատապարտության: Գաղատացիս 1.8-9-րդ խոսքերում Պողոսը շատ խիստ շեշտադրում է անում. «Բայց եթե մենք էլ կամ երկնքից մի հրեշտակ ավետարանի ձեզ նրանից ուրիշ, քան թե որ մենք ավետարանեցինք ձեզ, նզովված լինի: Ինչպես առաջ ասացինք, և հիմա դարձյալ ասում եմ, եթե մեկն ավետարանի ձեզ նրանից ուրիշ, քան որ դուք առաք, նզովված լինի»: Այդ իսկ պատճառով այս գրքի մեծ մասը նվիրված է Քրիստոսի մահվան թեմային և դրա բացատրությանը: Մենք երկու նպատակ ենք հետապնդում. առաջինը՝ որ հաստատ մնանք «սրբերին մի անգամ ավանդված հավատքի մեջ» (Հուդա 3), և երկ-

որոդը՝ որ Գողգոթայի մասին ամենաթույլ շշուկն անգամ վեր հանի մեր ամենախոր զգացմունքները և մղի մեզ Քրիստոսին ամենալուրջ և անկեղծ նվիրման:

Քրիստոսի հարությունը

Բավական չէ միայն հավատալ և քարոզել Քրիստոսի մահվան մասին: Մենք պետք է նաև հավատանք և քարոզենք այն, որ երրորդ օրը Նա մեռելներից հարություն է առել նույն այն ֆիզիկական մարմնով, որով մահացել էր (Հովհ. 20.27): Այս ճշմարտությունը միանշանակ առանցքային է Ավետարանի և քրիստոնեական հավատքի համար: Այն քննարկման ենթակա չէ: Եթե Քրիստոսը մարմնապես հարություն չի առել, ապա ամբողջ քրիստոնեությունը սուտ է: Պողոս առաքյալը գրել է. «Եվ եթե Քրիստոսը հարություն չի առել, ուրեմն ունայն է մեր քարոզությունը, և ունայն է ձեր հավատքն էլ... Եվ եթե Քրիստոս հարություն չի առել, ունայն է ձեր հավատքը, և դեռ ձեր մեղքերի մեջ եք» (Ա Կորնթ. 15.14, 17): Այս պատճառով է, որ Գործք առաքելոցի կենտրոնական թեման Քրիստոսի հարության հռչակումն է: Առաքելական դարաշրջանի մարդիկ շատ լավ գիտեին, որ Հիսուս Նազովրեցի անունով մի մարդ մահացել էր խաչի վրա Երուսաղեմի դարպասներից դուրս, սակայն Նրա մահվան ապացույցը՝ որպես Աստծո կատարած փրկագնման ամենամեծ գործ, Նրա հարության պատմական ճշգրտության մեջ է, որին վաղ քրիստոնյաները հավատում և հռչակում էին, ինչի պատճառով ենթարկվում էին ծաղրի և սպառնալիքների:

Համաձայն Սուրբ Գրքի՝ Քրիստոսի հարությունն Աստծո հրապարակային հայտարարությունն է այն մասին, որ Հիսուսն Իր Որդին է (Հռոմ. 1.4), որ մենք արդարացած ենք (Հռոմ. 4.25), մեր հավատքը վավեր է (Ա Կորնթ. 15.13-14), մեր ապագա հարությունը երաշխավորված է (Հովհ. 14.19), և ապացույցն այն բանի, որ Աստված բոլոր մարդկանց դատաստանի է բերելու (Գործք 17.31):

Սուրբ Գիրքը շեշտադրում է Քրիստոսի՝ մարմնապես հարություն առնելու փաստի առանցքային կարևորությունը: Դրանով հանդերձ՝ զարմանալի է, թե որքան հաճախ է այն մերժվել կամ «փոփոխվել» նույնիսկ նրանց կողմից, ովքեր իրենց քրիստոնյա են համարել: Այդուհանդերձ, եթե մենք ցանկանում ենք առաքելական Ավետարանի ճշմարտության մեջ մնալ, ապա պետք է հռչակենք Քրիստոսի մահը Գողգոթայում մեր փոխարեն և Նրա հարությունը մեռելներից մարմնապես: Սրանից որևէ բան պակասեցնել նշանակում է ոչ թե Ավետարանը փոփոխել, այլ ուղղակիորեն հերքել այն:

Քրիստոսի մեծարումը

Սուրբ Գիրքը սովորեցնում է, որ Քրիստոսը ոչ միայն մահացել, թաղվել և հարություն է առել, այլև հարությունից հետո քառասուներորդ օրը համբարձվել է երկինք և նստել Աստծո աջ կողմում: Եբրայեցիս թղթի հեղինակը գրել է. «Որ Նրա փառքի լույսը լինելով և Նրա էության նկարագիրը, որ Իր զորության խոսքով ամեն բան կրում է, մեր մեղքերի սրբությունն Իրենով անելուց հետո նստեց Աստծո մեծության աջ կողմը՝ բարձունքներում» (Եբր. 1.3): Պողոս առաքյալը գրել է. «Որ [Աստված] Քրիստոսում գործադրեց՝ Նրան մեռելների միջից հարուցանելով, և Իր աջ կողմը նստեցրեց երկնավորներում, ամեն իշխանությունից և պետությունից և զորությունից և տերությունից վեր և ամեն անունից վեր, որ անվանվում է, ոչ միայն այս աշխարհում, այլև այն հանդերձյալում» (Եփես. 1.20-21), և «Նրա համար էլ Աստված շատ բարձրացրեց Նրան, և Նրան մի անուն շնորհեց, որ ամեն անունից ավելի բարձր է:

Որ Հիսուսի անունով կրնկվի ամեն ծունկ երկնավորների և երկրավորների և երկրի տակ լինողների, և ամեն լեզու դավանի, թե Հիսուս Քրիստոսը Տեր է Հոր Աստծո փառքի համար» (Փիլիպպ. 2.9-11):

Մեսիայի մասին հինկտակարանյան մարգարեությունները ևս համահունչ են առաքյալների պնդումների հետ: Սաղմոսերգուի միջոցով Աստված հռչակել է. «Ես օծեցի Իմ թագավորին Իմ սուրբ Սիոն սարի վրա» (Սաղմ. 2.6): Եսայիայի միջոցով ևս ասել է. «Նրա համար Նրան բաժին պիտի տամ շատերի հետ, և Նա հզորների հետ ավար պիտի բաժանի» (Ես. 53.12): Դանիել մարգարեն էլ ավելի պարզ է խոսել. «Եվ Նրան տրվեց իշխանություն և պատիվ ու թագավորություն, որ բոլոր ժողովուրդները, ազգերը և լեզուները Նրան ծառայեն. Նրա իշխանությունը հավիտենական իշխանություն է, որ չի անցնի, և Նրա թագավորությունը չի քանդվի» (Դան. 7.14):

Աստծո Որդին, Ով մարդու նմանություն էր առել և հնազանդվել ընդհուպ խաչի մահ (Փիլիպպ. 2.7-8), այժմ բարձրացվել էր որպես ինքնիշխան Աստված, բոլորի Դատավոր, Իր ժողովրդի Փրկիչ և Միջնորդ: Առաքյալների քարոզչության մեջ այս մեծ ճշմարտությունը կարևոր տեղ էր զբաղեցնում Քրիստոսի մահվան և հարության մասին ուղերձների հետ և պետք է հավասարապես կարևոր տեղ զբաղեցնի նաև մեր քարոզներում: Աստված Իր Թագավորին նստեցրել է Սիոնի վրա: Նա ազգերը Նրան է տվել որպես ժառանգություն և երկրի ծայրերը հանձնել է Նրա տիրապետությանը: Ավելին՝ Նա Նրան բացարձակ ինքնիշխանություն է տվել բոլորի վրա (Սաղմ. 2.6-9): Այդ իսկ պատճառով Ավետարանի ուղերձը կրում է ոչ միայն փրկության անվճար առաջարկը՝ ուղղված բոլորին, այլև լուրջ զգուշացում երկրի՝ անգամ ամենամեծ թագավորներին և ազգերին. «Եվ հիմա, ո՛վ թագավորներ, խոհեմացե՛ք, և խրատվե՛ք, ո՛վ երկրի դատավորներ: Վախո՛վ ծառայեք Տիրոջը և դողալով ցնծացե՛ք: Որդո՛ւն համբուրեք, որ չբարկանա, և դուք չկորչեք ճանապարհում, որովհետև Նրա բարկությունը շուտով կվառվի. երանի այն ամենին որ Նրան են հուսացած» (Սաղմ. 2.10-12):

Քրիստոսի վերադարձը

Ըստ Սուրբ Գրքի՝ մարդկության պատմությունը գծային է՝ ամրագրված և նպատակային սկզբով և ավարտով: Արարչության առաջին օրվանից Աստված ամեն մարդու և իրադարձություն ուղղել է որոշակի բարձրակետի կամ գագաթնակետի, որը մեր Տեր և Փրկիչ Հիսուս Քրիստոսի երկրորդ գալուստն է, աշխարհի դատաստանը և նոր երկրի ու երկնքի հաստատումը: Ավետարանի հռչակման մեջ այս մեծ ճշմարտությանը կարևորություն տալը երկու նպատակ է հետապնդում. առաջինը՝ քաջալերել հավատացյալին շարունակել հավատալ և ապրել գալիք շնորհքի և փառքի հույսով, որը մեծապես գերազանցելու է ընկալման մեր ներկա կարողությունները. «Ինչ որ աչք չտեսավ, և ականջ չլսեց, և մարդու սիրտ չընկավ, այն պատրաստեց Աստված Իրեն սիրողների համար» (Ա Կորնթ. 2.9): Երկրորդը՝ այն անհավատին զգուշացում տալու նպատակ է հետապնդում: Մենք մշտապես պետք է հիշենք, որ Ավետարանի ճիշտ հռչակումը ներառում է բոլոր մարդկանց ուղղված կանչ՝ «պատրաստվի՛ր քո Աստծուն դիմավորելու» (Ամովս 4.12): Պողոս առաքյալը Օլիմպոս լեռան բոլոր փիլիսոփաներին հայտարարել է. «[Աստված] Մեկ օր հաստատեց, որ նրանում աշխարհը արդարությամբ պիտի դատի այն Մարդու ձեռով, որ սահմանեց Նրանով ամենին հավատք տալ, Որին մեռելներից հարություն տվեց» (Գործք 17.31):

Երկրորդ գալուստը հակադրվող ծայրահեղություններով լի ուսմունք է: Ոմանց համար այն կլինի փրկության օր՝ «անպատմելի ուրախություն և փառավոր խնդություն» (Ա Պետր. 1.8): Ուրիշների համար այն կլինի կործանման օր, երբ կփորձեն թաքնվել քարանձավներում, լեռներում, օգնության կկանչեն սարերին ու ժայռերին. «Եվ ասում էին սարերին և ժայռերին. «Վա՛յր ընկեք մեզ վրա և ծածկե՛ք մեզ աթոռի վրա Նստողի երեսից և Գառի բարկությունից, որ Նրա բարկության մեծ օրը եկել է, և ո՞վ կա-

րող է կանգնել» (Հայտն. 6.16-17): Այս պատճառով է, որ Ավետարանի պատգամաբերը ևս տարամտություններով լի է. նրանց համար, ովքեր հավատում են, նա «կյանքի հոտ է՝ դեպի կյանք», մինչդեռ նրանց համար, ովքեր հրաժարվում են հավատալուց, նա «մահվան հոտ է՝ դեպի մահ»: Այս լուրջ իրականությունն էր, որ Պողոս առաքյալին ստիպում էր գոչել. «Այս բաների համար ո՞վ բավական կլինի» (Բ Կորնթ. 2.16):

Իմանալով, որ այդքան բան կա կշեռքին դրված, և միայն Ավետարանն ունի փրկելու զորություն (Հռոմ. 1.16)՝ արդյոք չպե՞տք է «սրանք մտածենք, սրանցում կենանք, որ [մեր] առաջադիմությունը ամենին հայտնի լինի» (Ա Տիմ. 4.15): Արդյոք չպե՞տք է «ջանք անենք, որ [մեր] անձերը ընտիր կանգնեցնենք Աստծո առաջ իբր մի մշակ առանց ամոթի, որ ճշմարտության խոսքն ուղիղ մատակարարենք» (Բ Տիմ. 2.15):

Կանչ դեպի ապաշխարություն և հավատք

Ավետարանի ուղերձն ամբողջական չի լինի, եթե բոլոր մարդկանց ամենուր կոչ չարվի արձագանքելու՝ իրենց մեղքերից ապաշխարելով և հավատալով կամ վստահելով բացառապես Հիսուս Քրիստոսի Անձին և կատարած գործին: Մարկոսի Ավետարանում պատմվում է Հիսուսի ծառայության ամենաառաջին պատմությունը: Մարկոսը գրում է. «...Հիսուսը եկավ Գալիլեա, քարոզում էր Աստծո թագավորության ավետարանը և ասում, թե ժամանակը կատարվել է, և Աստծո թագավորությունը մոտեցել է. ապաշխարե՛ք և հավատացե՛ք ավետարանին» (Մարկ. 1.14-15): Պողոսը հայտարարում է Աթենքի փիլիսոփաներին. «Բայց Աստված, տգիտության ժամանակներն անտես անելով, հիմա մարդկանց պատվիրում է ամենին ամեն տեղ ապաշխարել» (Գործք 17.30): Պողոսը հաստատում է նույնը Եփեսոսի եկեղեցուն. «Որ ինչպես հետ չպահեցի

ոչ մի օգտակար բան, որ չպատմեմ և սովորեցնեմ ձեզ՝ թե՛ հրապարակներում և թե՛ տան մեջ: Հրեաներին և հույներին վկայություն տալով՝ ապաշխարել դեպի Աստված և մեր Տեր Հիսուս Քրիստոսին հավատալ» (Գործք 20.20-21): Ավետարանի այս կրկնակի կանչը հաստատված է եկեղեցու պատմության ամենանշանավոր դավանանքներում: Վեսթմինսթերյան դավանանքում ասվում է. «Ապաշխարությունը դեպի կյանք ավետարանական շնորհ է: Ուստի Ավետարանի ամեն ծառայող, ինչպես նաև Հիսուս Քրիստոսին ամեն հավատացող պետք է քարոզի այդ ուսմունքը»[2]: Նյու Հեմշայրի հավատքի դավանանքում նույնպես ասվում է. «Մենք հավատում ենք, որ ապաշխարությունը և հավատքը սուրբ պարտականություններ են, ինչպես նաև անբաժանելի պարտականություններ»[3]:

Ավետարանի քարոզչությունն ավելին է, քան պարզապես տեղեկության փոխանցում: Այն լուրջ և հրատապ կանչ է, որպեսզի մարդիկ, Քրիստոսին հավատալով և ապաշխարելով, փրկվեն հավիտենական կործանումից: Ճշմարտությունը լավագույնս պատկերված է Պողոս առաքյալի քարոզչության մեջ, ով հետևյալ խոսքերն է ուղղել Կորնթոսի եկեղեցուն. «Արդ Քրիստոսի կողմից պատգամավորություն ենք անում, իբրև թե Աստված է հորդորում մեզանով. աղաչում ենք Քրիստոսի տեղ հաշտվեք Աստծո հետ» (Բ Կորնթ. 5.20):

---

2 The Westminster Confession of Faith (Glasgow, Scotland: Free Presbyterian Publications, 1995), 15.1.

3 John Brown, The New Hampshire Confession of Faith (1833), VIII, in William L. Lumpkin, *Baptist Confessions of Faith* (Valley Forge, Pa.: Judson Press, 1969), 364.

4

ՆՈՒՅՆ ԱՎԵՏԱՐԱՆԸ՝ ԴԱՐԵԴԱՐ

Եկեղեցու պատմության ամբողջ ընթացքում անկեղծ քրիստոնյաները, քարոզիչները և գիտնականները ձգտել են գտնելու և հակիրճ ու հասկանալի պնդումներով ամփոփ ներկայացնելու քրիստոնեական հավատքի առանցքային տարրերը: Այդ դավանանքներից շատերում Ավետարանը ներկայացված է զարմանալի հստակությամբ՝ տալով մեզ այն, ինչը կարելի է չափորոշիչ համարել պատմական քրիստոնեական մեկնությունների համար: Բայցևայնպես, այդ դավանանքները Աստծուց ներշնչված, անսխալական և անբասիր չեն, ու դրանք իրենց հեղինակությամբ չպետք է դասվեն Սուրբ Գրքից բարձր կամ դրան հավասար: Դրանք գրվել են հրահանգավորելու և եկեղեցին հերձվածություններից պաշտպանելու նպատակով: Հետևաբար օգտակար են քրիստոնյաների բոլոր սերունդների համար, քանի որ ներկայացնում են այն, ինչ ուղղափառ հավատացյալները հաստատել են դարեր շարունակ: Այդ դավանանքներից մեջբերումներ անելու նպատակը դրանց հեղինակներին օժանդակելը չէ և ոչ էլ դրանց բովանդակության ամեն բաղկացուցիչը հաստատելը: Նպատակը պարզապես երկու կարևոր իրականություն ցույց տալն է. առաջինը՝ այն, որ Ավետարանն է պատմական քրիստոնեության ուսմունքների կենտրոնում, և երկրորդը՝ այն, որ Ավետարանի հիմնական դրույթները հաստատվել են ճշմարիտ հավատացյալների կողմից եկեղեցու պատմության ամբողջ ընթացքում:

Հերմենևտիկայի կարևոր սկզբունք է այն, որ մենք պետք է Սուրբ Գիրքն ուսումնասիրենք եկեղեցու համատեքստում: Առաքյալների դարաշրջանից մինչև մեր օրերն ապրել են հավատացյալներ, որոնք ակնածանքով են վերաբերվել Սուրբ Գրքին, սիրել և ուսումնասիրել են այն: Նրանք ներկայացնում են գրեթե երկու հազարամյակի մեկնություններ, որոնք ոչ միայն ծառայում են հրահանգավորման համար, այլև երկրորդական չափորոշիչ են, որոնց հետ մենք կարող ենք համեմատել մեր մասնավոր կամ անձնական մեկնությունները: Եթե պատմության ընթացքում Աստվածաշնչին հավատացող բոլոր քրիստոնյաները համաձայնել են Աստվածաշնչի որոշակի մեկնությանը, իսկ մեր անձնական մեկնությունը կամ մեր սերնդի մեկնությունը դրանից տարբերվում է, ապա դա՝ որպես կարմիր լույս, պետք է զգուշացնի մեզ, որ մենք գուցե սխալվում ենք և պետք է վերանայենք մեր կարծիքը:

Սուրբ Գիրքն ուսումնասիրելիս միշտ պետք է հիշենք երեք կարևոր սկզբունքներ: Առաջինը՝ միայն Աստվածաշունչն է ներշնչված Աստծուց՝ անսխալական և անբասիր. ոչինչ չի կարելի վեր դասել Աստվածաշնչից կամ հավասար համարել դրան: Բոլոր դավանանքներն իրենց հեղինակությամբ պետք է համարվեն երկրորդական Սուրբ Գրքից հետո: Սա է պատճառը, որ դրանք հաճախ անվանվում են «ենթակա» կամ «երկրորդական» չափորոշիչներ: Երկրորդը՝ իմաստությունը չի ծնվել մեզնից և չի մահանալու մեզ հետ: Չնայած որ Աստվածաշունչը ներշնչված է Աստծուց, նույնը չի վերաբերում մեր անձնական մեկնություններին: Մեծամտության վառ նշան է մեզ առանձնացնելը եկեղեցու երկու հազար տարվա պատմությունից և Աստվածաշունչը մեկնելը սեփական վակուումի մեջ: Երրորդը՝ եկեղեցու պատմության կարևոր աշխատությունները (հատկապես՝ ռեֆորմիստների, պուրիտանների և վաղ ավետարանականների) ուսումնասիրած ցանկացած ոք ոչ միայն հասկանում է դրանց

մեծ արժեքը, այլև զարմանում է դրանցում պարփակված գիտության և բարեպաշտության խորության, լայնության և բարձրության վրա՝ համեմատած ներկա սերնդի հետ:

Այս գրքում ընթերցողի համար որպես օգնություն (և հուսանք՝ օրհնություն) կծառայեն եկեղեցու երկար պատմության ընթացքում ապրած մարդկանց և ժողովների գրած մեկնաբանությունները և տրակտատները: Բայցևայնպես, չպետք է մոռանանք, որ մեզ համար առաջնային կարևորություն ունի հենց Սուրբ Գրքի պարզ շարադրանքը: Դա է բարձրագույն հեղինակությունը և չափորոշիչը հավատքին, ուսմունքին և դրանց կիրառությանն առնչվող բոլոր հարցերում: Այս ճշմարտության հետ լիովին համահունչ են ամենանշանավոր դավանանքները: 1689 թվականի Լոնդոնի մկրտական դավանանքի առաջին գլուխը սկսվում և ավարտվում է այս խոսքերով.

> Սուրբ Գիրքն է փրկարար ամբողջ գիտելիքի, հավատքի և հնազանդության միակ բավարար, հաստատ և անսխալական կանոնը... Սուրբ Գիրքն է գերագույն դատավորը, որով որոշվելու են բոլոր հակասությունները, քննվելու են ժողովների բոլոր հրամանագրերը, հին գրողների կարծիքները, մարդկային ուսմունքները և անհատները: Միայն Սուրբ Գրքով կայացված դատավճռի մեջ կարող ենք հանգիստ առնել: Չկա Հոգու կողմից թելադրված Սուրբ Գրքից զատ մեկ ուրիշը, որով տրվում է Խոսքը, և հաստատվում է մեր հավատքը[1]:

Առաքյալների դավանանքը

Առաքյալների դավանանքը ամենահինն է պահպանված քրիստոնեական դավանանքներից: Դրա բնօրինակ

1 The 1689 London Baptist Confession of Faith, 1.1, 10, in *The Baptist Confes- sion of Faith and the Baptist Catechism* (Vestavia Hills, Ala.: Solid Ground Christian Books; and Carlisle, Pa.: Reformed Baptist Publications, 2010), 1, 5.

ձևը և բովանդակությունը ամենայն հավանականությամբ թվագրվում են 2-րդ դարի սկզբին (մոտ Ք.հ. 120 թ.): Չնայած որ չկան պատմական ապացույցներ՝ ենթադրելու, որ այն գրվել կամ խմբագրվել է տասներկու առաքյալների կողմից, այդ աշխատությունը փոխանցում է առաքելական հավատքի հիմնական համոզմունքները, հատկապես Ավետարանի վերաբերյալ: Ամենայն հավանականությամբ այն օգտագործվել է նորադարձներին հրահանգավորելու և այդ ժամանակ տարածված հերձվածություններից (մարկիոնիզմ, գնոստիցիզիմ, դոկետիզմ) պաշտպանելու համար: Առաքյալների դավանանքի թողած ազդեցության մասին Ջոել Բիքը գրում է. «Ռեֆորմիստները հաճախ էին ներառում Առաքյալների դավանանքն իրենց երկրպագության և պատարագների մեջ: Ավելի քան քրիստոնեական որևէ այլ դավանանք, այն արդարացիորեն կարող է կոչվել հավատքի տիեզերական խորհրդանիշ, քանի որ մինչ օրս ամենալայն կիրառվող դավանանքն է արևմտյան կամ լատինական եկեղեցում»[2]:

Առաքյալների դավանանքի հետևյալ հատվածում խոսվում է Ավետարանի մասին: Այն հաստատում է հավատքը եռամիասնական Աստծո հանդեպ, Քրիստոսի աստվածությունը և մարմնացումը, Քրիստոսի մահը, հարությունը և համբարձումը, ինչպես նաև Քրիստոսի տիեզերական դատաստանը: Դավանանքում ասվում է.

«Ես հավատում եմ Ամենակարող Հայր Աստծուն՝
Երկնքի և երկրի Արարչին.
Հավատում եմ Հիսուս Քրիստոսին՝ Նրա Միածին
Որդուն՝ մեր Տիրոջը,
Ով բեղմնավորվեց Սուրբ Հոգուց,
Ծնվեց կույս Մարիամից,
Չարչարանքներ կրեց Պոնտացի Պիղատոսի օրոք,
Խաչվեց, մահացավ և թաղվեց:

2 Joel Beeke, *The Three Forms of Unity* (Vestavia Hills, Ala.: Solid Ground Christian Books, 2012), 4.

Նա իջավ դժոխք,
Երրորդ օրը հարություն առավ մեռելներից,
Համբարձվեց երկինք
Եվ նստած է Ամենակարող Հայր Աստծո աջ կողմում,
Որտեղից էլ գալու է դատելու կենդանիներին և մեռածներին...»:

Ինչպես նշված է վերևում, այս դավանանքներից մեջբերումներ անելու իմ նպատակը պարզապես ցույց տալն է, որ Ավետարանի սկզբունքային դրույթները հաստատվել են ճշմարիտ հավատացյալների կողմից քրիստոնեության երկար պատմության ամբողջ ընթացքում:

Նիկիական հավատքի դավանանք

Նիկիական դավանանքը գրվել է՝ պաշտպանելու ուղղափառ հավատքը չորրորդ և հինգերորդ դարերի մեծ հերձվածություններից, հատկապես արիոսականությունից, որը մերժում էր Երրորդությունը և Քրիստոսի Աստվածությունը: Այս դավանանքը սկիզբ է առել դեռևս Ք.հ. 325 թ. Նիկեայի ժողովի արդյունքում, որը գումարվել էր՝ հաստատելու քրիստոնեական եկեղեցու առջև ծառացած ամենախոր հարցի պատասխանը՝ «Ո՞վ է Հիսուս Քրիստոսը»: Դավանանքը էապես վերանայվել է Ք.հ. 381 թվականին Կոստանդնուպոլսում և ընդունվել է որպես քրիստոնեական հավատքի վերջնական պնդում Ք.հ. 405 թվականին Քաղկեդոնի ժողովում:

Նիկիական դավանանքի հետևյալ հատվածում ներկայացված է Ավետարանի բովանդակությունը: Այն ավելի մանրամասն է, քան Առաքյալների դավանանքը, սակայն հաստատում է միևնույն վերոնշյալ դրույթները.

«Ես հավատում եմ մեկ Աստծո՝ Ամենակարող Հորը՝
Երկնքի և երկրի, ամեն տեսանելի և անտեսանելի
բաների Արարչին:

Հավատում եմ մեկ Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսին՝
Աստծո միածին Որդուն,
Ով ծնվել է Հորից մինչև ամենի ստեղծումը.
Աստվածների Աստծուն, Լույսերի Լույսին, ամենա-
Աստծուն,
Ումով արարվել է ամեն բան:
Նա մեր՝ մարդկանցս փրկության համար
Երկնքից իջել է ցած
Եվ Սուրբ Հոգով մարմին առել կույս Մարիամից ու
մարդացել,
Նաև մեզ համար խաչվել է Պոնտացի Պիղատոսի
օրոք և երրորդ օրը հարություն առել՝ ըստ Սուրբ
Գրքի, համբարձվել է Երկինք և նստել Հոր
աջ կողմում,
Նա նորից գալու է փառքով՝ դատելու կենդանիներին
և մեռածներին.
Նրա թագավորությանը վերջ չի լինելու»:

Բելգիական դավանանք

Բելգիական հավատքի դավանանքը ռեֆորմացված հավատքի աշխարհի ամենահին դավանանքներից է և հայտնի է իր հստակությամբ, խորությամբ ու գեղեցկությամբ: Այն գրվել է 16-րդ դարում Գվիդո դե Բրեսի (1522-1567 թթ.) և Նիդերլանդներում Ռեֆորմացիայի համախոհ հովիվների կողմից, որոնք ծանր հալածանքների էին ենթարկվում Իսպանիայի թագավոր Ֆիլիպ Երկրորդի և Հռոմի կաթոլիկ եկեղեցու կողմից:

1562 թվականին Բելգիական դավանանքն ընդունվել է որպես ռեֆորմացված եկեղեցիների ուսմունքային չափորոշիչ. այն վերանայվել է Անտվերպենի Սինոդի կողմից 1566-ին և Դորտի Սինոդի կողմից 1618-1619

թվականներին: Դավանանքի հետևյալ հատվածը ներկայացնում է Ավետարանի բովանդակությունը: Ընթերցողը պետք է հաշվի առնի, որ այն ներառում է Առաքյալների և Նիկիական դավանանքներում ներառված բոլոր ուսմունքները, սակայն առավել մշակված ձևաչափ ունի:

ՀՈԴՎԱԾ 18. Ուստի մենք դավանում ենք, որ Աստված, Իր կողմից որոշված ժամանակին Իր Միածին Որդուն Երկիր ուղարկելով, իրականացրել է այն խոստումը, որը տվել էր մեր հայրերին Իր սուրբ մարգարեների շուրթերով[1]: «Նա ծառայի կերպարանք առավ և մարդկանց նման եղավ»[2]՝ իսկապես առնելով իրական մարդկային բնությունը՝ իր բոլոր տկարություններով՝ բացառությամբ մեղքի[3], բեղմնավորվեց օրհնյալ կույս Մարիամի արգանդում՝ Սուրբ Հոգու զորությամբ՝ առանց մարդկային միջամտության[4]: Նա ոչ միայն մարդկային մարմին առավ, այլև իրական մարդկային հոգի[5], որպեսզի իսկական մարդ լիներ: Քանի որ մարդկային հոգին կորսված էր՝ այնպես, ինչպես մարդկային մարմինը, Նա պետք է երկուսն էլ առներ, որպեսզի երկուսն էլ փրկեր…

1. Ես. 11.1, Ղուկ. 1.55, Ծննդ. 26.4, Բ Թագ. 7.12-16, Սաղմ. 132.11, Գործք 13.23
2. Ա Տիմ. 2.5, 3.16, Փիլիպպ. 2.7
3. Եբր. 2.14-15, 4.15
4. Ղուկ. 1.31, 34-35
5. Մատթ. 26.38, Հովհ. 12.27

ՀՈԴՎԱԾ 20. Մենք հավատում ենք, որ Աստված, Ով կատարելապես ողորմած և արդար է, ուղարկեց Իր Որդուն՝ առնելու մարդկային այն բնությունը, որով անհնազանդություն էր գործվել, որպեսզի նույն այդ բնությունով էլ կրեր մեղքի պատիժը՝ ամենադառը չարչարանքներով և մահով[1] և բավարարում ստանար աստվածային արդարությունը: Հետևաբար Աստված մեր անօրինությունները դրեց Նրա վրա[2] և Իր արդարությունը դրսևորեց Իր Որդու դեմ, իսկ մեզ վրա, որ մեղավոր էինք և դատապարտման արժանի,

թափեց Նրան հասանելիք բարությունը և ողորմությունը՝ Իր անխառն և կատարյալ սիրուց դրդված՝ Իր Որդուն մահվան մատնելով մեր փոխարեն և մեռելներից հարություն տալով՝ մեզ արդարացնելու համար[3], որպեսզի Նրանով լինենք անմահ և ունենանք հավիտենական կյանք:

1. Եբր. 2.14, Հռոմ. 8.3, 32-33
2. Ես. 53.6, Հովհ. 1.29, Ա Հովհ. 4.9
3. Հռոմ. 4.25

ՀՈԴՎԱԾ 21. Մենք հավատում ենք, որ Հիսուս Քրիստոսը երդումով հաստատված հավիտենական Քահանայապետն է՝ Մելքիսեդեկի կարգի պես[1], և որ Նա մեր փոխարեն Իրեն ներկայացրեց Հորը՝ հանդարտեցնելու Նրա բարկությունը՝ ամբողջապես բավարարելով այն[2]: Հավատում ենք, որ Նա զոհաբերեց Իրեն փայտե խաչի վրա՝ թափելով Իր թանկ արյունը՝ մաքրելու մեր մեղքերը, ինչպես մարգարեներն էին կանխավ ասել: Գրված է. «Բայց Նա մեր մեղքերի համար վիրավորվեց և մեր անօրինությունների համար հարվածվեց, մեր խաղաղության պատիժը Նրա վրա եղավ, և Նրա վերքերով մենք բժշկվեցինք: Նա տարվեց ինչպես մորթվելու ոչխար և հանցավորների հետ հաշտվեց»[3]: Նա դատապարտվեց Պոնտացի Պիղատոսի կողմից որպես չարագործ, չնայած որ նույն Պիղատոսը սկզբում Նրան անմեղ էր ճանաչել[4]: Այդպիսով, Նա «ինչ որ չէր հափշտակել, վճարեց»[5], և «Արդարն անարդարների համար չարչարվեց»[6]՝ թե՛ մարմնով և թե՛ հոգով զգալով այն սարսափելի պատիժը, որը մեր մեղքերի գինն էր՝ այնպես, որ «Նրա քրտինքը, ինչպես արյունի կաթիլներ, թափվում էին երկրի վրա»[7]: Նա կանչեց՝ «Իմ Աստվա՛ծ, Իմ Աստվա՛ծ, ինչո՞ւ թողեցիր Ինձ», ու այս բոլոր չարչարանքները կրեց մեր մեղքերի թողության համար[8]: Ուստի մենք Պողոս առաքյալի հետ իրավացիորեն ասում ենք՝ «միտք չէի դրած մի ուրիշ բան գիտենալ... բայց միայն Հիսուս Քրիստոսին և այն էլ խաչվածին»[9], «ամեն բաներն էլ վնաս եմ համա-

րում իմ Տեր Հիսուս Քրիստոսի գերազանց գիտության համար»[10], Ում վերքերով մենք գտել ենք ամեն մխիթարություն: Կարիք չկա Աստծո հետ հաշտվելու ուրիշ միջոցներ փնտրելու կամ հայտնագործելու՝ բացի այն միակ զոհից, որը մեկ անգամ արվեց, և որով հավատացյալները հավիտենապես կատարյալ դարձան[11]:

1. Սաղմ. 110.4, Եբր. 5.10
2. Կող. 1.14, Հռոմ. 5.8-9, Կող. 2.14, Եբր. 2.17, 9.14, Հռոմ. 3.24, 8.2, Հովի. 15.3, Գործք 2.24, 13.28, Հովի. 3.16, Ա Տիմ. 2.6
3. Ես. 53.5,7,12
4. Ղուկ. 23.22,24, Գործք 13.28, Սաղմ. 22.16, Հովի. 18.38, Սաղմ. 69.5, Ա Պետր. 3.18
5. Սաղմ. 69.4
6. Ա Պետր. 3.18
7. Ղուկ. 22.44
8. Սաղմ. 22.2, Մատթ. 27.46
9. Ա Կորնթ. 2.2
10. Փիլիպպ. 3.8
11. Եբր. 9.25-26, 10.14

Վեսթմինսթերյան և 1689 թվականի Լոնդոնի Մկրտական դավանանքները

1643 թվականին Անգլիական պառլամենտը Լոնդոնի Վեսթմինսթերյան աբբայությունում հավաքեց «ուսյալ, բարեպաշտ և խելամիտ» աստվածաբանների և խորհրդարանականների՝ վերակազմավորելու Անգլիայի եկեղեցու ուսմունքը, սովորությունները և երկրպագության կարգը: 1646 թվականին այդ հավաքույթների ընթացքում խմբագրվեց և հաստատվեց Վեսթմինսթերյան հավատքի դավանանքը: Այն հրատարակվեց ավելի ուշ՝ 1647-ին: Նույն տարում այն ընդունվեց որպես Շոտլանդիայի եկեղեցու երկրորդ չափորոշիչ (այն է՝ չափորոշիչ, որը ենթակա է Սուրբ Գրքին): Այժմ այն աշխարհի պահպանողական Պրեսբիտերական բոլոր եկեղեցիների նշանավոր դավանանքն է:

1689 թվականի Լոնդոնի Մկրտական դավանանքը

Վեսթմինսթերյան հավատքի դավանանքի ադապտացումն է՝ կատարված Անգլիայի մասնավոր մկրտականների կողմից: Փոփոխություններից մի քանիսն արվել են հենց խմբագիրների կողմից, մինչդեռ մյուսները վերցվել են 1644-ի Առաջին լոնդոնյան մկրտական դավանանքից և Սավոյայի հռչակագրից, որը հրատարակվել էր Կոնգրեգացիոնալիստների եկեղեցիներում 1658 թվականին: 1689-ի դավանանքի նպատակն էր ցույց տալ քրիստոնեական հավատքի միասնականությունը և շարունակականությունը Անգլիայի մասնավոր մկրտականների և ռեֆորմիստների միջև, ինչպես նաև ամբողջ աշխարհում:

Ավետարանի բնույթին նվիրված հետևյալ հոդվածներում Վեսթմինսթերյան և 1689 թվականի Լոնդոնի մկրտական դավանանքները գրեթե նույնն են:

1. Աստված Իր հավիտենական նպատակի համար հաճո համարեց ընտրել և կարգել Տեր Հիսուսին՝ Իր միածին Որդուն, Իրենց միջև կնքված Ուխտի համաձայն[1], լինելու Միջնորդը Աստծո և մարդու միջև, Մարգարեն[2], Քահանան[3] և Թագավորը[4], Իր Եկեղեցու Գլուխը և Փրկիչը[5], ամենի Ժառանգորդը[6] և աշխարհի Դատավորը[7], Ում Նա հավիտենապես մի ժողովուրդ տվեց, որ լինի Նրա սերմը[8] և ճիշտ ժամանակին Նրանով լինի փրկագնված, կանչված, արդարացված, սրբացված և փառավորված[9]:

1. Ես. 42.1, Ա Պետր. 1.19-20, Ա Տիմ. 2.5
2. Գործք 3.22
3. Եբր. 5.5-6
4. Սաղմ. 2.6, Ղուկ. 1.33
5. Եփես. 5.23
6. Եբր. 1.2
7. Գործք 17.31
8. Հովհ. 17.6, Սաղմ. 22.30, Ես. 53.10
9. Ա Տիմ. 2.6, Ես. 55.4-5, Ա Կորնթ.1.30

2. Աստծո Որդին՝ Սուրբ Երրորդության երկրորդը Անձը, լինելով իրական և հավիտենական Աստված, Հոր փառքի պայծառությունը՝ Նրանից ու Նրան հավասար, Ով ստեղծեց աշխարհը, Ով պահում և կառավարում է Իր ստեղծած բոլոր բաները, երբ ժամանակը լրացավ, մարդու բնությունն առավ[10]՝ դրա բոլոր հիմնական հատկանիշներով և դրան հատուկ տկարություններով, սակայն առանց մեղքի[11]. Նա Սուրբ Հոգու զորությամբ բեղմնավորվեց կույս Մարիամի արգանդում, երբ Սուրբ Հոգին եկավ Նրա վրա, և Բարձրյալի զորությունը ծածկեց Նրան. ուստի Նա ծնվեց Հուդայի ցեղից սերած կնոջից՝ Աբրահամի և Դավթի Սերմից՝ համաձայն Սուրբ Գրքի[12]: Եվ ուրեմն, երկու ամբողջական, կատարյալ և առանձին բնություններ միացան մեկ Անձի մեջ՝ առանց փոխակերպման, միախառնման կամ շփոթության[13]: Անձ, Ով իրական Աստված է և իրական մարդ, սակայն մեկ Քրիստոս՝ միակ Միջնորդը Աստծո և մարդու միջև[14]:

10. Հովհ. 1.1, 14, Ա Հովհ. 5.20, Փիլիպպ. 2.6, Գաղ. 4.4
11. Եբր. 2.14-17
12. Ղուկ. 1.27, 31, 35, Գաղ. 4.4
13. Ղուկ. 1.35, Կող. 2.9, Հռոմ. 9.5, Ա Պետր. 3.18, Ա Տիմ. 3.16
14. Հռոմ. 1.3-4, Ա Տիմ. 2.5

3. Տեր Հիսուսը՝ աստվածայինին միացած Իր մարդկային բնությամբ, Որդու Անձի մեջ, սրբացված էր և Սուրբ Հոգով օծված՝ առանց չափի[15], ունենալով Իր Անձում իմաստության և գիտության բոլոր գանձերը[16], Ում մեջ Հայրը հաճեց ամեն լիություն բնակեցնել[17]՝ այնպես, որ լինելով սուրբ, անբասիր, անարատ, շնորհքով և ճշմարտությամբ լիքը[18]՝ Նա ամբողջապես պատրաստ էր կատարելու Միջնորդի և Երաշխավորի[19] ծառայությունը: Եվ այդ ծառայությունը Ինքը հանձն չառավ, այլ կանչվեց Հոր կողմից[20], Ով ամբողջ զորությունն ու

դատաստանը Նրա ձեռքերի մեջ դրեց և պատվիրեց նրան նույնն անել[21]:

15. Սաղմ. 45.7, Հովհ. 3.34
16. Կող. 2.3
17. Կող. 1.19
18. Եբր. 7.26, Հովհ. 1.14
19. Գործք 10.38, Եբր. 12.24, 7.22
20. Եբր. 5.4-5
21. Հովհ.5.22, 27, Մատթ. 28.18, Գործք 2.36

4. Այս ծառայությամբ, որը Տեր Հիսուսը պատրաստակամությամբ ստանձնեց[22], որից սակայն կարող էր հրաժարվել, Նա օրենքի ներքո գտնվեց[23] և կատարելապես պահեց այն[24]. Նա պատժվեց մեր փոխարեն (մե՛նք պետք է ծնվեինք և տառապեինք), մեղք և անեծք դարձավ մեր փոխարեն՝ տանելով ամենավշտալի տառապանքներն Իր հոգում[25], և ամենացավալի չարչարանքներն Իր մարմնում[26], Նա խաչվեց, մահացավ[27] և անգամ մահացած վիճակում ապականություն չտեսավ Իր մարմնում[28]: Երրորդ օրը մեռելներից հարություն առավ[29]՝ նույն այն մարմնով, որով տառապել էր[30], որով էլ համբարձվեց երկինք և այնտեղ նստած է Իր Հոր աջ կողմում[31] ու բարեխոսում է մեզ համար[32]: Նա վերադառնալու է և աշխարհի վերջում[33] դատելու է մարդկանց և հրեշտակներին:

22. Սաղմ. 40.7, 8, Եբր. 10.5-10, Հովհ. 10.18, Փիլիպպ. 2.8
23. Գաղ. 4.4
24. Մատթ. 3.15, 5.17
25. Մատթ. 26.37-38, Ղուկ. 22.44, Մատթ. 27.46
26. Մատթ. 26-27
27. Փիլիպպ. 2.8
28. Գործք 2.23-24, 27, 13.27, Հռոմ. 6,9
29. Ա Կորնթ. 15.3-5
30. Հովհ. 20.25-27
31. Մարկ. 16.19
32. Հռոմ. 8.34, Եբր. 9.24-25
33. Հռոմ. 14.9, Գործք 1.11, 10.42, Մատթ. 13.40-42, Հուդա 6, Բ Պետր. 2.4

5. Տեր Հիսուսն Իր կատարյալ հնազանդությամբ, Աստծո հավիտենական Հոգով Ինքն Իրեն մեկ անգամ զոհաբերեց Աստծուն և, լիովին բավարարելով Իր Աստծո արդարությունը[34], գնեց հաշտություն և երկնային արքայության մեջ հավիտենական ժառանգություն նրանց համար, ում Հայրը տվել է Իրեն[35]:

34. Հռոմ. 5.19, Եբր. 9.14-16, 10.14, Եփես. 5.2, Հռոմ. 3.25-26
35. Դան. 9.24-26, Կող. 1.19-20, Եփես. 1.11, 14, Հովհ. 17.2, Եբր. 9.12,15

6. Չնայած որ Հիսուսը փրկագնման գինը վճարեց միայն Իր մարմնացումից հետո, դրա առաքինությունը, արդյունավետությունը և օգուտները փոխանցվեցին ընտրվածներին բոլոր դարերում՝ սկսած աշխարհի սկզբից՝ այն խոստումներով, տեսակներով և զոհերով, որով Նա հայտնվեց և նշանավորվեց՝ լինելու կնոջից Ծնվածը, Ով պետք է ջախջախեր օձի գլուխը, աշխարհի հիմնումից ի վեր մորթված Գառնուկը՝ նույնը երեկ, այսօր և հավիտյան[36]:

36. Գաղ. 4.4-5, Ծնն. 3.15, Հայտն. 13.8, Եբր. 13.8

7. Հիսուսը միջնորդության գործը կատարելիս գործում է երկու բնությունների համեմատ՝ ամեն բնությամբ անելով այդ բնությանը հարիր մասը[37]: Բայցևայնպես, անձի միասնության շնորհիվ այն, ինչ հարիր է մեկ բնությանը, Սուրբ Գրքում երբեմն վերագրվում է այն անձին, որում գերակա է մյուս բնությունը[38]:

37. Եբր. 9.14, Ա Պետր. 3.18
38. Գործք 20.28, Հովհ. 3.13, Ա Հովհ. 3.16

8. Բոլոր նրանց, ում համար Քրիստոսը ձեռք է բերել հավիտենական փրկագնում, Նա վստահաբար և արդյունավետությամբ կիրառում և փոխանցում է նույն այդ փրկագնումը[39]՝ նրանց համար բարեխոսելով[40], նրանց Իր Հոգով միացնելով Իրեն, Խոսքի մեջ և Խոսքի միջոցով հայտնելով նրանց փրկության առեղծ-

վածը[41], Իր Խոսքով և Հոգով ղեկավարելով նրանց սրտերը[42], Իր ամենակարող զորությամբ և իմաստությամբ հաղթելով նրանց թշնամիներին՝ այնպես և այնպիսի միջոցով, որոնք համահունչ են Իր հրաշալի և անիմանալի ուխտին[43], ինչպես նաև անվճար ու բացարձակ շնորհքը՝ առանց նախապայմանների:

39. Հովի. 6.37, 39, 10.15-16
40. Ա Հովի. 2.1, Հռոմ. 8.34
41. Հովի. 15.13, 15, Եփես. 1.7-9, Հովի. 17.6
42. Հովի. 14.16, Եբր. 12.2, Բ Կորնթ. 4.13, Հռոմ. 8.9, 14, 15.18-19, Հովի. 17.17
43. Սաղմ. 110.1, Ա Կորնթ. 15.25-26, Մաղ. 4.2-3, Կող. 2.15

Եզրակացություն

Այս հիմունքային դավանանքները, կասկածի նշույլ չթողնելով, ապացուցում են, որ Հիսուս Քրիստոսի Ավետարանի առանցքային ճշմարտությունները պահպանվել են եկեղեցու երկար պատմության ամբողջ ընթացքում: Մենք գիտենք, որ երբ հռչակում ենք Քրիստոսի աստվածությունը, մարմնացումը, կատարյալ կյանքը, մեր փոխարեն կրած չարչարանքները, մահը, մարմնով հարությունը և համբարձումն ու Աստծո աջ կողմում նստելը՝ որպես մեր Փրկչի, Տիրոջ և ամենի Դատավորի, ապա մեր թիկունքում երկու հազարամյակի քրիստոնյաներ են կանգնած: Աստծո շնորհքով և անառարկելի նախախնամությամբ սա եղել է եկեղեցու հիմնական ուղերձը և շարունակելու է լինել այդպիսին մինչև աշխարհի վերջը: Այն մեզ տրվել է որպես սուրբ ավանդ և վեհ նախախնամությամբ: Մենք պետք է ուսումնասիրենք այն, հավատանք դրան, փայփայենք այն, հռչակենք այն, պահպանենք և ջանասիրաբար պայքարենք դրա համար: Ի վերջո պետք է հանձնենք այն հաջորդ սերնդին՝ առանց որևէ բան պակասեցնելու, ավելացնելու կամ փոփոխելու:

5

ԱՎԵՏԱՐԱՆԻ ԳԵՐԱԶԱՆՑՈՒԹՅՈՒՆԸ

Կողոսացիս 1.18-ում Պողոսը առաքյալը հետևյալն է գրել Հիսուս Քրիստոսի Անձի վերաբերյալ. «Եվ Նա է մարմնի, այսինքն՝ եկեղեցու գլուխը, որ Նա է սկիզբը, մեռելների անդրանիկը, որպեսզի ամեն բանի մեջ Նա լինի առաջինը (*անգլերենից թարգմանաբար՝ գերազանցություն ունենա*)»: «Գերազանցություն» բառը թարգմանված է հունարեն «prōteúō» բառից, որ նշանակում է «լինել առաջինը, առաջին տեղը զբաղեցնել, բարձրագույն կոչում կամ գերազանցություն ունենալ»[1]: Անգլերենում «գերազանց» (*preeminent*) ածականը վերցված է լատիներեն «praeeminere» *(prae* [առաջ] + *eminere* [առանձնանալ]) բայից: Այն նշանակում է գերազանցել կամ առաջ անցնել բոլորից աստիճանով, կոչումով, արժեքով և կարևորությամբ: Բոլոր այս երեք հատկանիշները նկարագրում են Քրիստոսին և Նրա Ավետարանը:

Պարզապես հնարավոր չէ չափանզանցել Ավետարանի առանցքային նշանակությունը և գերազանցությունը: Այն քրիստոնեության միակ ուղերձը չէ, սակայն առաջինն է տեղով, կոչումով և գեղեցկությամբ: Այն դուրս չի մղում Սուրբ Գրքի մյուս մեծ ճշմարտությունները, այլ դրանց հիմնասյունն է և այն պրիզման, որով բացահայտվում և ընկալելի է դառնում դրանցում պարփակված ճշմարիտ իմաստությունը: Կարճ ասած՝ Հիսուսի Քրիս-

1 William Mounce and Rick D. Bennett Jr., Mounce Concise Greek-English Dictionary of the New Testament, s.v. "*prōteúō*," Accordance Bible Software, 1993.

տոսի Անձից և կատարած աշխատանքից զատ՝ չկա քրիստոնեություն, կրոնական նվիրում կամ իրական հոգևորություն: Նրա Ավետարանը Աստծո ամենամեծ հայտնությունն է մարդկանց և հրեշտակներին. Ավետարանն է միակ միջոցը, որով ընկած մարդկությունը կարող է փրկվել, և միակ հզոր միջոցը, որը քրիստոնյաներին դրդում և ուղղորդում է դեպի ճշմարիտ բարեպաշտություն կամ աստվածայնություն: Քրիստոսի և Նրա Ավետարանի գերազանցությունն էր, որ Ջոն Նյուտոնին ստիպեց գրել հետևյալ տաղը.

«Ի՞նչ եք մտածում Քրիստոսի մասին».
Այս հարցի պատասխանով է որոշվում,
Թե ինչ վիճակում ես և ինչ ծրագրով ես շարժվում:
Եթե Նրա մասին ճշմարտությունը չես մտածում,
Չես կարող ճիշտ լինել մյուս հարցերում»[2]:

Ի՞նչ եք մտածում Քրիստոսի և Նրա Ավետարանի մասին: Այն, թե ինչպես կպատասխանեք այս հարցին, Ձեր մասին կասի ամենը, ինչ պետք է իմանալ: Բայցևայնպես պետք է հիշել, որ մեր գործողություններն են վավեր դարձնում մեր դավանանքը: Եթե Քրիստոսը և Նրա Ավետարանը գերազանց տեղ են զբաղեցնում մեր մտքում և սրտում, ապա Նա վստահաբար գերազանց տեղ կզբաղեցնի նաև մեր դավանանքներում. Նա կլինի գերազանցության չափորոշիչը, որին կձգտենք համապատասխանելու, ինչպես նաև մեր կյանքի գերազանց դրդող ուժը: Այլ կերպ ասած՝ եթե նույնիսկ մեզնից ամեն բան վերցվի՝ բացի նրանից, որ «Քրիստոսը մահացել է իմ մեղքերի համար», մենք, միևնույնն է, կունենանք մեր ուղերձը, նպատակը, դրդապատճառը և սրտի ցանկությունը:

Հաջորդ գլուխներում կքննարկենք քրիստոնեական հավատքի և ուսմունքի մի շարք կողմեր, որոնցում

2 John Newton, *Olney Hymns* (London: W. Oliver, 1779), book 1, number 89.

Հիսուս Քրիստոսի Ավետարանը գերազանցություն ունի. դրանք են հայտնությունը, փրկությունը, սրբագործումը, սերտողությունը և դավանանքը: Ընթերցողը պետք է հիշի, որ տվյալ թեմաների քննարկումն այս գրքում չի կարող սպառիչ լինել, այլ լավագույն դեպքում հպանցիկ է: Այս թեմաներից յուրաքանչյուրի սպառիչ կամ խորքային ուսումնասիրության համար մի քանի հատոր կպահանջվեր: Սա ամենամեծ խնդիրներից և անխուսափելի ցավերից է, երբ հանձն ենք առնում ուսումնասիրելու Ավետարանի ամենափոքր մասնիկն անգամ. այն անվերջանալի է: Այն արժանի է ուսումնասիրության ոչ միայն մինչև մեր կյանքի վերջը, այլև մի ամբողջ հավիտենություն:

Աղոթքս այն է, որ երբ այս գրքում սկսենք սուրբգրային խոսքեր ուսումնասիրել, մեր ներսում կայծը փոխակերպվի կրակի, իսկ Քրիստոսին ճանաչելու հետաքրքրությունը՝ ամեն բան կլանող խանդավառության: Նպատակս այն է, որ մենք Աստծո շնորհքով և Նրա Հոգու օգնությամբ կարողանանք Պողոս առաքյալի նման ասել.

> «Վասնզի Քրիստոսի սերը ստիպում է մեզ, որ սա ենք միտք անում, թե եթե մեկն ամենի տեղ մեռավ, ուրեմն ամենը մեռած են. և ամենի համար մեռավ, որ կենդանի լինողները այլևս ոչ թե իրենց անձերի համար կենդանի լինեն, այլ Նրա համար, որ իրենց համար մեռավ և հարություն առավ» (Բ Կորնթ. 5. 14,15):

> «Բայց ինչ բան որ ինձ շահ էր, այն վնաս համարեցի Քրիստոսի համար: Եվ հենց ամեն բաներ էլ վնաս եմ համարում իմ Տեր Հիսուս Քրիստոսի գերազանց գիտության համար, որի պատճառով ամեն բանից զրկվեցի, և աղբ եմ համարում, որ Քրիստոսին շահեմ...» (Փիլիպպ. 3.7-8):

Մինչ կսկսենք, եկեք աղոթքով բարձրացնենք մեր

ձայները դեպի Աստված՝ նույն այն խանդավառությամբ և աղաչանքով, որով 18-րդ դարում անգլիացի ոչ կոնֆորմիստ հովիվ, օրհներգերի հեղինակ և մանկավարժ Ֆիլիպ Դոդրիջն է արել.

> «Օ՜, դաջի՛ր այս Ավետարանը մեր հոգիներում, այնպես, որ դրա փրկարար զորությունը տարածվի ամեն անկյունում: Թո՛ղ որ այն ոչ միայն լսվի, ընդունվի և հռչակվի, այլև վերապրվի: Դարձրո՛ւ այն «Քո զորությունը՝ փրկելու համար» (Հռոմ. 1.16), և բարձրացրո՛ւ ինձ դեպի այն խոնարհ ու սիրառատ գոհունակությունը, դեպի Քեզ ծառայելու այդ անխոնջ ու եռանդուն ձգտումը, ինչպես մեկը, «ում շատ մեղքերն իրեն թողված» են (Ղուկ. 7.47) և ներված են նման կերպով»[3]:

3 Philip Doddridge, *Rise and Progress of Religion in the Soul* (New York: American Tract Society, 1849), 120.

6

ԱՍՏԾՈ ԳԵՐԱԶԱՆՑ ՀԱՅՏՆՈՒԹՅՈՒՆԸ

«Հայտնություն» (անգլերենում՝ *revelation*) բառը ծագել է լատիներեն *revelare* (*re* [ինչ-որ բան հակառակ ուղղությամբ շրջել, փոխել] +*velum* [քող]) իմաստով: Այն բառացիորեն նշանակում է ինչ-որ թաքնված բան բացահայտել՝ «քողը հեռացնել»: Նոր Կտակարանում «հայտնել» բառը թարգմանված է հունարեն *apokalúptō* (*apó* [հակադարձում] + *kalúptō* [ծածկել]) բայից: Այն նշանակում է ծածկը կամ քողը հեռացնել: Աստծո հայտնությունը նման է վարագույր բացելուն, բացահայտելուն մի բան, որը թաքնված էր. դա Աստծո բնության և կամքի արտահայտումն է: Քանի որ Աստված անսահմանորեն արժեքավոր է՝ բոլորից ու ամենից վեր, Նրա հայտնությունը մարդկանց *ամենամեծ պարգևն է*, որ Նա կարող է տալ, և *ամենամեծ շնորհն է*, որ Նա կարող է անել: Հետևաբար Նրա քողարկումը՝ մարդուց Իրեն թաքցնելու Նրա որոշումը, ամենածանր դատաստանն է:

Սուրբ Գիրքը սովորեցնում է, որ Աստված տարբեր միջոցներով է Իրեն հայտնել մարդուն: Առաջինը ընդհանուր հայտնությունն է, որն արարչության և ամեն մարդու սրտում գրված օրենքի միջոցով տրվել է ամբողջ մարդկությանը և ամեն սերնդի: Պողոս առաքյալը հաստատում է սա հռոմեացիներին ուղղված թղթի առաջին երկու գլուխներում.

> «Որովհետև Նրա աներևույթ *բաները* աշխարհի սկզբից ստեղծվածներով իմացվելով տեսնվում

են, որ է՝ Նրա մշտնջենավոր զորությունը և Աստվածությունը, այնպես որ անպատասխան մնան» (Հռոմ. 1.20):

«Ուրեմն երբոր հեթանոսները, որ օրենք չունեն, բնությամբ օրենքի գործերն անեն, սրանք թեև օրենք չունեն, իրենք են իրենց համար օրենք. որոնք ցույց են տալիս, թե օրենքի գործը նրանց սրտերում գրված է՝ նրանց խղճմտանքի վկայությունով, և իրենց խորհուրդների իրար հանդիմանելով կամ թե իրավունք տալով)» (Հռոմ. 2. 14-15):

Ընդհանուր հայտնությունից զատ՝ Սուրբ Գիրքը վկայում է նաև այն մասին, որ Աստված մասնահատուկ հայտնություն է տվել մարդկությանը՝ ինքնիշխան կերպով ընտրելով Իսրայելի ժողովրդին: Այս ժողովրդին վստահվել էին «Աստծո պատգամները» (Հռոմ. 3.2), որպեսզի նրանք «իմանային Նրա կամքը և զանազանեին գերազանց բաները՝ օրենքից խրատված լինելով»: Իրենք էլ իրենց հերթին պետք է «կույրերի առաջնորդ լինեին և խավարյալների լույս, անմիտների խրատիչ, երեխաների վարդապետ, որ օրենքի գիտության և ճշմարտության կերպարանքն ունեին օրենքում» (Հռոմ. 2.18-20): Բայցևայնպես, ի հեճուկս այս մեծ արտոնությունների, Իսրայելի ժողովուրդը քիչ էր տարբերվում իրեն շրջապատող հեթանոս ազգերից: Հետևաբար աշխարհը համակվել էր հոգևոր խավարով, կռապաշտությամբ և գարշելի անառակությամբ (Եփես. 4.17-19):

Այդուհանդերձ, երբ աշխարհում ամենախիտ խավարն էր տիրում՝ «երբ որ ժամանակի լրումը եկավ, Աստված ուղարկեց Իր Որդուն» (Գաղ. 4.4) որպես «լույս՝ հեթանոսներին լուսավորելու, և փառք՝ Իսրայել ժողովրդի համար» (Ղուկ. 2.32), որպեսզի Նա «փրկություն բերի մինչև երկրի ծայրերը (Գործք 13.47): Սուրբ Գիրքը, եկեղեցու բոլոր

դավանանքները և կատեխիզիսները վկայում են, որ մարմին առած Որդին Աստծո մեծագույն հայտնությունն է մարդկանց և հրեշտակներին, իսկ այդ հայտնության գագաթնակետը Գողգոթայի խաչն է: Այդտեղ է, որ տեսնում ենք Աստծո բոլոր հատկանիշների ամենաամբողջական հայտնությունը կատարյալ ներդաշնակության մեջ: Այդտեղ է, որ Նրա սրբությունը և արդարությունը հայտնի են դառնում մեղքի արդար պատժի մեջ: Այդտեղ է նաև, որ Նրա շնորհքը և ողորմությունը հայտնի են դառնում Իր մեղավոր ժողովրդի փոխարեն Նրա Որդու չարչարանքի և մահվան մեջ: Այո՛, խաչի վրա է, որ տեսնում ենք Աստծո Անձի և Նրա հատկանիշների ամենամեծ հայտնությունը: Եվ միայն այս իրողության հոչակմամբ է, որ Աստված շարունակում է հայտնել Իրեն: Հետևյալ խոսքերը գրելով՝ «Աստծուն ոչ ոք երբեք չի տեսել, *բայց* միածին Որդին, Հոր ծոցում լինողը, Նա պատմեց» (Հովհ. 1.18), Հովհաննեսը նկատի ուներ ոչ միայն Քրիստոսի ներկայությունը, վարդապետությունը և հրաշքները, այլև Նրա խաչը: Այստեղ է, որ գտնում ենք Աստծո ամենակարևոր նկարագիրն ու բնութագիրը: Ինչպես Էդվարդ Փեյսոնն է գրել.

> «Ավետարանում պարփակված է Եհովայի բարոյական գերազանցության և կատարելությունների ամենամեծ ցուցադրությունը: Բավական է միայն ասել, որ այստեղ Եհովայի բարոյական բնութագիրը փայլում է իր ամբողջ գեղեցկությամբ ու կատարելությամբ: Այստեղ Աստվածության ամբողջությունը և անըմբռնելի վեհությունը շլացնում են մեր տեսողությունը: Այստեղ ներդաշնակությամբ միախառնվում են Աստծո բազմակողմ կատարելությունները՝ սրբությունն ու բարությունը, արդարությունն ու ողորմությունը, մեծությունն ու ներողամտությունը, մեղքի հանդեպ ատելությունն ու

> մեղավորի հանդեպ սրտացավությունը, ինչպես արևի բազմագույն լույսի շողերն են միախառնվում մաքուր ու բոցավառ սպիտակի մեջ: Սրանով՝ ավելի, քան որևէ այլ գործով, Նա հավակնում է Իր արարչության վեհագույն հիացմունքին, շնորհակալությանը և սիրուն: Այս գործով է, որ Նա երբևէ կոչ է արել և հավիտենապես կոչ է անելու երկնային երգչախմբերին զմայլված փառաբանելու Իրեն և բոցավառում է նրանց սրտերում պարփակված նվիրման կրակները: Ավետարանով փայլատակող փառքն այն փառքն է, որը լուսավորում է Երկինքը, իսկ լույսը մորթված Գառնուկն է»[1]:

Օկտավիուս Ուինսլոուն իր «Աստծո թանկագին գործերը» գրքում խոսել է այն հրաշալիքների մասին, որոնք հայտնի են դառնում Քրիստոսի փառքն ուսումնասիրելիս:

> «Մի՛ փորձեք ճանաչել Աստծուն թանկարժեք քարերով պատված Երկնքում, սարերի վսեմության, դաշտավայրերի գեղեցկության, օվկիանոսների ահեղության, վտակների կարկաչի և մեղեդային քամիների մեջ: Աստված է ստեղծել այդ ամենը, սակայն այդ ամենն Աստված չէ: Ճանաչե՛ք Նրան Հիսուսի խաչի մեջ: Նայե՛ք Նրան այդ զարմանալի աստղադիտակով ու թեև խավար ապակուց, սակայն կտեսնեք Նրա փառքը՝ Աստվածության սարսափելի խավարումը, Աստվածության Արեգակի արյան հեղումը. սակայն այդ ամենով հանդերձ այդ կոշտ բոսորագույն խաչը ավելին է հայտնում Աստծո մտքի մասին, ավելի մեծ ներդաշնակությամբ է բացահայտում Աստծո կատարելությունները և

1 Edward Payson, *The Complete Works of Edward Payson* (Harrisonburg, Va.: Sprinkle Publications, 1998), 3:42–43.

առավել անշեղ է ներկայացնում Աստծո սիրտը, ավելի լիարժեք է ցույց տալիս Աստծո փառքը, քան մեր մոլորակի նման տասը հազար մոլորակների զորությունը միասին վերցրած, նույնիսկ եթե մեղքը երբևէ ապականած չլիներ և անեծքը ախտահարած չլիներ այն: Ճանաչե՛ք Աստծուն Քրիստոսի մեջ և Քրիստոսին՝ խաչի վրա: Օ՜, ինչպիսի՜ հրաշալիքներ են հատվում դրանում՝ փառքն է պարուրվում դրա շուրջը, օրհնության գետերն են հոսում դրանից. այն խոր զովացնող ստվերներ է գցում բոլոր այն երջանիկների վրա, ովքեր նայում են Հիսուսին ու ապրում, նայում են Հիսուսին ու սիրում, նայում են Հիսուսին ու հնազանդվում, նայում են Հիսուսին և ընդունում «հավիտենական կյանքի հույսը, որն Աստված, Ով չի ստում, խոստացել էր աշխարհի արարումից առաջ»: Այսքա՛ն աստվածային հիմքի այդքա՛ն արժանի շինվածք»[2]:

2 Octavius Winslow, *The Precious Things of God* (Louisville, Ky.: GLH Publishing, 2015), 7–8.

7

ՓՐԿՈՒԹՅԱՆ ՈՒՂԵՐՁԻ ԳԵՐԱԶԱՆՑՈՒԹՅՈՒՆԸ

«Փրկություն» բառը վերցված է հունարեն *sotēría* բառից, որը վերաբերում է ֆիզիկական կամ հոգևոր ազատմանը: Հոգևոր առումով այն վերաբերում է Աստծո նախաձեռնած և կատարած ինքնիշխան գործողությանը, որով Նա Իր ժողովրդին ազատեց մեղքի հետևանքներից և զորությունից, ինչպես նաև հաշտեցրեց ու վերականգնեց նրանց հարաբերությունն Իր հետ: Սա իրականություն դարձավ Հիսուս Քրիստոսի Ավետարանի միջոցով:

Հին և Նոր Կտակարաններում Աստված հայտնում է Իրեն որպես Իր ժողովրդի Փրկչի կամ Ազատարարի (Սաղմ. 17.7, Ես. 60.16, Տիտ. 3.4, Ա Տիմ. 2.3): Իրականում Սուրբ Գիրքն ասում է, որ փրկությունն Աստծո արքայական արտոնությունն է՝ իրավունք, որը Նա չի կիսում որևէ մեկի հետ: Սաղմոսերգուն գոչել է՝ «Տիրոջն է փրկությունը» (Սաղմ. 3.8), և կրկին՝ «Արդարների փրկությունը Տիրոջից է» (Սաղմ. 37.39): Հովսան մարգարեն նույնը հաստատել է՝ կետի փորում խոստովանելով՝ «Փրկությունը ՏԻՐՈՋՆ է» (Հովս. 2.9): Աստված էլ ավելի հստակ է արտահայտվում Եսայիա մարգարեի միջոցով. «Ես՝ Ես եմ Տերը, և Ինձնից ջոկ Փրկիչ չկա» (Ես. 43.11), և «…ուրիշ Աստված չկա Ինձնից ջոկ, ճշմարիտ և փրկող Աստված չկա՝ բացի Ինձնից» (Ես. 45.21): Այս պատճառով Տերը կանչում է բոլոր ժողովուրդներին՝ անկախ ազգային կամ մշակութային պատկանելությունից, որպեսզի դեպի

Իրեն դառնան փրկության համար. «Ո՛վ երկրի բոլոր ծայրերը, դեպի Ինձ դարձե՛ք, որ փրկվեք, որովհետև Ես եմ Աստված, և ուրիշը *չկա*» (Ես. 45.22):

Այն փաստը, որ Աստված ոչ մեկի հետ չի կիսի փրկչի Իր տիտղոսը, մեզ շատ բան է ասում Հիսուս Քրիստոսի Անձի մասին: Ամբողջ Նոր Կտակարանում Նա բազմիցս կոչվել է Փրկիչ (Ղուկ. 1.69, Հովհ. 4.42, Գործք 5.31, Հռոմ. 11.26, Տիտ. 3.6, Ա Հովհ. 4.14), և փրկության գործը մշտապես Նրան է վերագրվում (Մատթ. 1.21, Ղուկ. 19.10, Գործք 15.11, 16.31, Հռոմ. 10.9, Ա Թես. 5.9, Ա Տիմ. 1.15)՝ բացառելով բոլոր մյուսներին: Հատկապես նշանակալի են Պետրոսի խոսքերն այս մասին՝ գրված Գործք առաքելոց 4.12-րդ խոսքում. «Եվ էլ մի ուրիշ ոչ մեկով փրկություն չկա, որովհետև ուրիշ անուն էլ չկա երկնքի ներքև մարդկանց տրված, որով կարելի լինի մեզ փրկվել»: Այն, որ Պետրոսը փրկությունը վերագրում է բացառապես Քրիստոսի անվանը, միայն մեկ հնարավոր եզրահանգման է բերում. Նա Աստված է՝ այդ բառի ամենաամբողջական իմաստով:

Անկում ապրած և բարոյապես այլասերված մարդկության հավիտենական փրկությունն իրագործելու բարդությունը երբեք չպետք է թերագնահատել: Հիսուսն ասում է, որ ուղտի համար ավելի հեշտ կլինի անցնել ասեղի անցքով, քան մեղավորի համար (հարուստ, թե աղքատ)՝ մտնել Աստծո արքայությունը (Մատթ. 19.23-26): Բարդության պատճառը ոչ միայն մեր բարոյական այլասերվածությունն ու մեղքն է, այլև Աստծո սուրբ ու արդար բնությունը: Եթե Աստված բարոյազուրկ լիներ, մեր մեղքը խնդիր չէր առաջացնի, սակայն քանի որ Նա սիրում է արդարությունը և ատում է ամեն տեսակի անօրինություն, մեր մեղքը մեծագույն երկընտրանքի առջև է կանգնեցնում Նրան. ինչպե՞ս կարող է Աստված ներել մեղքը՝ առանց հակադրվելու Իր սուրբ ու արդար բնությանը: Կամ, ինչպես Պողոս առաքյալն է ասել

Հռոմեացիս 3.26-րդ խոսքում, ինչպե՞ս կարող է Աստված լինել արդար և միաժամանակ չարերին արդարացնող: Այս հարցի՝ հարցերից ամենամեծի պատասխանը կարելի է գտնել Հիսուս Քրիստոսի Ավետարանում: Աստծո Որդին իսկական մարդ դարձավ և Աստծո Օրենքին լիարժեք հնազանդ կյանքով ապրեց: Գողգոթայում Նա կրեց Իր ժողովրդի մեղքը, Իր վրա վերցրեց Աստծո բարկությունը, որին նրանք էին արժանի, և բավարարեց Աստծո արդարության պահանջները, որոնց հակառակ էր մարդկային բնությունը: Այդպիսով Հիսուսը հնարավոր դարձրեց այն, որ Հայրը ներեց Իր մեղավոր ժողովրդին՝ առանց նվազագույնս խախտելու Իր արդարությունը, և կանչեց նրանց դեպի Իրեն՝ առանց նվազագույնս ոտնահարելու Իր սրբությունը: Սա հերթական *ուղերձ* չէ, այլ *ուղերձների ուղերձն* է: «Խաչի խոսքը» եկեղեցու խոսքն է: Այն պետք է լինի մեր սրտերի կենտրոնում, մեր մտքերին գերիշխողը և մեր ամեն քարոզչության սկիզբն ու ավարտը: Հենց այս ուղերձն է, որ քրիստոնեությունն առանձնացնում է մյուս կրոններից: Այն եկեղեցուն կյանք, ուժ ու գեղեցկություն է տալիս: Այս ուղերձը կորցնելը, այլ բաների մեջ տարրալուծելը կամ դրան երկրորդական կարևորություն տալը կնշանակի մեր հավատքի կենտրոնով դաշույն անցկացնել: Եթե այս էջերից լոկ մի ճշմարտություն քաղեք, թո՛ղ դա լինի այն, որ Ավետարանը աստվածաշնչյան, ռեֆորմացված և ավետարանական քրիստոնեության ամենագերազանց ուղերձն է: Ինչպես Մեթյու Հենրին է գրել. «Քրիստոսի մահվան և հարության ուսմունքը քրիստոնեության հիմքն է: Հանե՛ք այդ հիմքը, և ամբողջ կառույցը փուլ կգա, հավիտենության մեր բոլոր հույսերը միանգամից կփլուզվեն: Այս ճշմարտությունն ամուր բռնելն է, որ քրիստոնյաներին օգնում է փորձություններին դիմակայելու և Աստծուն հավատարիմ մնալու»[1]:

1 Matthew Henry, *Matthew Henry's Commentary* (Mclean, Va.: MacDonald Publishing, 1980), 6:585.

Ռ.Կ.Հ. Լենսկին նույնպես զգուշացրել է Աստվածաշնչի կարևորությունը նսեմացնելու վտանգի մասին.

> «Ամբողջ տիեզերքում չկա ուրիշ մի զորություն, որը կկարողանա փրկել թեկուզ մեկ հոգու: Ավետարանը մերժելը նույնն է, թե մերժել փրկությունը: Ավետարանը մեկ այլ բանով փոխարինելը նույնն է, թե փրկությունը փոխարինել դրա կորստով: Ավետարանը տարրալուծելը կամ փոփոխելը կնշանակի նվազեցնել դրա զորությունը՝ գուցե նույնիսկ այնքան, որ այն այլևս չկարողանա փրկել... Ավետարանը փրկությունն իրագործելու Աստծո զորությունն է: Իսկ մարդուն սպառնացող վտանգը մեղքի և մահվան, սատանայի և նրա խավարի իշխանության կործանարար ու նզովյալ զորությունն է: Մարդկային ոչ զորությամբ է հնարավոր փախչել դրանից: Դրանից պաշտպանությունը ներումն է, խաղաղությունը, միավորումը Քրիստոսի և Աստծո հետ երկնային արքայությունում՝ որպես Աստծո որդիներ, լույսի զավակներ, երկնքի ժառանգորդներ: Մարդկային ոչ զորությունն է ունակ հասնելու այս ամենին»[2]:

Ի վերջո, Սամուել Դևիսն ընդգծում է, թե որքան կարևոր է գալ Հիսուս Քրիստոսի փրկարար ճանաչողությանը.

> «Երբ մտածում եմ այն մասին, որ խոսում եմ մեղավորների՝ զրկյալ, անօգնական մարդկանց ժողովի հետ, որոնք եթե երբևէ փրկվեն, ապա դա կլինի միայն Հիսուս Քրիստոսի միջոցով, այնպես, ինչպես Ավետարանն է հայտնում... երբ մտածում եմ, որ Ձեր հավիտենական կյանքն ու երջանկությունը կախված են այս առանցքից, այն է՝ այս Փրկչին

2 R. C. H. Lenski, *The Interpretation of Saint Paul's Epistle to the Romans* (Min- neapolis, Minn.: Augsburg Publishing, 1961), 74–75.

և փրկության այս ճանապարհին ընդունելուց... երբ մտածում եմ այս ամենի մասին, չեմ կարողանում ընտրել մի ավելի պատեհ թեմա, քան առաջարկելն է, որ Տեր Հիսուսին ընդունեք, և բացատրելն ու հաղորդելը (այն է՝ արմատավորել, պատվաստել, դաջել) Նրա միջնորդությամբ իրագործվող փրկության այս ճանապարհի մասին, այլ կերպ ասած՝ մաքուր Ավետարանը քարոզելը, քանի որ Ավետարանն իր ամենաճշգրիտ իմաստով ոչ այլ ինչ է, քան հայտնություն Ադամի ցեղի մեղավորների փրկության ճանապարհի մասին»[3]:

3 Samuel Davies, *The Sermons of Rev. Samuel Davies* (Morgan, Pa.: Soli Deo Gloria, 1997), 1:109.

8

ՍՐԲԱՑՄԱՆ ԳԵՐԱԶԱՆՑ ՄԻՋՈՑԸ

Ավետարանն ընդունվում է որպես փրկության գերազանց ուղերձ, սակայն հաճախ անտեսվում կամ նույնիսկ արժեզրկվում է դրա գերազանցությունը սրբագործման հարցում: Այդուհանդերձ, եթե լավ ուսումնասիրենք Սուրբ Գիրքը, կտեսնենք, որ Ավետարանը ճշմարտապես Աստծո զորությունն է՝ փրկելու ամեն հավատացողի (Հռոմ. 1.16)՝ ոչ միայն արդարացնելով, այլև սրբագործելով: Ավետարանին ուղղված հավատքին մեկ հայացքը փրկում է մեզ, մինչդեռ շարունակաբար Ավետարանին նայելով՝ մենք վերափոխվում և ավելի ու ավելի ենք նմանվում Հիսուս Քրիստոսին: Ինչպես Պողոս առաքյալն է գրել Կորնթոսի եկեղեցուն. «Բայց մենք ամենս, բաց երեսով Տիրոջ փառքն ինչպես հայելու մեջ տեսնելով, նույն պատկերի նման կերպարանափոխվում ենք փառքից դեպի փառք, ինչպես թե Տիրոջ Հոգուց» (Բ Կորնթ. 3.18): Այդ իսկ պատճառով Ջորջ Ուայթֆիլդը հետևյալ խնդրանքն է գրել.

> «Օ՜, հավատացյալնե՛ր, իմ սիրտն ընդարձակվել է Ձեզ ուղղված սիրուց: Նայե՛ք օրհնյալ Հիսուսին և ապրե՛ք Նրանով: Որքան ավելի շատ այդպես վարվեք, այնքան ավելի շատ կապրեք ու կգործեք Նրա համար: Շնորհակա՛լ եղեք այն ամենի համար, ինչ ստացել եք, սակայն շարունակաբար փնտրե՛ք երկնային շնորհքի հոսքեր և նոր բացահայտումներ Նրա սիրո մասին, մինչև կանչվեք Աստծո Գառանը տեսնելու Իր փառքի մեջ»[1]:

1 George Whitefield, *The Sermons of George Whitefield* (Wheaton, Ill.: Crossway, 2012), 2:421.

Ավետարանի վերափոխող զորությունը ոչ միայն տեղեկություն է հաղորդում մտքին, այլև հպվում է սրտին: Հաճախ գիտելիքն ունենալով՝ մենք խթանի պակաս ենք ունենում, և մեր իմացած պատվիրանների համեմատ ապրելը մեզ դժվար է թվում: Սակայն Ավետարանն աշխատում է սրտի հետ և վերհանում է մեր սերն Աստծո նկատմամբ ու տանում մեզ դեպի հնազանդություն: Որքան ավելի ենք ըմբռնում Աստծո փրկագնող աշխատանքը մեր փոխարեն, այնքան ավելի ենք բոցավառվում, և մեր նվիրումն ավելի կրակոտ է դառնում: Եկեղեցու պատմության մեծ սրբերը մեզնից ավելի լավը չէին, քանզի բոլոր հավատացյալներն էլ ծնվում են նույն բարոյական այլասերվածությամբ և նորոգվում նույն Հոգով: Նրանց բացառիկ նվիրումը մեծապես տարբերվում է մեր նվիրումից, քանի որ նրանք շատ ավելի լավ գիտեին Հիսուս Քրիստոսի Ավետարանը: Որքան ավելի ենք հասկանում, թե ինչ է Նա արել մեր փոխարեն, այնքան ավելի ենք մոտիվացվում և վերափոխվում: Պողոս առաքյալը հաստատում է սա Բ Կորնթացիս 5.14-15-րդ խոսքերում. «Վասնզի Քրիստոսի սերը ստիպում է մեզ, որ սա ենք միտք անում, թե եթե մեկն ամենի տեղ մեռավ, ուրեմն ամենը մեռած են, և ամենի համար մեռավ, որ կենդանի լինողներն այլևս ոչ թե իրենց անձերի համար կենդանի լինեն, այլ Նրա համար, որ իրենց համար մեռավ և հարություն առավ»:

Ավետարանի միջոցով բացահայտված Քրիստոսի սերն էր, որ Պողոս առաքյալին դարձրեց նշանավոր ծառա: Այս ճշմարտությունը բազմիցս հաստատվել է եկեղեցու պատմության ընթացքում: Օրինակ՝ Ջոն Քելվինը գրել է. «Որքան ավելի զարմանահրաշ բացահայտումներ են հասնում մեզ մեր Ազատարարի բարության մասին, այնքան ավելի ամուր ենք կապվում Նրա ծառայությանը»[2]: Իսկ Ջորջ Ուայթֆիլդը հետևյալ հավաստումն է արել. «Հիսուս Քրիստոսի մահը մեր ողջ կյանքը վերածել է մեկ անընդհատական

2 John Calvin, *Calvin's Commentaries* (Grand Rapids, Mich.: Baker, 1979), 21:304.

զոհաբերության: Ուտենք թե խմենք, աղոթենք Աստծուն թե մարդկանց համար ինչ-որ բան անենք՝ ամենը պետք է արվի Նրա ճանաչողությունից և Նրա հանդեպ սիրուց դրդված, Ով մահացել ու հարություն է առել, որպեսզի մեր բոլոր գործողությունները՝ նույնիսկ ամենասովորականները, ընդունելի ներկայացնի Աստծուն»[3]:

Ավետարանը շեշտադրելը՝ որպես սրբագործման մեծագույն միջոց, միտված չէ հերքելու կամ նսեմացնելու Աստծո պատվիրանների տեղը քրիստոնյայի կյանքում: Սաղմոսերգուի հայտարարությունն այն մասին, որ օրենքն օգտակար է մեր սրբագործման համար, շարունակում է անփոփոխ մնալ. «Քո պատվիրաններով ես իմաստուն եղա. սրա համար ատում եմ ստության ամեն ճանապարհը: Քո խոսքը ճրագ է իմ ոտների համար և լույս՝ իմ ճանապարհի համար: Ես երդում արի և կկատարեմ, թե Քո արդարության իրավունքը կպահեմ» (Սաղմ. 119.104-106):

Օրենքի իրական միտումը, որը Քրիստոսը պատվում էր, այն պատվիրանները և հրահանգները, որոնք Նա սովորեցնում էր Իր երկրային ծառայության ընթացքում, ինչպես նաև այն ցուցումները, որոնք տվել է մեզ Նոր Կտակարանը գրողների միջոցով, ովքեր Հոգուց էին ներշնչված, չափազանց մեծ գանձ են և անսխալական ուղեցույց: Դրանց օգնությամբ հասկանում ենք, թե ինչպիսին է Աստծո բնավորությունը, և թե ինչ ճանապարհով պետք է ընթանանք: Այդուհանդերձ, խաչի մեջ մենք գտնում ենք Աստծուն և Նրա կամքին լիովին հանձնվելու մեծ խթանը: Մեզ հիմնավոր պատճառներ են տրված Աստծուն ուղղված անկոտրում նվիրումով ապրելու համար, ինչպես, օրինակ՝ արարչությունը, նախախնամությունը, շնորհքը և բարության այլ անթիվ դրսևորումներ: Այդուհանդերձ, Քրիստոսի խաչն այդ ամենից վեր է. Էդվարդ Փեյսոնը գրել է.

---

3 Whitefield, *Sermons of George Whitefield*, 2:237.

> «Կորնթացիներին ուղղված իր թղթերով սուրբ Պողոսը տեղեկացնում է մեզ, որ միտված է ճանաչելու և ճանաչեցնելու Քրիստոսին, այն էլ խաչվածին (Ա Կորնթ. 2.2)։ Արդյո՞ք նրա նպատակն էր սահմանափակել իր ուսմունքները միայն խաչով և իր քարոզներում ոչինչ չասել մեր բարոյական պարտականությունների մասին։ Ո՛չ մի կերպ։ Նրա բոլոր թղթերն ապացուցում են, որ նա նման միտում չուներ։ Փոխարենը՝ Պողոսի նպատակն էր մարդկանց բարոյական պարտականությունները պատկերել և պարտադրել ավետարանական ձևով՝ Քրիստոսի խաչով պայմանավորված դրդապատճառներով և բացատրություններով»[4]։

Չարլզ Սիմեոնը ևս գրել է Քրիստոսին փնտրելու և Նրա վրա հենվելու կարևորության մասին, երբ խոսքը վերաբերում է Աստծուն հնազանդությանը.

> «Պողոսը մասնավորապես երկու տեսակետ է ներկայացնում Քրիստոսի մահվան մասին խոսելիս. այն մեր հույսերի հիմքն է և մեր հնազանդության դրդապատճառը... Որքան էլ ամուր շեշտադրեր Պողոսը Քրիստոսին հենվելու անհրաժեշտությունը, ինչպես նաև այն, որ փրկության մեր հույսը հիմնված է Նրա հնազանդության վրա մինչև մահ, նա ոչ պակաս լրջությամբ խոսում էր սրբության մասին։ Չնայած որ հավատացյալներին անվանում էր «օրենքի համար մեռած» և «առանց օրենքի», նա, միևնույնն է, պնդում էր, որ նրանք «Քրիստոսի օրենքի տակ են» և նույնպիսի պարտավորություն ունեն առավելագույնս հնազանդվելու դրա ամեն տառին (Ա Կորնթ. 9.21, Գաղ. 2.19)։ Ավելին՝ երբ իր սերմանած (պատվաստած) ուսմունքներն անբարո նպատակներով

4 Payson, *Complete Works of Edward Payson*, 3:136.

փորձում էին խեղել, նա իր բացահայտ նողկանքն էր արտահայտում նման գործողություններին (Հռոմ. 6.1, 15) և ասում. «Որովհետև Աստծո շնորհքը երևաց. որ փրկարար է, ամեն մարդկանց համար. որ խրատում է մեզ, որ ուրանանք ամբարշտությունը և աշխարհական ցանկությունները և խոհեմությամբ և արդարությամբ և աստվածպաշտությամբ ապրենք այս աշխարհում» (Տիտ. 2.11-12): Նա սուրբ հնազանդության կյանքը ներկայացնում է որպես մեծ նպատակ, որին Քրիստոսը ցանկանում է հասնել ամեն հավատացյալի կյանքում: Եվ իսկապես, Հիսուսի անունն էլ մատնանշում է, որ Նրա գալու նպատակը «Իր ժողովրդին իրենց մեղքերից փրկելն էր» (Մատթ. 1.21): Նույնը վերաբերում է Նրա մահվան տեսակի ծանրությանը և վերջնանպատակին, ընդհուպ՝ «Իր անձը մեզ համար տվեց, որ մեզ ամեն անօրինությունից փրկի և սրբի, Իր համար հատուկ ժողովուրդ *շինի* բարի գործերի նախանձավոր» (Տիտ. 2.14): Նրա հարությունը և համբարձումը նույն վերջնանպատակն էին հետապնդում՝ «Վասնզի նույն իսկ նրա համար էլ Քրիստոսը մեռավ և կենդանացավ, որ մեռելների և կենդանիների վրա տիրի» (Հռոմ. 14. 9): Այս ամենով տպավորված՝ սուրբ Պողոսը մյուս առաքյալներից ավելի ջանասիրաբար էր կատարում իր սուրբ աշխատանքը. նա առաջ էր շարժվում այնպիսի նախանձավորությամբ, որը հնարավոր չէր մարել, և այնպիսի եռանդով, որը հնարավոր չէր ճնշել. նրա աչքերում ոչինչ էին զրկանքները, աշխատանքի դժվարությունը, բանտարկությունները, մահը. «Բայց ես մի բանի տեղ չեմ դնում և իմ անձն էլ պատվական չեմ համարում, որ ուրախությամբ կատարեմ իմ ընթացքը և այն պաշտոնը, որ Տեր Հիսուսից առա, որ Աստծո շնորհաց ավետարանին վկայեմ» (Գործք 20.24): Սակայն ո՞րն էր նրա խթանը: Նա ինքն է

ասում, որ իրեն դրդող ուժը Քրիստոսի նկատմամբ պարտավորության զգացումն էր՝ այն ամենի համար, որ Քրիստոսն արել էր ու չարչարվել իր փոխարեն. «Վասնզի Քրիստոսի սերը ստիպում է մեզ, որ սա ենք միտք անում, թե եթե մեկն ամենի տեղ մեռավ, ուրեմն ամենը մեռած են, և ամենի համար մեռավ, որ կենդանի լինողներն այլևս ոչ թե իրենց անձերի համար կենդանի լինեն, այլ Նրա համար, որ իրենց համար մեռավ և հարություն առավ» (Բ Կորնթ. 5.14-15): Սա էր այն սկզբունքը, որը նա ցանկանում էր, որ մարդիկ որդեգրեին և ջանային իրենց մտքում դաջել. «Արդ աղաչում եմ ձեզ, եղբայրնե՛ր,- ասում է նա,- Աստծո ողորմությունով, որ ձեր մարմինները ներկայացնեք կենդանի, սուրբ և Աստծո ընդունելի պատարագ, որ է ձեր բանավոր պաշտոնը» (Հռոմ. 12.1): Մենք գիտենք, թե ինչ ողորմության մասին է խոսում Պողոսը. դա այն մեծ ողորմությունն է, որը մեզ համար երաշխավորվել է կատարված փրկագնման շնորհիվ, քանի որ մեկ այլ խոսքում ասվում է. «...մեծ գնով գնվեցիք, ուստի փառավորե՛ք Աստծուն ձեր մարմնում և ձեր հոգում, որ Աստծունն են» (Ա Կորնթ. 6.19-20): Առաքյալը սա նկատի ունի՝ «խաչված Քրիստոս» ասելով: Այն երկու մասից է բաղկացած. առաջինը՝ վստահություն դեպի Քրիստոսը փրկության համար, և հաջորդը՝ հնազանդություն օրենքին հանուն Քրիստոսի: Եթե այս երկու մասերից մեկը կտրվի մյուսից, ապա առաքյալի տեսակետը կլինի անկատար, իսկ ծառայությունը՝ անհաջող: Եթե նա Քրիստոսին չներկայացներ որպես աշխարհի Փրկչի, ապա չէր արդարացնի իրեն տրված վստահությունը և իրեն լսողներին կառաջնորդեր իրենց հույսերը կառուցելու ավազե հիմքի վրա: Մյուս կողմից՝ եթե նա անտեսեր սրբություն սերմանելը (այն է՝ պատվաստելը) և փրկագնող սերը ներ-

> կայացնելը որպես հնազանդության կարևոր դրդապատճառ, ապա արդարացիորեն կմեղադրվեր նրա համար, ինչը սխալմամբ վերագրում էին նրան, այն է՝ հականամական ոգին, իսկ նրա ուսմունքները արժանի կլինեին այն պախարակմանը, որին շատ անարդարացիորեն ենթարկվում էին: Սակայն նա ոչ մի կողմից սխալ չգործեց՝ ոչ հիմքը մոռացավ, ոչ էլ գերազանց շինությունը, այլ ամեն մեկը պատշաճ կերպով ներկայացրեց և ամեն մեկն իր տեղում պահեց»[5]:

Ավետարանի սրբագործող զորությունը պետք է լինի թե՛ քաջալերանք և թե՛ կոչ՝ քննելու ինքներդ Ձեզ: Մենք պետք է քաջալերվենք՝ իմանալով, որ որքան ավելի հասկանանք Ավետարանի ճշմարտությունները, այնքան ավելի կխանդավառվենք և կվերափոխվենք դրանցով: Այդուհանդերձ, պետք է նաև ազնվությամբ քննենք ինքներս մեզ՝ հասկանալու, թե արդյոք մեր գիտելիքը տանում է մեզ վերափոխման: Ավետարանի իրական իմացությունը չի չափվում այն փաստերի քանակությամբ, որոնք հավաքել ենք Քրիստոսի Ավետարանի մասին, այլ կերպարանակից լինելով Քրիստոսի Ավետարանին: Ինչպես ամբողջ աստվածաբանությունը, այնպես էլ Ավետարանի իրական սերտողությունը նվիրում է, երկրպագության քայլ, որի արդյունքում տեղի է ունենում վերափոխում: Ջոն Օուենը շատ լավ է շարադրել սա.

> «Քաղաքական տեսության իմացությունը նույնը չէ, ինչ պետական գործիչ լինելը. Ցիցերոնի օրենքները և Պլատոնի «Հանրապետությունը» ինքնաբերաբար լավ քաղաքացիներ չեն ստեղծում: Նույն տրամաբանությամբ՝ քրիստոնյա աստվածաբանը նա չէ, ով աստվածաբանության ինչ-որ մակերեսային գիտելիք ունի կամ տիրապետում

5 Charles Simeon, *Expository Outlines on the Whole Bible* (Grand Rapids, Mich.: Baker, 1988), 16:35, 37–39.

է որևէ մասնագիտական սխեմայի և դրա գիտական տերմինաբանությանը: Եթե նա չունի Քրիստոսի աշակերտ լինելու իրական նշանները, ապա աստվածաբան չէ, այլ ինքն իրեն դատապարտած թշվառ մեղավոր: Նման գիտնականների նկարագիրը տվել է դեռևս Ֆիլոստրատուսը. «Եթե այն, ինչ մենք սովորեցնում ենք, հակասում է մեր իսկ վարքին, ապա մեր խոսքն անբնական է՝ մենք պարզապես ձայներ ենք արձակում, ինչպես սրնգահարը...»:

Եկե՛ք համարձակությամբ ասենք, որ նա, ով բոցավառված չէ աստվածային սիրով, աստվածաբանությանը օտար է: Որքան էլ երկար և բարակ խորհի բազմաբարդ հարցերի շուրջ, որքան անհագորեն էլ կլանի գոյություն ունեցող աստվածաբանական գրքերը, եթե դա ամենն է, ինչ նա ունի, ապա դա ընդամենը ապացուցում է, որ Աստծո ճշմարտության բնական գեղեցկությունը երբևէ չի թափանցել նրա մտքի նույնիսկ ամենափոքր ճեղքի մեջ: Նա սիրով չի վառվում աստվածային ճշմարտության հանդեպ, ոչ էլ հիանում է դրա գեղեցկությամբ»[6]:

Ջոն Օուենի հորդորը վերաբերում է աստվածաբանության բոլոր բաժիններին, սակայն որքա՛ն ավելի՝ Ավետարանին՝ ամբողջ աստվածաբանության միջնաբերդին: Եկե՛ք լուրջ ձգտումով և շատ աղոթքներով ուսումնասիրենք Ավետարանը՝ ճանաչելու Քրիստոսին և վերափոխվելու Նրա Ավետարանով: Եվ եկե՛ք Ավետարանի մեր իմացությունը չափենք վերափոխմամբ, որն այն բերել է մեր կյանքեր:

6 Owen, *Biblical Theology*, 619, xlvi.

9

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԶԱՆՑ ԹԵՄԱՆ

Մարդու կյանքն այնքա՛ն կարճ է, և սակայն ուսումնասիրության արժանի այնքա՛ն առարկաներ կան՝ լեզու, գրականություն, պատմություն, մաթեմատիկա, ինչպես նաև գիտության գրեթե անթիվ ուղղությունները: Եթե նույնիսկ այս մոլորակում բնակվող միլիարդավոր մարդկանցից յուրաքանչյուրը մեծագույն հանճարի տեր լիներ և նվիրեր իրեն մեկ գիտաճյուղի ուսումնասիրությանը, դա էլ բավական չէր լինի տվյալ առարկայի մասին ամենն իմանալու համար:

Ինչպիսի՜ զարմանահրաշ տիեզերք է Աստված ստեղծել: Այդուհանդերձ, ուսումնասիրության և խորհրդածության արժանի բոլոր թեմաների մեջ կա մեկը, որն Էվերեստի նման վեր է խոյանում շրջակա բլուրներից: Դա Աստծո ճանաչողությունն է Հիսուս Քրիստոսի Ավետարանի մեջ: Չարլզ Սիմեոնը դա հետևյալ կերպ է բացատրել.

> «Բոլոր այն թեմաներից, որոնք կարող են զբաղեցնել մարդկային միտքը, չկա մեկն ավելի մեծ ու փառահեղ, քան փրկագնումն է Աստծո միածին Որդու մարմնացմամբ և մահով: Սա այն թեման է, որով անդադար համակված են երկնային զորքերը, և որին Պողոս առաքյալը միշտ վերադառնում է, ինչ էլ լինի նրա քննարկման անմիջական առարկան:

Պողոսը դժվարանում է առհասարակ չշոշափել այս թեման և միշտ անդրադառնում է դրան՝ առնվազն հպանցիկ»[1]:

Ուիլիամ Բեյթսը նույնպես հիացել է Սուրբ Գրքի անհատակ խորությամբ.

«Առաքյալն ասում է մեզ, որ մեր փրկագնման առեղծվածը պարունակում է «իմաստության և գիտության բոլոր գանձերը» (Կող. 2.3)՝ շեշտելով դրանց գերազանցությունը և առատությունը. դրանում պարփակված են շնորհքի «անիմանալի հարստությունները»: Այն անվերջանալիորեն բազմակողմ է և անընդհատական հարցերի տեղ է տալիս գերազանց հասկացողության համար: Արարված ոչ մի բան չի կարող հասնել դրա բարձրությանը կամ փոխանցել դրա խորությունը: Այս առեղծվածի շարունակական ուսումնասիրության և դրա ճանաչողության աճի հետ միտքը տևական վայելք է ապրում, որը մեծապես գերազանցում է զգայական վայելքների կարճատև բռնկումները»[2]:

Իսահակ Ամբրոսն իր «Նայելով Հիսուսին» գրքում քննարկել է նաև, թե որքան քաղցր կարող է լինել Քրիստոսին անդադար ուսումնասիրելը.

«Ես վերապրել եմ դա և կարող եմ ասել, որ [Քրիստոսն] ուսումնասիրության ամենաքաղցր թեման է: Արդյոք Նա չէ՞ «թափված յուղը», որն այնքա՛ն անուշ է բուրում և այնքա՛ն քաղցր է քիմքին, որ «բոլոր կույսերը սիրում են այն»: Արդյոք Նա չի՞ պարունակում ամբողջ փառքը, գեղեցկությունն ու

1 Simeon, *Expository Outlines*, 18:166.

2 Bates, *Harmony of the Divine Attributes*, 104.

գերազանցությունը թե՛ երկնային և թե՛ երկրային բաների: Զարմանալի չէ, որ Հիսուս Քրիստոսի մասին հատորներ են գրվել՝ տող տողի հետևից, քարոզ քարոզի հետևից, գիրք գրքի հետևից: Եվ սակայն Նա այնպիսի առեղծված է, որ այդքանով հանդերձ մենք Հիսուս Քրիստոսի մեկ կատեխիզիսի ընդամենը առաջին էջում ենք... Այո՛... Արժե շարունակել ավելի ու ավելի բացահայտել այս օրինյալ առեղծվածը: Երանի՜ թե Քրիստոսին նվիրված բոլոր ծառայություններն իրենց ընծայեին այդ առեղծվածը հեգելուն, ընթերցելուն և հասկանալուն»[3]:

Կար ժամանակ, երբ ակադեմիական միջավայրում աստվածաբանությունը համարվում էր «գիտությունների թագուհին», իսկ հիմա մարդկանց մեծ մասն անգամ պատվական հիշատակման արժանի չի համարում այն: Սա սպասելի է անկում ապրած աշխարհից, որն Աստծո դեմ թշնամություն է անում (Հովհ. 3.19-20, Հռոմ. 8.7), սակայն մեծ անակնկալ և խոր վշտի պատճառ է, որ նման անտարբերություն և անփութություն կարելի է տեսնել Աստծո ժողովրդի շրջանում՝ անգամ Նրա ծառայողների: Արդյոք մենք կհրաժարվե՞նք ադամանդներից՝ փոխարենը ընտրելով մարմարի կտորները: Արդյոք կշրջանցե՞նք ոսկին՝ փոխարենն ընտրելով քարեր հավաքելը:

Իմաստուն և ազնիվ ուսուցչի ձեռքերում «արվեստի գնահատումը» արժեքավոր գիտաճյուղ է՝ միտված կատարելագործելու և վերահասցեավորելու ուսանողի հետաքրքրությունն ու սերը հիմնական կամ ընդհանուր բաներից դեպի այն, ինչն իսկապես արժանի է հիացմունքի, խորհրդածության և քննարկման, ինչպես նաև ունի վերափոխելու, բարձրացնելու և միտքն ու հոգին բավարարելու կարողություն: Այսօր եկեղեցին և անհատ

3 Ambrose, *Looking unto Jesus*, viii.

քրիստոնյաներն ունեն «աստվածաբանության գնահատում» գիտաճյուղի ուսուցման կարիքը, հատկապես, երբ խոսքը վերաբերում է Ավետարանին: Հավատացյալների սերը և հետաքրքրությունը պետք է կատարելագործվի և վերահասցեավորվի ոչ միայն վատից դեպի լավը, այլև լավից դեպի ամենագերազանցը՝ Աստծո հայտնությունը Հիսուս Քրիստոսի Անձի և կատարած աշխատանքի միջոցով: Ինչպես Թոմաս Գուդվինն է գրել. «Չկա Ավետարանի մի ճշմարտություն, որը ոսկուց ու թանկարժեք քարերից ավելի արժեքավոր չլինի»[4]:

Այն եկեղեցին, որտեղ միայն կանոններ ու պատվիրաններ են ուսուցանվում, թերսնումից կթուլանա, սիրտը կնվաղի, հույսը կմարի, և կենսունակությունը կսպառվի: Մինչդեռ այն եկեղեցին, որը Քրիստոսով և Նրա Ավետարանով է սնվում, կգնա զորությունից զորություն, փառքից փառք, քանզի «իրենց Աստծուն ճանաչողների ժողովուրդը պիտի զորանա և գործի» (Դան. 11.32): Հավատացյալի համար Քրիստոսի և Նրա Ավետարանի ուսումնասիրությունը պետք է կյանքի գիտաճյուղ լինի, իսկ ծառայողն այն պետք է համարի իրեն վստահված ամենամեծ տնտեսվարությունը: Իրականում, ծառայողը պետք է լինի «աստվածաբանության գնահատում» գիտաճյուղի ուսուցիչ: Ամեն օր պետք է ժամեր անցկացնի՝ ուսումնասիրելով Քրիստոսի թանկարժեք քարերը Սուրբ Գրքում, որպեսզի ամեն հնարավորության դեպքում կարողանա մատուցել դրանք Աստծո ժողովրդին: Ծառայողի բոլոր ջանքերի նպատակը պետք է լինի այն, որ Աստծո ժողովուրդն իր սերն ու հետաքրքրությունն ուղղի Աստծուն և հրաժարվի աշխարհի տված կերից, քանի որ ճաշակել և տեսել է, որ Տերը քաղցր է (Սաղմ. 34.8)՝ միտքն

4 Thomas Goodwin, *The Works of Thomas Goodwin, D.D.* (Grand Rapids: Reformation Heritage Books, 2022), 4:307.

ազնվանա, հետաքրքրությունները կատարելագործվեն, բնավորությունը վերափոխվի, իսկ հոգիները կատարելապես բավարարված լինեն Քրիստոսով և Նրա Ավետարանով:

Չնայած որ մեզնից ամենակարգապահն անգամ երբեք չի հասնի նվիրման այն մակարդակին, որին Ավետարանն արժանի է, մենք պետք է փորձենք տալ մեր ամենը: Չնայած որ մեզնից ամենախորաթափանցն անգամ իր օրերը կավարտի՝ չիմանալով ամենը Քրիստոսի և Նրա Ավետարանի մասին, միևնույնն է, դա ամենաարժանավոր աշխատանքն է, որին երբևէ կարող ենք ձգտել: Չնայած որ մեր սահմանած նպատակը երբեք լիովին չենք կարողանա իրագործել՝ նույնիսկ հավիտենությունների հավիտենության մեջ, մեր անձերի վերափոխումն անգնահատելի կլինի: Ջոն Ֆլեյվելը նույնն է վերապրել.

> «Ուսումնասիրե՛ք Քրիստոսին: Ուսումնասիրե՛ք, որ ավելի լավ ճանաչեք Նրան: Քրիստոսում շատ գերազանց բաներ կան, որոնք անգամ արծվի տեսողություն ունեցող հավատացյալը դեռ չի տեսել: Որքա՜ն ափսոս, որ Քրիստոսի բաները ծածկված են Իր ժողովրդից: Ուսումնասիրե՛ք, որ ավելի խորությամբ ճանաչեք Քրիստոսին, որպեսզի Նրա համն ու Նրա ճանաչողության կենսունակ ուժը փոխանցվի Ձեր սրտերին և հույզերին: Սա է այն գիտելիքը, որում պարփակված են ամեն քաղցրություն և մխիթարություն»[5]:

Չարլզ Սպերջենը ևս ընդգծել է Հիսուս Քրիստոսին ուղղված նվիրյալ ուսումնասիրության հսկայական արժեքը.

---

5 Flavel, *Works of John Flavel*, 1:39.

«Ուսումնասիրեք Քրիստոսին. բոլոր գիտություններից ամենագերազանցը խաչված Քրիստոսի ճանաչողությունն է: Նա ամենաշատ ուսումնասիրվածն է երկնային համալսարանում, որտեղ ամենալավն են ճանաչում Քրիստոսին: Նրանք, ովքեր ամենալավն են ճանաչում Նրան, միևնույնն է, ասում են, որ Նրա սերը գերազանցում է ամեն գիտություն: Նայեք Նրան հիացմունքով, նայեք Նրան գոհունակությամբ[6]:

Հիսուս Քրիստոսը՝ որպես քավիչ զոհաբերություն, պետք է լինի ամեն հավատացյալի մտածմունքի առաջնային առարկան: Աշխարհում կան նաև այլ բաներ, որոնց մասին պետք է մտածել, քանի որ դեռևս մարմնի մեջ ենք, սակայն այս թեման պետք է կլանի մեր անձերը: Ինչպես թռչունն է ուղղվում դեպի իր բույնը, այնպես էլ մենք պետք է ուղղվենք դեպի Հիսուս Քրիստոսը, երբ մեր մտքերն այսուայնկողմ են սավառնում: Նա պետք է լինի մեր ամենօրյա խորհրդածությունների և երեկոյան վերլուծությունների թեման: Այստեղ կարող ենք ճշմարտացիորեն մեջբերել առաջին սաղմոսի խոսքերը.

«Երանելի է այն մարդը, որ ամբարիշտների խորհրդի մեջ չի գնում և մեղավորների ճանապարհի մեջ չի կանգնում և ծաղր անողների աթոռի վրա չի նստում, այլ նրա կամքը Տիրոջ օրենքի մեջ է, և ցերեկ ու գիշեր Նրա օրենքի վրա է մտածում: Եվ նա ջրերի գնացքում տնկված ծառերի պես է, որ իր պտուղը տալիս է իր ժամանակին, և նրա տերևը չի թափվում, և ամեն ինչ, որ անում է, հաջողվում է նրան»:

Աստծո Գառան մասին մտածելը կլցնի Ձեր մտքերը ողջ տիեզերքում մտածմունքի արժանի ամենակա-

6 Charles Spurgeon, *Metropolitan Tabernacle Pulpit* (Pasadena, Tex.: Pilgrim Publications, 1975), 39:482.

րևոր թեմայով: Մյուս բոլոր թեմաները մակերեսային են՝ Նրա հետ համեմատած: Ինչ են գիտությունները, եթե ոչ մարդու անտեղյակության ապացույցը: Ինչ են դասական ստեղծագործությունները, եթե ոչ բաբելոնյան խժդժաբանության լավագույն հատորները՝ Նրա ուսմունքների հետ համեմատած: Նրա ներկայության մեջ ովքե՞ր են բանաստեղծները, եթե ոչ երազողներ, ովքե՞ր են փիլիսոփաները, եթե ոչ հիմարներ: Միայն Հիսուսն է իմաստությունը, գեղեցկությունը, պերճախոսությունը և զորությունը: Խորհրդածության ոչ մի թեմա չի կարող հավասարվել թեմաներից ազնվագույնին, որն է Աստված՝ հաշտված մարդկային բնության հետ, Անսահման Աստված՝ մարմին առած և մարդկանց որդիների մեջ բնակված, Աստված՝ միավորված մարդկության հետ ու մարդկության մեղքը վեր առած՝ դրդված այնպիսի զարմանալի սիրուց, որը մղեց Նրան իջնել երկիր, օրինազանցներից մեկը համարվել ու չարչարվել մեղքի համար, որն Իրենը չէր: Օ՜, մարդի՛կ, եթե հրաշքի և սիրավեպի կարիք ունեք, ահա՛ այն: Եթե սիրո կարիք ունեք, ահա՛ այն: Եթե իմաստության կարիք ունեք, այստեղ կհայտնաբերեք ամենաջինջ իմաստությունը: Եթե երջանկություն եք փնտրում, ապա այն Աստծո Քրիստոսի մեջ է: Երջանկությունը վայելում են նրանք, ովքեր ապրում են Նրանում: Օ՜, Տե՛ր Հիսուս, Դու ամենն ես, ինչի կարիքն ունենք»:

«Քեզ գտնողները խոր, առեղծվածային և անիմանալի քաղցրություն են գտնում՝ վեր բոլոր աշխարհային հաճույքներից, նույնիսկ եթե բոլորը մեկտեղվեին»:

Կարող եք քննել երկինքն ու երկիրը, սուզվել գաղտնի առեղծվածների մեջ՝ բացահայտելու

> ամեն բանի սկիզբը և առաջին կանոնները, սակայն ավելին կգտնեք Նազովրեցի մի մարդու մեջ, Ով Աստծուն հավասար է: Նա է ողջ ճշմարտության հանրագումարն ու ամփոփումը, ամբողջ արարչության իմաստը, կյանքի հոգին, լույսերի լույսը, երկինքների երկինքը և դեռ շատ ավելին է, քան այս ամենը կամ ցանկացած այլ բառ, որ կարող եմ արտաբերել: Աշխարհում չկա այդքան ահռելի, վեհ, ջինջ, բարձրացնող ու աստվածային այլ թեմա: Թույլ տվեք նայել Տեր Հիսուսին, և աչքերս տեսած կլինեն բոլոր թանկարժեք բաները»[7]:

Ստեֆան Չարնոկը ևս իր «Աստծո գոյությունն ու Նրա հատկանիշները» աշխատության մեջ գովաբանել է Քրիստոսի ճանաչողության մեջ աճելու ձգտումը.

> «Ուսումնասիրե՛ք և հիացե՛ք Աստծո իմաստությամբ, որով Նա կատարեց փրկագնման աշխատանքը: Սա քրիստոնյաների պարտականությունն է: Մենք կանչված չենք հասկանալու փիլիսոփայության խորությունը, կանչված չենք հմտություն բանեցնելու քաղաքական կառավարման բարդությունների մեջ կամ հասկանալու ֆիզիկայի բոլոր օրենքները, սակայն կանչված ենք լինելու քրիստոնյաներ, այն է՝ աստվածային ավետարանական իմաստությունն ուսումնասիրողներ: Կան առաջնային սկզբունքներ, որոնք հարկ է սովորել, սակայն չպետք է բավարարվել լոկ դրանցով՝ առանց առաջ շարժվելու. «Ուստի Քրիստոսի մասին սկզբնական խոսքը թողնելով՝ դեպի կատարյալը գանք» (Եբր. 6.1): Պարտականությունները պետք է կատարել, և միևնույն ժամանակ գիտելիքը չպետք է անտեսել: Ավետարանի առեղծվածների, աստվածային ճշմարտությունների ներ-

7 Spurgeon, *Metropolitan Tabernacle Pulpit*, 18:391–92.

դաշնակության, աստվածային իմաստության փայլի ուսումնասիրությունը՝ համակցված Աստծո փառքի և մարդու փրկության վերջնապատկերի հետ, մեր պարտականության դրդապատճառն է, երկրպագության խթանը՝ մասնավորապես բարձրագույն և մեծագույն երկրպագության, որը տեղի է ունենալու երկնքում՝ վայելք, հիացմունք և գովաբանություն Աստծուն: Եթե չծանոթանանք աստվածային իմաստության փառքի գաղափարներին, այն արժանի չենք համարի մեր դիտարկմանը: Ավետարանն առեղծված է, և որպես առեղծված՝ այն ինչ-որ մեծ և զարմանալի բան է պարունակում, որն արժանի է մեր ամենօրյա ուսումնասիրությանը. մենք պետք է նոր հրաշալիքների թարմ աղբյուրներ գտնենք այնտեղ և հոգևոր զարմանքով դրանցով հիանալու հրավերն ընդունենք: Սա թե՛ կմեծացնի և թե՛ կբավարարի մեր ձգտումները: Ո՞վ կարող է հասնել «մարմին առած Աստծո» խորություններին: Որքա՜ն հրաշալի և մեր մարդկային մտքին որքա՜ն անհաս է այն, որ Աստծո Որդու մահով պետք է գնվեր մեղավոր արարածների երջանիկ անմահությունը, և ապստամբի փառքը պիտի ճկվեր նման մեծ Անձնավորության անարգությամբ: Մեր Միջնորդը Իր Հոր հետ ուխտ պիտի կնքեր և ստեղծվածի համար Երաշխավոր լիներ: Որքա՜ն մեծ հիացմունքի է արժանի այն, որ անկում ապրած արարածը պետք է առավելություն ստանար Նրա երջանկության զոհաբերությամբ: Որքա՜ն առեղծվածային է այն, որ Աստծո Որդին խաչի վրա պետք է խոնարհվեր մահվան առաջ, որպեսզի բավարարված լիներ արդարությունը, և հաղթականորեն վեր հառներ գերեզմանից՝ հռչակելով, որ արդարությունը բավարարված է: Նա պետք է բարձրանար երկինք, որպեսզի

բարեխոսեր մեզ համար և ի վերջո վերադառնար երկիր՝ մեզ ընդունելու և մեզ հավիտենապես փառավորելու Իր հետ միասին: Արդյոք այս ամենն արժանի է անփույթ վերաբերմունքի՞ կամ անմիտ զարմանքի՞: Այդ ո՞վ կարող է իր հասկացողությամբ թափանցել Քրիստոսի մարմնացման և ծննդի, Նրա երկու բնույթների անքակտելի միության աստվածային ուսմունքի խորքերը: Ո՞վ է, որ կարող է չափել Ավետարանի ամբողջ ծրագրի մեջ ամփոփված իմաստության հրաշալիքները: Արդյոք այն արժանի՞ չէ՝ լինելու մեր ամենօրյա խորհրդածության առարկան: Այդ դեպքում ինչպե՞ս է ստացվում, որ մենք այնքան քիչ ենք հետաքրքրված մեր միտքն այդ հրաշալիքների վրա կենտրոնացնելով, որ հազվադեպ ենք միայն համտեսում կամ մի կաթիլ խմում այդ վայելքներից: Փոխարենը զբաղված ենք մանրուքներով. մտածում ենք, թե ինչ պիտի ուտենք, որ ոճով պիտի հագնվենք, ինքներս մեզ հաճեցնում ենք ժանեկավոր կամ փետրավոր ձևավորումներով, հիանում ենք ցեցը կերած ձեռագրերով կամ ինչ-որ կիսամաշ հնությամբ,և կարծում, թե վատնում ենք մեր ժամանակը, երբ խորհրդածում և գովաբանում ենք այն, ինչով Աստված է զբաղվել, և ինչի անընդհատական արտահայտման համար նախատեսված է հավիտենությունը: Որքա՜ն հարցասեր են օրհնյալ հրեշտակները: Ինչպիսի՜ եռանդով են ամեն օր թարմացնում իրենց խորհրդածություններն այդ մասին և թարմ բավականություն ստանում դրանից՝ շարունակում սովորել, շարունակում հարցնել (Ա Պետր. 1.12): Նրանց հայացքը երբեք չի կտրվում Ողորմության Աթոռից, նրանք ջանում են տեսնել դրա հատակը և գործի դնել իրենց ամբողջ հասկացողությունը՝ ըմբռնելու դրա հրաշա-

լիքները: Արդյոք հրեշտակները, որոնք, մեզ հետ համեմատած, քիչ շահ ունեն դրանից, պետք է հմայվեն և խոնարհվեն՝ ուսումնասիրելու այն, իսկ մենք, ում համար այն նախագծվել և իրականացվել է, չպե՞տք է ավելի ջանանք՝ ուսումնասիրելու այդ թաքնված գանձը: Արդյոք այն, ինչն արժանի է հրեշտակների ուսումնասիրությանը, արժանի չէ՞ բանական մարդու ուսումնասիրությանը: Իհարկե՛, սա ջանք է պահանջում, որն արտահայտվում է «պտրտելով» [Առակ. 2.4]: Ծույլ ձեռքը չի իջնի մինչև հորի խորքը: Դրա շուրջ չխորհելն արդարացում չունի, քանի որ այն կրում է Աստծո իմաստության անունն ու բնությունը: Հին մարգարեները որոնել ու քննել են այն, երբ այն ստվերներով պատված է եղել՝ տեսնելով Իմաստության հանդերձի ծոպերը միայն [Ա Պետր. 1.10]: Արդյոք հիմա, երբ արեգակը բարձրացել է մեր հորիզոնին և գիտության լույսը փռել Աստծո այս և այլ կատարելությունների վրա, չպե՞տք է մենք որոնենք ու քննենք այն: Հրեական շաբաթը նախատեսված էր արարչության մեջ հայտնաբերված Աստծո կատարելությունները գովաբանելու համար, իսկ քրիստոնեական շաբաթը նախատեսված է փրկագնման մեջ բացահայտված Նրա կատարելությունների շուրջ խորհելու և Աստծուն օրհնելու համար: Ուստի եկե՛ք ընդունենք այն, ինչպես արժան է. թո՛ղ որ այն լինի միակ կանոնը, որով առաջնորդվում ենք: Այն արժանի է ավելի արժևորվելու, քան ցանկացած այլ խորհրդածություն: Եվ մենք երբեք չպետք է դրա մասին մտածենք առանց առաքյալի օրհներգության՝ «Միակ իմաստուն Աստծուն լինի փառք Հիսուս Քրիստոսով հավիտյան»: Թո՛ղ որ մեր դիտարկումները հանգեն զարմանքով լի ջերմ հիացմունքի և գոհունակության: Որքա՜ն սահմանափակ

կլիներ Աստծո մասին մեր պատկերացումը և մարդկային երջանկությունը, եթե Նրա իմաստությունն ու բարությունը հայտնություններով չբացվեին մեզ: Ավետարանը զարմանահրաշ լույս է. այն չպետք է արժանանա բութ անտեղյակության կամ քննվի ձանձրալի միջոցներով»[8]:

8 Stephen Charnock, *The Existence and Attributes of God* (Grand Rapids, Mich.: Baker, 1997), 1:598–600.

10

ՔԱՐՈԶՉՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԶԱՆՑ ԹԵՄԱՆ

Ավետարանին միանշանակ պետք է հավատալ: Այն պետք է ուսումնասիրել և արտացոլել մեր կյանքերում: Այդուհանդերձ, մեծ շեշտադրում է արված Ավետարանը քարոզելու վրա: Երկրային ծառայության ամենասկզբում «Հիսուսը եկավ Գալիլեա, քարոզում էր Աստծո թագավորության ավետարանը» (Մարկ. 1.14): Իսկ ծառայության ավարտին Նա ասաց Իր աշակերտներին. «Գնացեք բոլոր աշխարհը, ավետարանը քարոզեք ամեն արարածի» (Մարկ. 16.15):

Գործք առաքելոցում շատ վկայություններ կան այն մասին, որ առաքյալները և առաջին եկեղեցին հասկանում էին Տիրոջ խոսքը ու հնազանդվում էին դրան: Քարոզչությունը նրանց գերազանց ծառայությունն էր, իսկ Ավետարանը՝ նրանց գերազանց թեման: Նրանք բառացիորեն նվիրվել էին «աղոթքին և խոսքի պաշտամունքին» (Գործք 6.4): Չէին շեղվում այդ սուրբ առաջադրանքից, նույնիսկ երբ այլ բաների իրական կարիք էր առաջանում (Գործք 6.1-4), նույնիսկ, երբ դա հակառակ էր մարդկային օրենքներին (Գործք 4.18-20), երբ դրա պատճառով խարազանվում էին (Գործք 5.40), ծեծվում (Գործք 16.22-23), կապվում (Գործք 16.24), շղթայվում (Գործք 12.6–7, 16.26, 21.33, 22.29, 26.29, 28.20), քարկոծվում (Գործք 7.58-60, 14.19) և սրով սպանվում (Գործք 12.2):

Ավետարանի քարոզչության առաջնայնությունը շարունակում է բացահայտվել եկեղեցու ամենանշանավոր

միսիոներ Պողոս առաքյալի կողմից: Ավետարանն էր այն ուղերձը, որը նա մատուցում էր որպես առաջնային կարևորության պատգամ (Ա Կորնթ. 15.3): Անկախ այն բանից, թե ինչպիսին էին մշակութային պահանջները, ինչպիսին էր մարդկանց մտածելակերպը, Պողոսը չէր տրվում նրանց խնդրանքներին՝ փոխարենը տալով նրանց Աստծուց նշանակված միակ բուժումը: Նա Կորնթոսի եկեղեցուն գրել է. «Հրեաները նշան են ուզում, և հույներն իմաստություն են խնդրում. մենք էլ քարոզում ենք խաչյալ Քրիստոսը... Աստծո զորություն և Աստծո իմաստություն» (Ա Կորնթ. 1.22-24): Սեմուել Դևիսը գրել է.

> ««Մենք քարոզում ենք խաչյալ Քրիստոսին»՝ Քրիստոսի չարչարանքները, որոնց սարսափելի վախճանը Նրա խաչելությունն էր, դրանց անհրաժեշտությունը, ծրագիրն ու հետևանքները: Եվ այդ ամենով քարոզում ենք փրկության ճանապարհը, որը բացվել է մեղավոր աշխարհի համար: Սա է մեր քարոզչության հիմնական առարկան: Այս ամենը մարդկությանը սովորեցնելը մեր ծառայության առջև դրված մեծագույն խնդիրն է և մեր կյանքերի անխոնջ աշխատանքը: Հեշտությամբ կարող ենք առավել հաճելի և հանրամատչելի թեմաներ ընտրել, որոնք կցուցադրեն մեր ուսանած լինելն ու կարողությունները և լույս կսփռեն մեզ վրա՝ որպես մտավորականների և ընտիր հռետորների: Սակայն մեր հանձնարարականը՝ որպես խաչյալ Քրիստոսի ծառայողների, կապում է մեզ այս թեմային, իսկ աշխարհը մասնավորապես դրա կարիքն ունի»[1]:

Ահա այսպիսին էր Ավետարանի գերազանցությունը Պողոսի թեմաների ցանկում, որոնք նա քարոզում էր

1 Davies, *Sermons of Rev. Samuel Davies*, 1:621.

Կորնթոսի եկեղեցում. «Որովհետև միտքս չէի դրած մի ուրիշ բան գիտենալ ձեր մեջ, բայց միայն Հիսուս Քրիստոսին և այն էլ խաչվածին» (Ա Կորնթ. 2.2): Սա չի նշանակում, որ Պողոսը չէր խոսում քրիստոնեական կյանքի այլ թեմաներից: Սակայն նա Ավետարանի ուղերձը համարում էր այն հիմքը, որի վրա կառուցվում էր եկեղեցին: Եթե Ավետարանի մասին եկեղեցու պատկերացումը նույնիսկ մի փոքր սխալական լիներ, ամբողջ շինությունը կքանդվեր (Ա Կորնթ. 3.9-11): Հետևաբար Ավետարանը Պողոսի սրտի գանձն էր, նրա բոլոր ուսումնասիրությունների առանցքային կետը և նրա քարոզչության գլխավոր թեման: Դևիսը շարունակում է.

> «Առաքյալի համար [Ավետարանի քարոզչությունը] հազվադեպ զբաղմունք կամ հապճեպ ու երերուն նպատակ չէր, նա մտադրված էր դա անում: «Միտքս չէի դրած,- ասում է նա,- մի ուրիշ բան գիտենալ ձեր մեջ, բայց միայն Հիսուս Քրիստոսին և այն էլ խաչվածին» (Ա Կորնթ. 2.2): Այս թեման կլանել էր նրա ամբողջ միտքը. նա այնքան շատ էր դրա շուրջ խորհում, կարծես ուրիշ ոչինչ չգիտեր, կարծես ուրիշ ոչինչ արժան չէր իմացվելու: Եվ, իրականում, նա բացեիբաց արհամարհում ու անտեսում էր ցանկացած այլ գիտելիք՝ այս գիտելիքի համեմատությամբ. «Եվ հենց ամեն բաներ էլ վնաս եմ համարում իմ Տեր Հիսուս Քրիստոսի գերազանց գիտության համար» (Փիլիպպ. 3.8): Քրիստոսի խաչելությունը, որը Նրա կրած ստորացումներից ամենանվաստացուցիչն էր, Պողոսի պարծանքի առարկան էր, ու նա սարսափում էր որևէ այլ բանով պարծենալու մտքից: «Ինձ քավ լիցի պարծենալ,- ասում է նա,- բայց միայն մեր Տեր Հիսուս Քրիստոսի խաչով» (Գաղ. 6.14): Կարճ ասած՝ նա՝ որպես քրիս-

տոնյա և որպես առաքյալ, նայում էր խաչին և դրանում տեսնում իր կատարելագործումը՝ լինելու Քրիստոսի մշտական աշակերտը և եռանդուն ու անխոնջ քարոզիչը»[2]:

Դ. Մարտին Լլոյդ-Ջոնսը ևս սովորեցնում է, թե ինչպիսի կենսական կարևորություն ունի խաչի վրա Քրիստոսի կատարած գործի մասին քարոզելը.

«Խաչի մասին քարոզչությունը, խաչի վրա Տեր Հիսուս Քրիստոսի մահվան մասին քարոզչությունը քրիստոնեական Ավետարանի և քրիստոնեական ուղերձի կենտրոնն ու զարկերակն է: Կարծում եմ՝ բոլորդ կհամաձայնեք, որ սա է այն անխուսափելի եզրակացությունը, որը կարելի է կայացնել Գաղատացիս 6.14-ում գրված Պողոսի խոսքերից և նրանից, թե ինչով է Պողոսն ընտրում պարծենալ: Խաչը և խաչի վրա մեր Տեր Հիսուս Քրիստոսի մահն այն կենտրոնական բանն է՝ ամենից կարևորը, որը Պողոսն ընտրում է: Եթե քարոզեք Տեր Հիսուս Քրիստոսի վարդապետությունը միայն, ոչ միայն չեք լուծի մարդկության խնդիրը, այլև ինչ-որ առումով ավելի կսաստկացնեք այն: Այդպիսով Դուք կքարոզեք բացարձակ դատապարտություն, քանզի ոչ ոք երբեք չի կարողանա կատարել այն: Ուստի նրանք (այսինքն՝ առաքյալները) չէին քարոզում Նրա վարդապետությունը: Պողոսը չի ասում. «Ինձ քավ լիցի պարծենալ, բայց միայն մեր Տեր Հիսուս Քրիստոսի վարդապետությամբ»: Նա նման բան չի ասում: Հարցը Քրիստոսի վարդապետությունը չէր և ոչ էլ Քրիստոսի օրինակը: Դրանց մասին հաճախ է քարոզվում, այնպես չէ՞: «Ո՞րն է քրիստոնեության ուղերձը: Նմանությունը Քրիստոսին: Կարդացեք

2 Davies, *Sermons of Rev. Samuel Davies*, 1:621–22.

Ավետարանները և կտեսնեք, թե ինչպիսին էր Նա,- ասում են նրանք:- Այդպես էլ պետք է ապրի մեզնից յուրաքանչյուրը: Ուստի եկե՛ք որոշում կայացնենք և անենք դա: Եկե՛ք Քրիստոսին նմանվելու և Նրա նման ապրելու որոշում կայացնենք»: Եվս մեկ անգամ կասեմ, որ դա չէ քրիստոնեական ուղերձի կենտրոնն ու զարկերակը: Բանն ի վերջո հասնում է դրան, սակայն դրանով չի դրվում սկիզբը: Դա չէ առաջին բանը, որ պետք է քարոզվի: Առաքյալներն առաջինն այդ մասին չէին քարոզում, ոչ էլ մատնանշում էին այն, որ Տերն օրինակ է թողել: Նրանք քարոզում էին Նրա մահը խաչի վրա և այդ իրողության նշանակությունը»[3]:

Օ՜, հավատացյա՛լ ընկերներ, Ավետարանը քրիստոնեական հավատի մեծ գանձն է, որը մեզ է վստահվել (Բ Կորնթ. 4.7, Բ Տիմ. 1.14): Մենք պետք է նվիրվենք դրա անսպառ գեղեցկությունն ու զորությունը բացահայտելուն և քարոզենք դա որպես ամենամեծ և ամենալուրջ ղեկավարության ներքո գտնվողներ: Ինչպես Պողոսն է ասել Տիմոթեոսին նահատակվելուց կարճ ժամանակ առաջ. «Արդ այս վկայությունը դնում եմ Աստծո և Տեր Հիսուս Քրիստոսի առաջ, որ դատելու է կենդանիներին և մեռելներին Իր հայտնությունում ու թագավորությունում. Խո՛սքը քարոզիր» (Բ Տիմ. 4.1-2):

Աշխարհի ամենամեծ կարիքը Հիսուս Քրիստոսի Ավետարանի քարոզչությունն է. «Որովհետև Աստծո զորությունն է՝ փրկելու համար ամեն հավատացողին, առաջ՝ հրեային և հետո՝ հույնին» (Հռոմ. 1.16): Եկեղեցու ամենամեծ կարիքը Հիսուս Քրիստոսի Ավետարանի շարունակական և խորացող բացատրությունն

3 David Martyn Lloyd-Jones, *The Cross: God's Way of Salvation* (Wheaton, Ill.: Crossway, 1986), 18–19, 20–21.

ու կիրառությունն է, քանզի այն «աստվածապաշտության խորհուրդն» է՝ գլխավոր հայտնությունը, որը հանգեցնում է ճշմարիտ բարեպաշտության (Ա Տիմ. 3.16): Պողոս առաքյալն էր հիմնադրել Կորնթոսի եկեղեցին: Այդուհանդերձ, նրանց ուղղված իր առաջին գրավոր նամակում նա ասում է. «Իմացնում եմ ձեզ, եղբայրնե՛ր, այն ավետարանը, որ ավետարանեցի ձեզ, որն էլ ընդունեցիք, որի մեջ էլ կանգնած եք» (Ա Կորնթ. 15.1): Պողոսի մշտական ցանկությունն Ավետարանի անհատակ հարստությունը եկեղեցուն քարոզելն էր, որպեսզի վերջինս մեծ վստահությամբ կանգնած լիներ Քրիստոսի մեջ և աճեր Նրա նմանության մեջ: Առանց Ավետարանի փրկության թեման կամ քրիստոնեական կյանքը չեն կարող պատշաճ հասկացվել և մեկնաբանվել: Հետևաբար մենք պետք է նվիրվենք այս ճշմարտությունների անընդհատական բացահայտմանը և դրանց հավատարիմ քարոզչությանը: Ինչպես Ռիչարդ Սիբեսն է գրել.

> «Քարոզչության թեման հատկապես Հիսուս Քրիստոսն է: Սա է այն ժայռը, որի վրա կառուցվում է եկեղեցին: Քրիստոսը՝ Նրա բնույթը, հեղինակությունն ու դրա օգուտները, մեր պարտականությունները Նրա նկատմամբ և հավատը՝ այն գործիքը, որով ստանում ենք Նրանից ամենը, պետք է լինեն մեր ուսմունքի առարկան:
>
> Եթե քարոզենք օրենքը և բացահայտենք մարդու այլասերվածությունը, ապա միայն այն նպատակով, որ Ավետարանն ավելի ազատ մուտք ունենա դեպի մարդկանց հոգիները: Եթե պարտադրենք սուրբ պարտականությունները, ապա այն նպատակով, որ Տեր Հիսուսին արժան ապրեք: Բոլոր ուսմունքները ենթակա են Քրիստոսի Ավետարանին՝ կամ

ճանապարհ պատրաստելու, ինչպես Հովհաննես Մկրտիչն արեց, և հնազանդեցնելու բոլոր գոռոզ մտքերը, կա՛մ օգնելու մեզ ապրելու այն շնորհքին համապատասխան, որը ստացել ենք Նրանից:

Կյանքի հացը պետք է կոտրվի. զոհաբերությունը պետք է դիահատվի և բաց դրվի. Քրիստոսում պարփակված հարստությունը՝ ընդհուպ Նրա «անհատակ հարստությունը», պետք է բացահայտվի: «Աստծո Որդին» պետք է քարոզվի բոլորին: Ուստի Աստված, Ով կարգել է, որ մենք փրկված լինենք Քրիստոսով, կարգել է նաև, որ Տեր Հիսուսին և Նրա շնորհքի ու փառքի գանձերը քարոզենք ու բաց ներկայացնենք»[4]:

4 Richard Sibbes, *The Works of Richard Sibbes, D.D.* (Edinburgh: Banner of Truth, 2017), 4:115–16.

11

ՊԱՐԾԱՆՔԻ ԳԵՐԱԶԱՆՑ ԹԵՄԱՆ

Ավետարանն ու խաչը քրիստոնյայի պարծանքի գերազանց հիմքն են: Բայցևայնպես, «գերազանց» բառը շատ թույլ է այս համատեքստում: Խաչն այնքա՛ն ավելին է: Այն քրիստոնյայի պարծանքի բացառիկ հիմքն է: Սա շատ լավ բացատրված է Գաղատացիս 6.14-րդ խոսքում, որտեղ Պողոսը գրել է. «Սակայն ինձ քավ լիցի պարծենալ, բայց միայն մեր Տեր Հիսուս Քրիստոսի խաչով. որ նրանով աշխարհն ինձ համար խաչված է, և ես էլ՝ աշխարհի»:

Այս խոսքում «պարծենալ» բառը թարգմանված է հունարեն «kaucháomai» բայից, որ նշանակում է «մեծապես հաճենալ, հրճվել, հպարտանալ կամ գովաբանել»: Ըստ Յոհաննես Լուուի և Յուջին Նիդայի բացատրության՝ այն նշանակում է «արտահայտել վստահության արտասովոր բարձր աստիճան՝ ուղղված ինչ-որ մեկին կամ ինչ-որ բանի, որն արժանի է բացառիկ ուշադրության»[1]: Ուստի մեր Տեր Հիսուս Քրիստոսի խաչով պարծենալը նույնն է, թե մեր փոխարեն Նրա քավիչ մահը դարձնել մեր վստահության և հպարտության առարկան՝ փրկության մեր միակ հույսը և մեր քարոզչության մեծագույն թեման: Սա նշանակում է խաչյալ Քրիստոսին վստահել որպես «Աստծուց մեզ համար եղած իմաստություն և արդարություն և սրբություն և փրկություն»

1 Johannes P. Louw and Eugene A. Nida, *Greek-English Lexicon of the New Testament: Based on Semantic Domains* (New York: United Bible Societies, 1989), 1:431.

(Ա Կորնթ. 1.30) և քարոզել Նրա մասին՝ որպես «մեր մեջ եղած հույսի համար պատճառ» (Ա Պետր. 3.15): Ջ. Չ. Ռայլը գրել է.

> «Հնարավոր չէ գերագնահատել Քրիստոսի քավություն պարգևող մահը: Սա Աստծո Խոսքի այն գլխավոր փաստն է, որին սևեռված պետք է լինեն մեր հոգու աչքերը: Եթե Նրա արյունը չթափվեր, չէր լինի մեղքերի թողություն: Սա է այն առանցքային ճշմարտությունը, որի շուրջ կառուցվում է ամբողջ քրիստոնեական համակարգը: Ավետարանն առանց դրա կլիներ կամար առանց հիմնաքարի, գեղեցիկ շինություն առանց հիմքի, արեգակնային համակարգ առանց արեգակի: Եկեք արժանի տեղ տանք մեր Տիրոջ մարմնացմանը, Նրա օրինակին, Նրա հրաշքներին և առակներին, Նրա գործերին և խոսքերին, սակայն ամենից ավելի եկեք արժանի տեղ տանք Նրա մահվանը: Եկեք ցնծանք Նրա երկրորդ գալստյան և հազարամյա թագավորության հույսով, սակայն եկեք ավելի շատ չխորհենք այս օրինյալ ճշմարտությունների մասին, քան խաչի վրա կատարված քավության մասին: Ի վերջո, Սուրբ Գրքի առաջատար ճշմարտությունն այն է, որ «Քրիստոսը մահացավ մեր մեղքերի համար»: Եկեք ամեն օր վերադառնանք այս ճշմարտությանը: Եկեք ամեն օր սրանով սնենք մեր հոգիները: Ոմանք հին հույների նման գուցե ծաղրեն այս վարդապետությունը և այն «հիմարություն» անվանեն: Սակայն եկեք երբևէ չամաչենք Պողոսի հետ միասին ասելուց՝ «Ինձ քավ լիցի պարծենալ, բայց միայն մեր Տեր Հիսուս Քրիստոսի խաչով»[2]:

2 J. C. Ryle, *Expository Thoughts on Matthew* (Carlisle, Pa.: Banner of Truth, 2015), 347.

Գաղատացիս 6.14-ում Պողոս առաքյալը խստագույնս արտահայտվում է այն մասին, թե որքան է ինքը գարշում կամ զզվում որևէ բան խաչից վեր կամ դրան հավասար դասելուց՝ «քա́վ լիցի» (հունարենում՝ *emoì dè mē génoito*): Նման արտահայտություն նա նաև անում է Հռոմեացիս 6.1-2-րդ խոսքերում՝ արտահայտելու իր նողկանքն այն պնդման հանդեպ, թե հավատացյալը պետք է տրվի մեղքին, որպեսզի շնորհքն ավելի տեսանելի լինի՝ «…Մնա՞նք մեղքի մեջ… Քա́վ լիցի»: Տվյալ արտահայտության խստությունը փոխանցելու համար Աստվածաշնչի «King James» տարբերակը երկու խոսքերում էլ թարգմանում է դա «Աստված արգելի՛». կարծես Պողոսն Աստծուն վկայակոչեր կամ երդում տար՝ մերժելու խաչի հետ ցանկացած մրցակցություն: «Բայց միայն» արտահայտությունը (հունարենում՝ *ei mē*) ևս ծառայում է՝ շեշտելու քրիստոնյայի կյանքում խաչի անառարկելի գերազանցությունը: Խաչը բոլոր ճշմարտություններից և թեմաներից պարզապես մեկը չէ. այն ամենից գերազանցն է: Լլոյդ Ջոնսն այդ մասին գրել է.

> «Քրիստոնյան ոչ միայն պարծենում է խաչով, այլև պարծենում է միայն խաչով: Ոչ մի այլ բանով չի պարծենում: Լսե՛ք, թե ինչ է ասել Իսահակ Ուոթսը.
>
> «Տերն արգելի՛, որ խնայեմ պարծանքս Քրիստոսի՝ իմ Աստծո մահով»:
>
> Խաչը բացառիկ է, ինչը նշանակում է, որ քրիստոնյայի համար այն պատմության կարևորագույն կետն է՝ կարևորագույն իրադարձությունը, որ երբևէ տեղի է ունեցել: Սա նշանակում է, որ այն իր կարևորությամբ համեմատելի չէ որևէ այլ բանի հետ: Սա նշանակում է, որ ամեն բան սրանից է կախված, սա ամենն է քրիստոնյայի համար, և սրա շնորհիվ

է, որ նա այն է, ինչ կա: Քրիստոնյան պարծենում է խաչով»[3]:

Մեթյու Հենրին ևս խոսել է խաչի գերազանցության մասին.

«Հրեաները սայթաքեցին այս [խաչի] վրա, հույներն այն հիմարություն համարեցին, հուդաիզմի ուսուցիչները, որոնք կարծում էին, թե ընդունել էին քրիստոնեությունը, այնքան էին ամաչում դրանից, որ ցանկանալով հաճոյանալ հրեաներին և շրջանցել նրանց կողմից հալածանքները՝ միախառնում էին Մովսեսի օրենքին հետևելը Քրիստոսին ուղղված հավատքի հետ՝ որպես փրկության անհրաժեշտ տարրի: Մինչդեռ Պողոսը բոլորովին այլ կարծիքի էր. նա այնքան հեռու էր Քրիստոսի խաչից գայթակղվելուց, դրանից ամաչելուց կամ այն սեփականացնելու վախից, որ պարծենում էր դրանով: Այո՛, նա ուրիշ բան չէր փափագում և գերագույն զզվանքով մերժում էր որևէ բան իր պարծանքի առարկայի՝ խաչի հետ համեմատելու միտքը՝ «Աստված արգելի՛»: Սա էր որպես քրիստոնյա նրա բոլոր հույսերի հիմքը. սա էր այն ուսմունքը, որը, որպես առաքյալ, նա որոշել էր քարոզել»[4]:

Չարլզ Սպերջենը հարցրել է.

«Ինչո՞ւ էր Պողոսը պարծենում խաչով: Պատճառն այն չէր, որ նա պարծանքի այլ առարկա չուներ: Ինչպես ցույց տվեցի Ձեզ, նա պարծանքի առարկաների լայն ընտրություն ուներ, եթե կամենար դրանցից օգտվել: Այդուհանդերձ, նա ուներ խաչով պարծենալու լուրջ և միտումնավոր որոշում: Նա արծվի տեսո-

3 Lloyd-Jones, *Cross*, 54–55.

4 Henry, *Matthew Henry's Commentary*, 6:682–83.

ղությամբ ուսումնասիրել էր թեմաների լայն բազմազանություն, հաշվարկել էր դրանց արժեքը. գիտեր՝ ինչ էր արել, և գիտեր՝ ինչու էր արել: Նա խորհրդածելու արվեստի վարպետ էր: Որպես մետաֆիզիկ՝ նրա նմանը չկար, որպես տրամաբան՝ նրան գերազանցող չկար: Առաջին քրիստոնեական եկեղեցում նա գրեթե միակն էր, ով մտքի վարպետ էր: Ուրիշները գուցե ավելի բանաստեղծական են եղել կամ ավելի պարզ, սակայն որևէ մեկը նրանից ավելի խորամիտ կամ փաստարկված չի եղել: Պողոսը հստակ և հաստատակամորեն ամեն բան մի կողմ է դնում և իր ամբողջ կյանքի ընթացքում վճռականորեն հռչակում՝ «Խաչով եմ պարծենում»: Նա սա անում է՝ բացառելով մյուս բոլոր բաները. «Քա՛վ լիցի, թե պարծենամ այլ բանով, բայց միայն խաչով»: Շատ այլ արժեքավոր բաներ կան, սակայն խաչի համեմատությամբ նա ամեն բան մի կողմ է դնում: Նա իր հիմնական ասելիքը չի հյուսում անգամ այլ կարևոր հոգևոր ուսմունքների, ո՛չ էլ որևէ խրատական կամ բարեպաշտական կանոնի շուրջ: Ո՛չ, խա՛չն է առջևում: Այս համաստեղությունը գլխավորն է Պողոսի երկնքում: Նա հավատարմորեն խաչն է ընտրում. չնայած որ Աստվածաշնչի անգլերեն տարբերակը դա այդքան պարզ չի արտահայտում, ես չեմ կասկածում, որ Պողոսը կօգտագործեր նման բացատրական բառապաշար և Աստծուն կկանչեր՝ վկա լինելու, որ ինքն ուրանում է պարծանքի մյուս բոլոր պատճառները և պարծենում միայն քավություն պարգևող զոհով:

«Արգելի՛ր, Տե՛ր, որ պարծենամ որևէ այլ բանով, բացի միայն Քրիստոսի մահով, ի՛մ Աստված: Բոլոր ունայն բաները, որոնք ինձ համար ամենադուրեկանն են, զոհում եմ Նրա արյանը»:

> Նա կկանչեր Աստծուն՝ վկա լինելու, որ ինքն ուրիշ նպատակ չունի՝ բացի Քրիստոսի խաչին փառք բերելուց: Երբ մտածում եմ այս մասին, պատրաստ եմ Պողոսին ասելու՝ «Ամեն»»[5]:

Կարևոր է նկատի առնել, որ երբ Պողոսն ասում է, որ ինքն այլ բանով չի պարծենում, բայց միայն խաչով, նա չի արժեզրկում Սուրբ Գրքի մնացած մասը, այլ հաստատում է Սուրբ Գրքի գլխավոր նպատակը: Հովհաննես 5.39-րդ խոսքում Հիսուսն ասում է հրեաներին. «Քննե՛ք գրքերը որ դուք կարծում եք, թե նրանցով ունեք հավիտենական կյանք, և նրանք են, որ Ինձ համար վկայում են»: Ամբողջ Սուրբ Գիրքը մատնացույց է անում խաչը և Փրկչին, Ով մահացել է խաչի վրա՝ որպես մեր փրկության սկզբնաղբյուր: Առանց խաչի Սուրբ Գիրքն իր ամբողջությամբ պարզապես կդատապարտեր մեզ: Ո՞վ է, որ հնազանդվել է Աստծո օրենքին: Ո՞վ է, որ հետևել է Նրա պատվիրաններին և հավատարմորեն պահել Նրա իմաստությունը: Ո՞վ է, որ ապրել է Քրիստոսի նման և այդ նմանությամբ փրկություն ձեռք բերել: Սուրբ Գիրքն ասում է՝ «Ո՛չ ոք»: Սաղմոսերգուն գրել է. «Տե՛ր, եթե Դու անօրինությունները համարես, ո՞վ կմնա, Տե՛ր» (Սաղմ. 130.3) և «Դատաստանի մի՛ մտիր Քո ծառայի հետ, որովհետև ոչ մի կենդանի չի արդարանա Քո առաջ» (Սաղմ. 143.2): Սողոմոն Իմաստունը սգացել է այն, որ. «…Երկրի վրա արդար մարդ չկա, որ բարի գործի և չմեղանչի» (Ժող. 7.20): Պողոս առաքյալը վերջնականացրել է մեր դատապարտությունը հետևյալ խոսքերով. «Որովհետև ամենքը մեղանչեցին և Աստծո փառքից պակասված են» (Հռոմ. 3.23): Հետևաբար մեր հնազանդությունն օրենքին, մեր ընդօրինակումը Քրիստոսին, մեր ժուժկալությունը կամ Աստծո հանդեպ մեր նվիրումը չէ, որ գերակայում են: Մեր փրկությունը

5 Spurgeon, *Metropolitan Tabernacle Pulpit*, 31:497.

նրանում է, ինչ Աստված է արել մեր փոխարեն Իր սիրելի Որդու Խաչի միջոցով: Այս պատճառով է, որ Լլոյդ Ջոնսը գրել է.

> «Առաքյալը չի ասում՝ «Քավ լիցի, թե ես պարծենամ այլ բանով, բայց միայն Լեռան քարոզով կամ Տեր Հիսուս Քրիստոսի վարդապետությամբ»: Քրիստոսի վարդապետությունը դատապարտում էր բոլորին, այդ թվում փարիսեցիներին, և երևան էր բերում բոլորի լիակատար և անհույս ձախողումը: Ո՛չ, այլ Պողոսը պարծենում է խաչով, քանի որ խաչով և խաչի շնորհիվ է ամեն բան հնարավոր դառնում, և մեզ համար բացվում են քրիստոնեական կյանքի օրհնությունները: Խաչն է դուռը, որը տանում է դեպի բոլոր օրհնությունները: Առանց դրա ոչինչ չկա: Առանց խաչի և դրա նշանակության մենք Աստծուց որևէ օրհնություն չունենք, մինչդեռ խաչը բացում է ճանապարհը փառավոր Աստծո անսահման օրհնությունների համար»[6]:

Սիրելի՛ ընթերցող, Դուք, որ դավանում եք հավատք առ Քրիստոսը, ըմբռնո՞ւմ եք Պողոսի ապավինությունը խաչին: Միանո՞ւմ եք նրա վճռականությանը պարծենալ միայն դրանով: Արդյո՞ք խաչի մեջ եք գտնում Ձեր արդարության, սրբագործման և փրկագնման միակ աղբյուրը (Ա Կորնթ. 1.30): Պետք է միշտ հիշենք, որ ճշմարիտ քրիստոնյայի նշանն այն է, որ նա «[պարծենում է] Քրիստոս Հիսուսով և մարմնի վրա վստահություն չունի» (Փիլիպպ. 3.3): Արդյոք սա Ձեր մասի՞ն է: Լլոյդ-Ջոնսը շարունակում է.

> «Քրիստոնյան այն մարդն է, ով պարծենում է խաչով: Եթե խաչը Ձեզ համար կենտրոնական տեղ չի զբաղեցնում, ապա Դուք քրիստոնյա չեք: Կա-

6 Lloyd-Jones, *Cross*, 177–78.

> րող եք ասել, թե հիանում եք Հիսուսով կամ Նրա վարդապետությամբ, սակայն դա Ձեզ քրիստոնյա չի դարձնում: Կարող եք անել դա և լինել մահմեդական: Կարող եք անել դա և շարունակել մնալ լոկ բարոյախնդիր: Ո՛չ, խա՛չը կենսական կարևորություն ունի, խաչը կենտրոնական տեղ է զբաղեցնում. ամեն բան դրանից է բխում[7]:
>
> Թանկագի՛ն բարեկամ, սրանից ավելի կարևոր հարց չի կարող լինել: Ի՞նչ է այս խաչն արել Ձեզ հետ: Այս հարցին առերեսվելիս և սրա մասին խորհելիս ի՞նչ եզրահանգման եք գալիս: Պատասխանը հետևյալ երկուսից մեկն է՝ այն Ձեզ համար կա՛մ անպատվություն է, կա՛մ պարծանք: Արդյոք մենք հստակ կողմնորոշվա՞ծ ենք մեր դիրքորոշման մեջ: Հստակ գիտե՞նք, թե որ կողմում ենք կանգնած: Գուցե ոմանք ասեն. «Այն ինձ համար միանշանակ անպատվություն չէ, սակայն վախենամ՝ չեմ կարող ասել, թե պարծենում եմ դրանով»: Դե, բարեկա՛մս, Դուք անհնար իրավիճակում եք, քանզի այս երկուսն են միակ հնարավոր դիրքորոշումները՝ անպատվություն կամ պարծանք»[8]:

Ըստ Աստծո Հոգուց ներշնչված Սուրբ Գրքի և բոլոր անկեղծ քրիստոնյաների ընդհանուր դավանանքի՝ մենք պետք է պարծենանք միայն Քրիստոսի խաչով: Այն պետք է լինի մեր աստվածաբանության, մեր հավատքի և մեր քարոզչության ալֆան, օմեգան և բոլոր միջանկյալ տառերը: Սա երբեք չի կարելի կասկածի տակ առնել կամ վիճարկել: Սակայն ինչպե՞ս կարող ենք վստահ լինել, որ իսկապես պարծենում ենք միայն Քրիստոսով և Նրա խաչով: Ինչպե՞ս կարող ենք խուսափել այս հարցի շուրջ

7 Lloyd-Jones, *Cross*, 199.

8 Lloyd-Jones, *Cross*, 41.

ինքնախաբեությունից: Ի պատասխան այս հարցի՝ Չարլզ Սպերջենը գրել է.

> «Ինչպե՞ս ապացուցենք, որ իսկապես պարծենում ենք Քրիստոսի խաչով: *Դա կարող ենք ապացուցել՝ խաչին վստահելով:* Մեր վստահությունը պետք է լինի միայն քավության վրա, այլապես դատարկ կլինեն այն խոսքերը, թե իբր պարծենում ենք դրանով: Հաջորդը՝ պետք է ապացուցենք դա՝ վարդապետությունն ամուր պահելով, երբ ուրիշները վիճարկում են այն: Մենք պետք է վստահ լինենք, որ Քրիստոսը զոհվել է մեր փոխարեն. ուրիշները թո՛ղ ասեն, ինչ կամենում են:
>
> *Մենք պետք է ապացուցենք դա՝ մեծ եռանդով և մեր կարողությունների չափով առավելագույնս տարածելով այն:* Մենք պետք է, որքան կարող ենք, բարի լուրը փոխանցենք ուրիշներին, որպեսզի ով որ հավատա, հավիտենական կյանք ունենա: Սակայն ոմանք ծառայության են կանչված, և թո՛ւյլ տվեք ասել նրանց, որ մենք պետք է ապացուցենք, որ պարծենում ենք խաչով՝ պատրաստ լինելով տառապելու հանուն դրա: Լավ կլիներ, որ ծառայության կանչված ցանկացած անձ օրինակ վերցներ Սուրբ Պողոսի տաճարի գմբեթից: Այնտեղ պատկերված է խաչը՝ գլոբուսից վեր: Դուք էլ այսուհետև Ձեր բոլոր հաշվարկներում խաչն աշխարհից վեր պիտի դասեք: Հիսուսի մասին քարոզելը և հոգիներ փրկելը պետք է լինեն խաչով պարծենալու միջոցը և ոչ թե գումար աշխատելը կամ մարդկանց ծափահարություններին արժանանալը:
>
> *Այդուհանդերձ, խաչով պարծենալու առաջնային միջոցը դրա մասին շարունակաբար քարոզելն*

է: Սրանից ավելի օգտակար ի՞նչ կարող եմ ասել երիտասարդներին, որոնք նոր պետք է մուտք գործեն ծառայության մեջ: Կառչե՛ք խաչից: Կառչե՛ք խաչից: Մի՛շտ քարոզեք Հիսուս Քրիստոսին: Մի՛շտ քարոզեք Հիսուս Քրիստոսին: Կարծում եմ, ոչ մի քարոզ չպետք է լինի առանց հավատքով տրվող փրկության մասին վարդապետության: Ես ոչ մի զրույց երբեք չէի ավարտի առանց Հիսուսին հավատալու և Նրանով ապրելու մասին թեկուզև ինչ-որ բան ասելու: Օ՜, եթե միայն մեր լեզուները չխոսեին այլ բանից, այլ միայն Հիսուսից: Օ՜, եթե միայն մենք նման լինեինք Ռութֆորդին, ով, ասում են, ծվծվան ձայն ուներ բոլոր թեմաների շուրջ խոսելիս, սակայն երբ սկսում էր խոսել Քրիստոսից, այդ փոքրիկ մարդուկը հասակով վեր էր խոյանում և թավ ձայնով էր խոսում, այնպես, որ դուքսը, որ նրա ունկնդիրներից էր, բացականչել է. «Բարեկա՛մս, ճիշտ նվագալարի ես դիպչում»: Իհարկե, Հիսուս Քրիստոսի զարմանալի սերն է այն թեման, որը պետք է ոգեշնչի ամեն թմրածի, հարություն տա ամեն մեռածի»[9]:

Այս գլուխը կեզրափակեմ խիստ և անկեղծ հորդորով ո՛չ միայն խաչը պահելու մեր աստվածաբանության առաջնագծում և կենտրոնում, այլև մեր ամբողջ կյանքը նվիրելու խաչի ուսումնասիրությանը, խորհրդածությանը և քարոզչությանը: Այն Աստծո գերազանց հայտնությունն է, փրկության և սրբագործման գերազանց ուղերձը, ուսումնասիրության գերազանց առարկան և ամեն տեսակի քարոզչության գերազանց թեման: Հրաշալի և կարևոր շատ թեմաներ կան, որոնց ընթերցողը կարող է ժամանակ, մտավոր կարողություն և ուժ տրամադրել, սա-

9 Spurgeon, *Metropolitan Tabernacle Pulpit*, 61:140–41.

կայն Գողգոթայի թեման վեր է դրանցից ամենից: Լլոյդ-Ջոնսը ի խորոց սրտի համաձայն է սրա հետ.

> «Եկեք կրկին նայենք խաչին: Եկեք ևս մեկ անգամ ուսումնասիրենք այն: Եթե Պողոս առաքյալի նման մարդը պարծենում է խաչով, ապա Դուք, բարեկա՛մս, կարող եք վստահ լինել, որ այն ամբողջ տիեզերքի ամենամեծ, ամենախոր ու ամենախորիմաստ բանն է: Խաչին հպանցիկ հայացք նետելը բավական չէ: Դարեր շարունակ սրբերն ուսումնասիրել են այն, նայել դրան, հայացքը սևեռել դեպի այն և խորհել դրա շուրջ: Եվ որքան ավելի էին նայում, այնքան ավելին էին տեսնում: Օրհներգերի հեղինակները ևս նույնն են արել: Քրիստոսի խաչի շուրջ հյուսվել են անգլիալեզու բանաստեղծություններից ամենավսեմները: Երբ գրողները նայել են խաչին և ուսումնասիրել այն, պարզապես չեն ասել՝ «Օ՜, այո՛, ես գիտեմ, որ Հիսուսը մահացել է, Նա խաղաղարար էր և մահացել է», այնուհետև՝ անտարբեր անցել: Բարեկա՛մս, եթե այն քեզ վրա նման ազդեցություն է թողնում, ապա դու խաչը չես տեսել: Ուրեմն պետք է կանգ առնես և նայես, ուսումնասիրես, ամեն բան մի կողմ դնես և հայացքդ սևեռես դրան, այնքան նայես, մինչև տեսնես դրա խորությունները կամ, ինչպես Թոմաս Կարլայլն է ասել, այս փառահեղ խաչի «անսահմանությունն ու անհունությունը»»[10]:

Ուիլիամ Ռոմեյնը նույնպես պարծեցել է մեզ համար արված մեր Ազատարարի զոհաբերությամբ.

> «Մենք պետք է հավիտենապես մտքում պահենք Քրիստոսի անձնազոհ սերը. այն միշտ պետք է ջերմացնի մեր սրտերը, մշտապես պետք է լինի մեր

10 Lloyd-Jones, *Cross*, 64–65.

շուրթերին: Խաչափայտի վրա Նրա չարչարանքերը պետք է լինեն մեր անսպառ թեման՝ «Ինձ քավ լիցի պարծենալ, բայց միայն մեր Տեր Հիսուս Քրիստոսի խաչով» (Գաղ. 6.14): Սրանով և միայն սրանով ենք պարծենում՝ օգտագործելով մեր ձայները, ամեն տեսակի երաժշտական գործիքներ, բայց որ ամենակարևորն է՝ մեր սրտերի մեղեդիները. ջանում ենք փառաբանել Նրան, Ով մորթվեց և Իր արյամբ փրկագնեց մեզ Աստծո համար»[11]:

11 Adapted from William Romaine, *Essay on Psalmody* (London, 1775).

12

ԱՎԵՏԱՐԱՆՆ ԱՆՏԵՍԵԼՈՒ ԶԳՈՒՇԱՑՈՒՄ

Հաշվի առնելով Հիսուս Քրիստոսի Ավետարանի արտասովոր բնույթը և այն լուրջ տնտեսվարությունը, որը մեզ է հանձնված՝ միակ հարիր բանը, որ կարող եմ անել գրքի ավարտին, զգուշացնելն է: Մենք պետք է զգույշ լինենք Ավետարանի, դրա հրաշալիքների ուսումնասիրության և դրա ճշմարտությունների քարոզչության նկատմամբ նվազագույն անտարբերություն կամ անփութություն ցուցաբերելուց: Եբրայեցիս 2.1-3-ը զգուշացնում է. «Նրա համար պետք է մեզ առավել ևս ականջ դնենք այն մեր լսած բաներին [այսինքն՝ Ավետարանին], որ մի գուցե պակասվենք: Որովհետև եթե հրեշտակների ձեռով խոսած բանը [այսինքն՝ օրենքը] հաստատ եղավ, և ամեն հանցանք և անհնազանդություն ընդունեց իր արդար պատիժը, ապա մենք ինչպե՞ս կպրծնենք, եթե անհոգ լինենք այսպիսի մեծ փրկության համար...»:

Եբրայեցիս գրքի հաջորդ գլուխներում Սուրբ Հոգին ավելի համոզիչ է խոսում. «Մեկը, որ Մովսեսի օրենքն անարգում էր, առանց ողորմության երկու կամ երեք վկայի *խոսքով* մեռնում էր: Էլ որքա՞ն ավելի, կարծում եք, սաստիկ պատժի կարժանանա նա, որ Աստծո Որդուն ոտքի տակ կոխեց և ուխտի արյունը պիղծ համարեց, որով նա սրբվեց, և շնորհքի Հոգուն նախատեց» (Եբր. 10.28-29):

Այս խոսքերում Եբրայեցիս գրքի հեղինակը զգուշացնում է հավատուրացության՝ Ավետարանի քրոնիկ

մերժման դեմ: Բայցևայնպես, այդ զգուշացումը չափավոր կերպով կարող է կիրառվել նաև անտարբերության կամ անփութության ցանկացած աստիճանի դեմ: Ճիշտ աստվածաբանությունը մեծ կարևորություն ունի, սակայն այն բավարար չէ: Մենք պետք է միշտ զգուշանանք Քրիստոսի նկատմամբ մեր առաջին սերը և Ավետարանի նկատմամբ մեր սկզբնական գնահատանքը կորցնելուց: Քրիստոսի զգուշացումը Եփեսոսի եկեղեցուն ցավալի, սակայն օգտակար հիշեցում է. «Բայց քեզ դեմ *այս* ունեմ, որ քո առաջին սերը թողել ես:

Արդ հիշի՛ր, թե որտեղից վայր ընկար, և զղջա՛, և առաջի գործե՛րն արա. ապա թե ոչ կգամ շուտով քեզ մոտ և քո ճրագակալը կշարժեմ իր տեղից, եթե չապաշխարես» (Հայտն. 2.4-5):

Ճշմարիտ քրիստոնյան, ով սրտով վերստին ծնված է, ջերմորեն սիրում է Քրիստոսին և Նրա Ավետարանը: Այդուհանդերձ, նույնիսկ ամենասրբագործված քրիստոնյան ենթակա է անկում ապրած մարմնի ցանկություններին և սատանայի փորձություններին, ով առանց ջանք խնայելու փորձում է շեղել հավատացյալի ուշադրությունն ու սերը դեպի պակաս կարևոր բաները: Պողոսը գրել է Կորնթոսի հավատացյալներին, որոնք հրապուրվել էին մեկ այլ Հիսուսի մասին քարոզչությամբ. «Բայց վախենում եմ՝ մի գուցե ինչպես օձն իր խորամանկությամբ խաբեց Եվային, այնպես էլ ձեր միտքն ապականվի այն միամտությունից, որ Քրիստոսում է» (Բ Կորնթ. 11.3): Նա գրել է նաև Գաղատիայի հավատացյալներին, որոնք սկսել էին շեղվել Ավետարանից. «Ո՛վ անմիտ գաղատացիներ, ո՞վ կախարդեց ձեզ, որ ճշմարտությանը չհնազանդվեք. որոնց համար աչքերի առաջ նկարագրվեց Հիսուս Քրիստոսը խաչված ձեր մեջ» (Գաղ. 3.1): Նա զգուշացրել է Կողոսիայի հավատացյալներին, որոնց հետապնդում էին կեղծ ուսուցիչները. «Զգո՛ւյշ կացեք, միգուցե մեկը հափշտակի ձեզ փիլիսոփայությունով և դատարկ խաբեբայությունով,

մարդկանց ավանդության պես, աշխարհի սկզբունքների պես և ոչ թե Քրիստոսի պես» (Կող. 2.8):

Սիրելի՛ ընթերցող, հարկավոր է միշտ զգուշանալ հերձվածություններից, որոնց նպատակն է Ձեր ուշադրությունը շեղել Ավետարանից: Բայցևայնպես, Դուք պետք է ավելի մեծ զգուշություն ցուցաբերեք այն բաների նկատմամբ, որոնք բարի և աստվածաշնչյան են, սակայն չեն կարող փոխարինել Ավետարանին: Դրանք կարող են մատնացույց անել Ավետարանը կամ բխել դրանից, սակայն նույնը չեն, ինչ Ավետարանը, և գերազանցությամբ դրան հավասար չեն: Պողոսը գրել է. «Ուրեմն օրենքը սուրբ է, և պատվիրանն էլ՝ սուրբ և արդար և բարի» (Հռոմ. 7.12): Այդուհանդերձ, այն ստվերն է և ոչ թե հիմնական առարկան: Այն չի փրկում. դրա գործառույթը խաչը մատնացույց անելն է: Ամուսնությունը և ընտանիքը կարգված են Աստծուց և Նրա մեծ շնորհի դրսևորումն են: Եվ սակայն դրանք քրիստոնեության կենտրոնական կետը չեն: Բարոյագիտությունը, առաքինությունը և բարոյականությունը մեծ կարևորություն ունեն քրիստոնեական կյանքում և կարող են մեծ վկայություն տալ Ավետարանի զորության մասին, սակայն եթե դրանց տրվի առաջնահերթություն կամ նույնիսկ հավասարություն Ավետարանին, ապա դրանք կդառնան վտանգավոր շեղումներ: Այն անհամար պարգևները, որոնք Աստված տալիս է Իր ժողովրդին, պետք է գոհունակությամբ ընդունվեն: Եվ սակայն դրանցից ամենամեծն էլ փոշի է՝ համեմատած Նրա միածին Որդու հետ: Հազարավոր աշխարհներ արժեցող պարգևը աղբ է՝ համեմատած Քրիստոսի հետ: Այս պատճառով էլ Ջոն Ֆլեյվելը զգուշացրել է. «Զգուշացե՛ք, որ աշխարհի փոշին չընկնի Ձեր աչքերի մեջ և չկուրացնի Ձեզ, որ չտեսնեք Քրիստոսի գեղեցկությունը կամ անհրաժեշտությունը»[1]:

Այն ամենը, ինչ կարդացինք մինչ այս պահը, պետք է

1 Flavel, *Works of John Flavel*, 1:26.

տանի մեզ մի շատ կիրառական հարցի՝ ինչպե՞ս կարող ենք խուսափել անփութությունից և աճել Ավետարանի նկատմամբ մեր գնահատանքի ու նվիրման մեջ: Պատասխանը մի քանի մասով է տրվում:

Ուսումնասիրե՛ք թեմայի մեծությունը

Երբ հղում ենք անում Ավետարանին, մարդկանց ուշադրությունը չենք հրավիրում սուրբգրային *ինչ-որ թեմայի,* այլ Սուրբ Գրքի *թեմային* և կհամարձակվենք ասել՝ Աստծո ամենագերազանց մտքին: Վաղ ժամանակների սրբերից շատերն ասել են, որ Աստվածաշնչի անգամ փոշին ոսկի է: Այդ դեպքում որքա՞ն ավելի արժեքավոր է դրա ամենամեծ գանձը: Մենք չպետք է սխալվենք. ոչ մի բան չի կարող հավասարվել Ավետարանի արժեքին, ոչինչ չի կարող պարփակել Ավետարանի իմաստությունը, ոչինչ չի կարող համեմատվել դրա գեղեցկության հետ: Մեջբերելով իմաստունի՝ իմաստությանը տված նկարագրությունը՝ կարող ենք ասել. «Որովհետև նրա շահը լավ է արծաթի շահից, և նրա արդյունքը՝ մաքուր ոսկուց: Նա պատվական է գոհարներից, և քո բոլոր ցանկալի բաները նրան չարժեն» (Առակ. 3.14-15): Ուիլիամ Բեյթսը գրել է.

> «Ավետարանի ուսմունքն իր վերջնանպատակով և դրան հասնելու միջոցներով գերազանցում է բոլոր կիրառական գիտությունները: Դրա վերջնանպատակը մարդու գերագույն երջանկությունն է, մարդու սկզբնական անմեղության և գերազանցության վերականգնումը: Իսկ միջոցներն ընտրվել են անսահման իմաստությամբ, ինչի օգնությամբ էլ հեռացվել են ամենաանհաղթահարելի խոչընդոտները, որոնք են Աստծո արդարությունը, որը դատապարտում է մեղավորին, և այլասերված մարդու ուժեղ և անկոտ-

> րում ատելությունը... Ահա այստեղ հայտնվում է Միջնորդը, Ով «կարող է փրկել ամենավերջին մեղավորին», Ով Իր աստվածային զոհի արյամբ հանգցնում է Աստծո ցասումը, Ով Իր մահվան գնով քավում է մեղքը և Իր կյանքի առաքինությամբ մաքրագործում է հոգիները, որպեսզի դրանք իրենց իսկ փրկությանը համապատասխան լինեն: Աստվածային զորությունից պակաս ոչ մի այլ զորություն չէր կարողանա կատարել այս աշխատանքը: Այստեղից է ծագում ավետարանական գիտելիքի գերազանցությունը, և գիտելիքի մյուս բոլոր տեսակներն առանց դրա անօգուտ են դառնում, քանզի միայն այն կարող է մեզ կատարելապես օրհնված դարձնել. «Եվ սա է հավիտենական կյանքը, որ ճանաչեն քեզ միայն ճշմարիտ Աստված, և Նրան, որ ուղարկեցիր՝ Հիսուսին Քրիստոսին» (Հովհ. 17.3)[2]:

Խանդավառվե՛ք մեծ սրտերից

Քրիստոնեությունը «միայնակ գայլի» կրոն չէ: Սուրբ Գիրքը հստակ ասում է, որ մենք ունենք միմյանց կարիքը, որպեսզի հավատքի մեջ հաստատ մնանք և շնորհքի մեջ աճենք: Առակաց 27.17-ում ասվում է. «Երկաթը երկաթով է սրվում, և մարդը սրում է իր ընկերոջ երեսը»: Եբրայեցիս թղթի հեղինակը ավելի պարզ է արտահայտվում. «Պինդ բռնենք հույսի դավանությունն՝ անսայթաք, որ հավատարիմ է Խոստացողը: Եվ զգուշանանք իրար համար՝ դեպի սեր և բարի գործեր գրգռելով: Եվ չթողնենք մեր իրար հետ ժողովվելը, ինչպես ոմանց սովորություն է, բայց իրար հորդորենք և այնքան ավելի, որքան տեսնում եք, որ օրը մոտեցած է» (Եբր. 10.23-25):

Նույնիսկ մեծ Պողոս առաքյալն էր տեղյակ իր այս կարիքից: Հռոմեացիս 1.11-12-րդ խոսքերում նա գրել է

2 Bates, *Harmony of the Divine Attributes*, 105.

Հռոմի եկեղեցուն. «Որովհետև շատ ցանկանում եմ ձեզ տեսնել... ձեր հաստատվելու համար. այսինքն՝ որ ձեզ հետ մխիթարվեմ մեր փոխադարձ՝ իմ և ձեր հավատքի միջոցով»: Սուրբ Գիրքն ապացուցում է, որ մենք մեկս մյուսի կարիքն ունենք՝ հավատքի մեջ առաջընթաց ապրելու համար: Բայցևայնպես, ի՞նչ կարող ենք անել, երբ հայտնվում ենք քրիստոնեության մեջ, որը բուն կիզակետից շեղվել է, իր դիտակն ուղղել պակաս կարևոր հարցերի և Ավետարանը հստակ չի տեսնում: Երեք բան է խորհուրդ տրվում:

Առաջինը՝ հրահրել մեզ ավելի մեծ նվիրում ցուցաբերելու Քրիստոսին, քաջալերանք փնտրել Սուրբ Գրքում, որտեղ կարող ենք տեսնել մարդկանց, որոնց սրտերն ու մտքերը վառվում են Քրիստոսի ու Նրա Ավետարանի համար: Ըստ Ա Պետրոս 1.12-ի՝ նույն այն սերովբեները, որոնք իրենց երեսները ծածկում էին Գահի առջև (Ես. 6.1-3), այժմ ձգտում էին տեսնելու բոլոր փառահեղ հրաշալիքները, որոնք առանց սահմանների պարունակված են Ավետարանի մեջ: «Ձգտել» բառը թարգմանված է հունարեն «epithuméō» բայից, որ նշանակում է «սիրտդ ուղղել դեպի ինչ-որ բանը», «ջերմեռանդորեն ցանկանալ», նույնիսկ՝ «տենչալ կամ բաղձալ»: «Նայել» բառը թարգմանված է հունարեն «parakúpō» բայից, որ բառացիորեն նշանակում է «թիկնել» կամ «կռանալ»: Ավետարանը պետք է որ չափազանց մեծ մի բան լինի, որ հրեշտակները ցանկանան այլ բաներից շրջվել, նայել դեպի այն ու ջանալ իրենց վեհ մտքերով ընկալել այն: Արդյոք նրանց արձագանքը չպե՞տք է հրահրի մեզ էլ ավելի մեծ նախանձավորությամբ անելու նույնը: Եթե ամբողջ արարչության ամենաազնիվ արարածները մեծագույն ուրախություն են ապրում Ավետարանին նայելուց, արդյոք չպե՞տք է մենք մի կողմ թողնենք անարգ բաները և միանանք նրանց ազնվականությանը: Ուիլիամ Բեյթսը գրել է.

«Մենք բավականանում ենք թեթև և հպանցիկ հայացքներով, սակայն լրջորեն չենք կենտրոնանում Աստծո այս օրինված նախագծի վրա, որը մեր երջանկության սկիզբն է այս կյանքում և դրա կատարելագործումը գալիք կյանքում: Եկեք ինքներս մեզ հրահրենք հրեշտակների օրինակով, որոնք փրկագնման նույնպիսի հարց չունեն, ինչպես մարդը, քանզի չեն դադարել իրենց Արարչին հավատարիմ մնալուց և միշտ երջանիկ են եղել Նրա բարեհաճության մեջ, իսկ որտեղ կողմերը չեն բաժանվել, այնտեղ հաշտության անհրաժեշտություն չկա: Այդուհանդերձ, նրանք մեզ հետ միասին միևնույն գրքի ուսանողներն են, և իրենց ամբողջ զորությունը կենտրոնացրել են այս առեղծվածի շուրջ խորհելու վրա. նրանք ներկայացված են այս գաղտնիքների շուրջ հետաքրքրությունից կռացած, ինչը ցույց է տալիս նրանց ուրախությունը նրանով, ինչ գիտեն, և նրանց ցանկությունը իրենց գիտելիքի մեջ աճելու [Ա Պետր. 1.12]: Այդ դեպքում ինչպիսի՞ ուշադրությամբ պետք է ուսումնասիրենք Ավետարանը մենք, որ դրա առարկան ու վերջնանպատակն ենք»[3]:

Սուրբ Գրքում մեզ համար օրինակ են ոչ միայն հրեշտակները, այլև բազում սուրբեր, որոնք արտասովոր նախանձավորություն ունեին՝ Աստծո փրկագնող ծրագրի նույնիսկ մեկ առկայծումը տեսնելու: Հավատքով Աբրահամը ցնծաց՝ իրեն տրված խոստումների միջոցով տեսնելով Քրիստոսի օրը (Հովհ. 8.56): Մովսեսը Քրիստոսի նախատինքը «եգիպտացիների հարուստ գանձերից ավելի մեծ հարստություն» համարեց (Եբր. 11.26): Մարգարեները «այն փրկության համար որոնեցին և քննե-

3 Bates, *Harmony of the Divine Attributes*, 110.

ցին, որ մարգարեանում էին այն շնորհքի համար, որ լինելու էր ձեզանում, քննելով, թե որ և ինչպիսի ժամանակի համար էր գուշակում Քրիստոսի Հոգին, որ նրանցում էր, առաջուց վկայելով Քրիստոսի չարչարանքները և նրանից հետո լինելու փառքը» (Ա Պետր. 1.10-11): Հեթանոս մոգերը իրենց հեռավոր հայրենիքից ճանապարհ ընկան և եկան՝ տեսնելու Մանուկին ու Նրա ոտքերի մոտ դնելու գանձեր (Մատթ. 2.1-2, 9-11): Այրի Աննան «տաճարից չէր հեռանում. ծոմերով և աղոթքներով գիշեր ու ցերեկ ծառայում էր *Աստծուն*: Սա էլ նույն ժամում վեր կացավ՝ Տերից գոհանում էր և խոսում էր Նրա մասին այն ամենին, որ Երուսաղեմի մեջ փրկության սպասում էին» (Ղուկ. 2.37-38): Սիմոն Արդարը վերցրեց Հիսուսին իր գիրկը և հռչակեց, որ իր ամբողջ կյանքի ձգտումը դրանով կատարվեց, ու ինքը պատրաստ է մահանալու. «Հիմա արձակում ես քո ծառային, ո՛վ Տեր, Քո խոսքի պես խաղաղությունով, որովհետև իմ աչքերը տեսան Քո փրկությունը» (Ղուկ. 2.29-30): Ի վերջո, Պողոս առաքյալը, բարձրաձայնելով ամբողջ առաքելական խմբի ցանկությունը, ասում է. «Բայց ինչ բան որ ինձ շահ էր, այն վնաս համարեցի Քրիստոսի համար: Եվ հենց ամեն բաներ էլ վնաս եմ համարում իմ Տեր Հիսուս Քրիստոսի գերազանց գիտության համար, որի պատճառով ամեն բանից զրկվեցի և աղբ եմ համարում, որ Քրիստոսին շահեմ» (Փիլիպպ. 3.7-8):

Մենք պետք է նաև քաջալերվենք այլ եկեղեցիների և ծառայողների կողմից, որոնք սիրում են Քրիստոսին և Նրա Ավետարանը: Մենք չպետք է տրվենք Եղիայի կասկածին՝ կարծելով, թե միայն մենք ենք հավատարիմ մնացել Իսրայելում: Այլ պետք է հիշենք, որ Աստված միշտ մնացորդ ունի պահված Իր համար, որն ավելի մեծ է, քան մենք երբևէ կարող ենք պատկերացնել (Գ Թագ. 19.10-14): Ամեն ջանք պետք է գործադրենք՝ գտնելու աստվածաշնչյան եկեղեցի և դառնալու դրա նվիրյալ անդամները: Այդ

եկեղեցին պետք է հայտնի լինի Աստծո հանդեպ իր մեծարանքով, Սուրբ Գրքին հնազանդությամբ, Քրիստոսի և Նրա Ավետարանի հանդեպ իր սիրով: Նման եկեղեցին Քրիստոսին բարձր արժեք կհամարի, իսկ մյուս բաները՝ աղբ (հատկապես՝ ժամանակավոր բարգավաճումը)՝ Նրա հետ համեմատած:

Ի վերջո, մենք պետք է նայենք եկեղեցու պատմությանը: Աստվածապաշտ շատ տղամարդիկ և կանայք են եղել եկեղեցու ամբողջ պատմության ընթացքում, և նրանց գրվածքները բառացիորեն աստվածաշնչյան գիտելիքի և Քրիստոսի գերազանցությունների հրաշալի ներըմբռնումների օվկիանոս են: Հատկապես ուշագրավ են ռեֆորմիստների, պուրիտանների, մասնավոր մկրտականների և վաղ ավետարանականների գրվածքները: Այնպես, ինչպես Սուրբ Գրքից զատ ցանկացած այլ աշխատություն, սրանք ևս անսխալական չեն և պետք է քննվեն, բայցևայնպես դրանց հեղինակները Սուրբ Գրքի այնպիսի իմացություն են ցուցաբերում և այն մեկնելու այնպիսի կարողություն, ինչպիսին հազիվ թե գտնվի մեր օրերում: Իսահակ Ամբրոսը Ավետարանով կլանված նման սուրբերի շրջանում լավագույն օրինակներից է: Նրա հետևյալ երկու հորդորները ցույց են տալիս հին գրողների ուժը մեզանում Քրիստոսի հանդեպ ավելի մեծ նվիրում հրահրելու գործում.

> «Արդյոք կարիք ունե՞մ համոզելու, որ Ձեր սրտերն ուղղեք Հիսուսին: Արդյոք Հիսուսը դրան արժանի չէ՞: Այդ դեպքում ինչո՞ւ Ձեր մտքերը Նրանով զբաղված չեն: Ինչո՞ւ Ձեր սրտերը շարունակաբար նրա հետ չեն: Ո՞րն է պատճառը: Արդյոք Աստված թույլ չի՞ տալիս Ձեզ մոտենալ այդ լույսին: Արդյոք Նա չի՞ փափագում, որ ճաշակեք և տեսնեք: Այդ դեպքում ինչո՞ւ է գոչում. «Ահա՛ Ես, ահա՛ Ես» (Ես. 65.1): Օ՜հ, պի՛ղծ

սրտեր: Ինչպիսի՞ հրճվանքով և անխոնջ կերպով ենք մենք մտածում ունայնությունների մասին: Որքա՜ն անկաշկանդ և հաճախ ենք կարողանում մտածել մեր հաճույքների, ընկերների, աշխատանքի, տեն-չանքների, ինչպես նաև մեր թշվառությունների, սխալների, տառապանքների, վախերի մասին: Ինչո՞ւ Քրիստոսը մեր բոլոր մտքերում չէ: Ասում են, որ հրեաները Եսթերի գիրքը կարդալուց առաջ գետնին էին նետում, քանի որ Աստծո անունն այն-տեղ գրված չէր, իսկ Օգոստինոսը Ցիցերոնի գրվածքներն էր նետում, քանի որ դրանցում Հիսուսի անունը չկար: Քրիստոնյանե՛ր, այդպես էլ դուք պետք է խոնարհեցնեք և մի կողմ նետեք Ձեր զգայական սրտերը, որոնցում Քրիստոսն այլևս չկա: Օ՜, հանդի-մանի՞ր նրանց իրենց իսկ ընտրության կամ թուլու-թյան պատճառով Հիսուս Քրիստոսից օտարանալու համար: Հե՛տ դարձրեք Ձեր մտքերը բոլոր երկրային ունայնություններից և խոնարհեցրե՛ք Ձեր ան-ձերը՝ ուսումնասիրելու Քրիստոսին: Սովորությո՛ւն դարձրեք Ձեզ համար նման խորհրդածությունները. թո՛ղ այս մտքերը չլինեն հազվադեպ կամ հպանցիկ. մնացե՛ք դրանց հետ, թո՛ղ Ձեր անձերը ողողվեն այդ բերկրանքով, սուզե՛ք Ձեր հոյզերը հաճույքների այդ գետերի մեջ, իսկ ավելի ճիշտ՝ մխիթարության ծովի մեջ: Օ՜, կապե՛ք Ձեր անձերը երկնային պատկերա-սրահին, թո՛ղ Ձեր աչքերը մշտապես սևեռված լինեն Քրիստոսին[4]:

Զրույցների կամ գրավոր աշխատությունների ամենագերազանց թեման Հիսուս Քրիստոսն է: Կար-դալով Ցիցերոնի աշխատությունները՝ Օգոստինոսը խորհուրդ է տալիս դրանք իրենց պերճախոսության համար, սակայն հետևյալ եզրակացությունն է անում

4 Ambrose, *Looking unto Jesus*, 32–33.

դրանց վերաբերյալ. «Դրանք քաղցր չեն, քանի որ Հիսուսի անունը դրանցում չկա»: Բեռնարդը ևս գրեթե նույն բանն է ասել. «Եթե ինչ-որ բան եք գրել, և դրանում չկա Հիսուսի անունը, ապա այն ինձ հաճույք չի պատճառի»: Իրականում ինչ էլ ասենք, անհամ կլինի, եթե աղով համեմված չլինի. «Ես որոշել եմ Ձեր մեջ ոչինչ չիմանալ, բայց միայն Հիսուս Քրիստոսին, այն էլ խաչվածին (ասում է Պողոսը)»»[5]:

Խրատվե՛ք նրանց օրինակով, ովքեր ավելի մեծ նվիրում են ցուցաբերում ավելի փոքր բաներին

Առակաց գիրքը սովորեցնում է, որ մենք կարող ենք սովորել հիմարից այնպես, ինչպես իմաստունից: Պատմության ընթացքում մարդիկ ավելի մեծ նվիրում են ցուցաբերել անմտություններին, քան ամենակարևոր բանին՝ Հիսուս Քրիստոսի Ավետարանին: Հետևյալ հատվածում մենք կուսումնասիրենք նման օրինակներ, կընդունենք խրատ նրանցից և թույլ կտանք, որ նրանք դրդեն մեզ ավելի մեծ նվիրում ցուցաբերելու այն Միակին, Ով արժանի է մարդկանց և հրեշտակների ամբողջ նվիրմանը:

Մինչև Մեսիայի գալուստը ավելի քան չորս հարյուր տարի Մաղաքիայի գիրքը վերջին խոսքն է եղել Աստծուց: Այս մարգարեությունը տրվել է Աստծո բարության հանդեպ Իսրայելի կուրության համատեքստում, ինչը բերել է անշնորհակալության, անտարբերության և անհնազանդության: Մաղաքիա 1.6-8-րդ խոսքերում Աստված մատնացույց է անում աշխարհում ընդունված սովորույթները և հանդիմանում Իր ժողովրդին.

5 Ambrose, *Looking unto Jesus*, 17.

«Տղան իր հորը կմեծարի, և ծառան՝ իր Տիրոջը. եթե Ես էլ հայր եմ, ո՞ւր է Իմ մեծարանքը, և եթե տեր եմ Ես, ո՞ւր է Իմ երկյուղը,- ասում է ձեզ Զորաց Տերը, ո՛վ Իմ անունը անարգող քահանաներ, որ ասում եք թե՝ «Ինչո՞վ ենք անարգում Քո անունը»: Իմ սեղանի վրա պիղծ հաց մատուցելով: Բայց դուք ասում եք. «Մենք ինչո՞վ ենք Քեզ պղծում»: Ձեր ասելով՝ թե «Տիրոջ սեղանը անարգված է»: Ապա երբ որ կույրը մատուցում եք զոհելու, վատ չէ՞, կամ երբ մատուցում եք կաղը կամ հիվանդը, վատ չէ՞: Նրան մեկ քո իշխանի՞ն մատուցիր, արդյոք քեզ կհավանի՞ կամ քեզ կընդունի՞,- ասում է Զորաց Տերը»:

Վերոնշյալ հարցերը մեզնից յուրաքանչյուրին պետք է ցավ պատճառեն: Որդին հորը պատվում է, քանի որ իր ծնողն է և իր մատակարարը: Ծառան Տիրոջը պատվում է, քանի որ պարտական է նրան: Քաղաքացին իր լավագույնն է առաջարկում կառավարչին՝ որպես ղեկավարի և պաշտպանի, քանի որ պաշտոնով իրենից բարձր է: Սակայն ովքե՞ր են նրանք՝ համեմատած Աստծո հետ, և ինչպե՞ս կարող են համեմատվել մեր պարտականությունները նրանց հանդեպ Աստծո նկատմամբ ունեցած մեր պարտականությունների հետ. «Որ իր Որդին էլ չխնայեց, այլ մեր ամենի համար մատնեց Նրան, էլ ինչպե՞ս Նրա հետ ամեն բան չի շնորհի մեզ» (Հռոմ. 8.32): «Վասնզի հազիվ թե մի արդարի համար մեկը մեռնի (բայց մի բարի մարդի համար իցե թե մեկը համարձակվի մեռնել): Բայց Աստված հայտնեց Իր սերը դեպի մեզ, որ երբ մենք դեռ մեղավոր էինք, Քրիստոսը մեզ համար մեռավ» (Հռոմ. 5.7-8): Որքա՞ն մեծ է մեր պարտքն Աստծո նկատմամբ այն բանի համար, ինչ Նա արել է մեզ համար Իր Որդու միջոցով: Արդյոք այն արժանի չէ՞ ավելիին, քան գլխով հավանություն տալը, խորհրդածության մի քանի խղճուկ պահերը կամ մեզ համար քիչ արժեք ունեցող թշվառ

զոհողությունները: Արդյոք սա չի՞ պահանջում, որ Քրիստոսը և Նրա Ավետարանը մեր մտքերի կենտրոնում լինեն, և մեր սրտի ամեն բաբախյունով գոհանանք Նրանից: Ի՞նչ են մայրամուտը, օվկիանոսը, աստղերը և աշխարհի հարստությունները՝ Քրիստոսի հետ համեմատած: Ի՞նչ են փառահեղ դղյակները և ոսկյա փողոցները՝ Քրիստոսի հետ համեմատած: Եթե մարդիկ կարողանում են իրենց սպառել նվազ կարևոր բաների վրա, արդյոք չպե՞տք է մենք մեզ տրամադրենք ավելի մեծ բաներին: Չարլզ Սպերջենը գրել է.

> «Որքա՜ն մեծ է թիվն այն աչքերի, որոնք նայում են արեգակին: Որքա՜ն մեծ է թիվն այն մարդկանց, որոնք իրենց աչքերը բարձրացնում են դեպի աստղաշատ երկնակամարը: Հազարավոր մարդիկ շարունակաբար նայում են դրանց, մինչդեռ մարդկային պատմության մեջ տեղի է ունեցել մի մեծ գործարք, որն ամեն օր ավելի շատ դիտորդներ է պահանջում, քան արեգակը, որը փեսացուի նման առաջ է շարժվում՝ պատրաստ իր ընթացքին: Տեղի է ունեցել մի մեծ իրադարձություն, որն ամեն օր ավելի մեծ հիացմունքի տեղ է տալիս, քան արեգակը, լուսինը և աստղերը: Այդ իրադարձությունը մեր Տեր Հիսուս Քրիստոսի մահն է: Մշտապես դրան են ուղղված եղել մինչև քրիստոնեական դարաշրջանն ապրած բոլոր սուրբերի աչքերը. հազարավոր տարիների պատմությունից դրան են ուղղված նաև բոլոր ժամանակակից սուրբերի աչքերը: Երկնքում հրեշտակներն իրենց հայացքը չեն կտրում Քրիստոսից: «Ի՞նչ են ցանկանում հրեշտակները տեսնել»,- ասում է առաքյալը: Մշտապես Քրիստոսին են ուղղված բազում փրկագնվածների աչքերը: Արցունքներով լի

այս աշխարհի հազարավոր պանդուխտները չունեն հավատքի ավելի բարձր առարկա, իրենց աչքերի համար ավելի ցանկալի մի բան, քան Քրիստոսին տեսնելն է երկնքում և Նրա հետ հաղորդություն ունենալը: Սիրելինե՛ր, շատերը մեզ հետ միասին պետք է նայեն դեպի Գողգոթան: Մենք չպետք է լինենք մեր Փրկչի մահվան սարսափելի ողբերգության եզակի դիտորդները. մենք պետք է սևեռենք մեր աչքերն այդ վայրին, որը երկնքի ուրախության և բերկրանքի կենտրոնն է՝ մեր Տեր և Փրկիչ Հիսուս Քրիստոսի խաչին»[6]:

Ա Կորնթացիս 9.25-րդ խոսքերում Պողոսն ազդեցիկ օրինակ է բերում նրանց մասին, ովքեր իրենց ամենը տալիս են, որ ապականելի մի բան ձեռք բերեն. «Եվ ամեն, ով որ մրցում է, ամեն բանից ժուժկալ է լինում. հիմա նրանք *մրցում են*, որ մի ապականելի պսակ առնեն, իսկ մենք՝ անապականելի»: Մենք հիանում ենք ժամանակակից օլիմպիական մարզիկներով, ովքեր իրենց ամբողջ կյանքը նվիրում են ապականելի մեդալ ստանալու մեկ հնարավորությանը և արագ մարող փառքին: Մենք հարգում ենք գրողներին, նկարիչներին և այլ արվեստագետների, ովքեր իրենց ողջ կյանքն աշխատում են անանուն և ապրում աղքատության մեջ՝ պարզապես գեղեցկություն արտահայտելու համար: Մենք բարձր ենք գնահատում գիտնականներին, մաթեմատիկոսներին և փիլիսոփաներին, ովքեր առանձնանում են բոլորից և գործի դնում իրենց ուղեղի առավելագույն կարողությունները՝ իմանալու այն, ինչը հնարավոր է իմանալ: Մենք ծափահարում ենք հետազոտողներին, ովքեր անասելի զոհողությունների են գնում և ծանր դժվարություններով անցնում՝

6 Charles Spurgeon, *The New Park Street Pulpit* (Pasadena, Tex.: Pilgrim Publications, 1981), 4:65.

պարզապես անհայտը բացահայտելու համար: Արդյոք այս օրինակները չեն հանդիմանում քրիստոնյաներին, որոնց հնարավորություն է տրված իրենց ողջ կյանքը նվիրելու Քրիստոսի Անձի և կատարած գործի մեջ Աստծո փառքերը փնտրելուն, դրանցով վերափոխվելուն և դրանք ուրիշներին հայտնի դարձնելուն: Եթե ուրիշները կարող են արտասովոր կարգապահություն ցուցաբերել ժամանակավոր և անցողիկ բաների համար, արդյոք չպե՞տք է մենք կարողանանք կարգապահ լինել հավիտենական և անվերջանալի բաների համար: Ջոն Ֆլեյվելը գրել է.

> «Չկա ավելի գերազանց վարդապետություն՝ ավելի արժանի քարոզչության և ուսումնասիրության, քան Հիսուս Քրիստոսի, այն էլ խաչյալի վարդապետությունը: Մյուս բոլոր գիտությունները, որքան էլ մեծարված լինեն այս աշխարհում, պետք է համարվեն ոչ ավելին, քան աղբ՝ համեմատած Հիսուս Քրիստոսի գերազանց գիտության հետ [Փիլիպպ. 3.8], «Որի մեջ ծածկված են իմաստության և գիտության ամեն գանձերը» [Կող. 2.3]: Եվդոքսոսն այնքան հմայված էր արևի փառքով, որ կարծում էր, թե ծնվել է դրան նայելու համար: Որքա՞ն ավելի քրիստոնյան պետք է համարի, որ ծնվել է Տեր Հիսուսի փառքին նայելու և դրանով հիանալու համար»[7]:

Իսահակ Ամբրոսը ևս գրել է.

> «Բավական չէ միայն ուսումնասիրել և ճանաչել Նրան, այլ մեր ճանաչողության չափով պետք է նաև խորհրդածենք, երազենք և մտածենք Նրա մասին: Քննելը մեծացնում և ընդարձակում է մեր սիրտն ու միտքը այս կամ այն առարկայի հանդեպ: Քննել նշանակում է մեր մտքերը կենտրոնացնել,

7 Flavel, *Works of John Flavel*, 1:34.

հաստատուն կերպով ճկել այն ինչ-որ հոգևոր հարցի շուրջ, մինչև որ այն աշխատի մեր հույզերի հետ և դառնա մեր խոսակցության առարկան: Գուցե մենք իմանանք ինչ-որ բան, սակայն անուշադիր լինենք նրա նկատմամբ, ինչ գիտենք: Քննելն այն է, երբ մեր սիրտն ու միտքը կենտրոնանում են ինչ-որ իմացյալ բանի վրա, իսկ մնացած բաները տվյալ պահին ուշադրության չեն առնվում: Օ՜, եթե հավիտենության այս կողմում կարողանայինք քննել Հիսուսին՝ գոնե որոշ ժամանակ մոռանալով մյուս բոլոր բաները: Քրիստոնյա՛, աղերսում եմ քեզ, որ մահանաս աշխարհի համար, անզգա լինես մյուս բոլոր բաների հանդեպ և նայես միայն Հիսուսին: Ասում են, երբ մարդը կատաղության մեջ է, չի զգում, երբ ֆիզիկապես ինչ-որ բան են անում իրեն, քանի որ ամբողջ միտքը տարված է նրանով, ինչն այդ պահին ուժգնությամբ վերապրում է: Եթե որևէ առարկա երբևէ նման կերպ գրավի քրիստոնյայի միտքը, ապա դա պետք է լինի Քրիստոսը: Մեծ մաթեմատիկոս Արքիմեդի մասին պատմում են, թե երբ գրավում էին այն քաղաքը, որտեղ նա գտնվում էր, նրա ականջների մոտ որոտում էին պատերազմական գործիքները, և շուրջբոլորը խառնաշփոթ էր, նա այնքան զբաղված էր գծեր գծելով, որ ոչ մի աղմուկ չէր լսում, ոչ մի վտանգից տեղյակ չէր: Սակայն եթե նման առարկաները կարող էին այնպես կլանել նրա միտքն ու մտադրությունները, որ այլ բաներն անկարևոր դառնային, որքան ավելին պետք է լինի Քրիստոսին քննելը: Եթե մարմնական սիրտը՝ մարդը, որի միտքը զբաղված է երկրային բաներով, կարող է այդպես կլանվել դրանցով, քանի որ դրանք իրեն դուր են գալիս, որքան ավելի՝ շնորհքով լցված սիրտը, որը կարող է տեսնել Աստծո և

Քրիստոսի բաների իրականությունը հավիտենության տեսանկյունից, պետք է կլանվի դրանցով այնպես, որ ուրիշ ոչինչ կարևորություն չունենա: Օ՜, իմ ա՛նձ, սկսի՛ր քննել դրանք... Այդ գործարքի ամեն մասը հատուկ նշանակություն ունի և արժե քո ջանքերին: Որքա՜ն շատ մարդիկ են գլուխ կոտրում և իրենց հոգիները վատնում արվեստի և գիտությունների ուսումնասիրության վրա՝ բաներ, որոնք վերոնշյալի հետ համեմատության մեջ արժեք չեն ներկայացնում: Մինչդեռ Պողոսն ասում է. «...միտքս չէի դրած մի ուրիշ բան գիտենալ ձեր մեջ, բայց միայն Հիսուս Քրիստոսին և այն էլ խաչվածին» (Ա Կորնթ. 2.2): Հիսուսի ամեն կողմն ու կետը ճանաչելը՝ լինի դա Նրա ծնունդը, կյանքը թե մահը, փրկարար գիտելիք է: Օ՜, կանգ մի՛ առեք դրա դիմաց պահանջվող գնի դիմաց՝ լինի դա ցավ թե ուսումնասիրություն, արցունքներ թե աղոթք, խաղաղություն թե հարստություն, բարիքներ թե բարի անուն, կյանք թե ազատություն. վաճառե՛ք ամենը այս մեկ մարգարտի համար: Քրիստոսն այնքան թանկ է, որ հնարավոր չէ չափազանց թանկ գին վճարել Նրա համար, նույնիսկ եթե Ձեզ ու Ձեր կյանքն ամբողջությամբ տաք Նրա համար: Քրիստոսին ուսումնասիրելը ուսումնասիրությունների ուսումնասիրությունն է. Քրիստոսի ճանաչողությունը ամենն է, ինչ անհրաժեշտ է թե՛ այս աշխարհում, թե՛ գալիքում: Օ՜, ուսումնասիրե՛ք Քրիստոսին»[8]:

Ուիլիամ Բեյթսն իր «Աստվածային հատկանիշների ներդաշնակությունը» գրքում նույնպես մեկնաբանում է այս թեման.

---

8 Ambrose, *Looking unto Jesus*, 65–66, 196.

«Պալատական փիլիսոփա Սենեկան երկրի վրա իր գոյությունն արժեքավոր էր համարում միայն աստղաշատ երկնքի շուրջ խորհելու համար: Նա կարող էր տեսնել երկնակամարի տեսանելի գեղեցկությունը միայն, սակայն անտեղյակ էր դրանում պարփակված փառքից և դեպի այդ փառքը տանող ճանապարհից: Այդուհանդերձ, համոթ մեզ՝ նա ասում է, որ երկնակամարին գցած հայացքն իրեն ստիպում է արհամարհել երկիրը, և առանց երկնային մարմինների շուրջ խորհրդածության նա իր գոյությունն այս աշխարհում մարդու կյանք չի համարում, այլ գազանի տանջանք»[9]:

Լրջությամբ մոտեցեք անգամ աննշան անտարբերությանը

Քրիստոնեական կյանքում կան բաներ, որոնց հարցերը պետք է լուծել արագ և կտրուկ: Այդ հարցերից մեկն այն է, երբ սիրտը անտարբեր և թմրած է Քրիստոսին ճանաչելու հարցում: Մատթեոս 5.29-30-ում Հիսուսը տալիս է Իր ամենախիստ և արմատական հորդորներից մեկը. «Եվ եթե քո աջ աչքը գայթակղեցնում է քեզ, հանի՛ր նրան և քեզնից դե՛ն գցիր... Եվ եթե քո աջ ձեռքը գայթակղեցնում է քեզ, կտրի՛ր նրան և քեզնից դե՛ն գցիր»: Չնայած որ Հիսուսն այստեղ չափազանցություն (հիպերբոլա) է օգտագործում, պետք է լուրջ վերաբերվել նրան, ինչ Նա նկատի ուներ: Սրտի մեղսալից գործողություններին և վերաբերմունքներին պետք է առավելագույնս լուրջ վերաբերվել և խիստ կարգուկանոնի բերել դրանք: Հայտնություն 2.5-ում Հիսուսը Եփեսոսի եկեղեցուն զգուշացնում է, որ իրենց առաջին սերը թողել են. «Արդ հիշի՛ր, թե որտեղից վայր ընկար, և զղջա՛, և առաջի գործե՛ր արա. ապա թե

9 Bates, *Harmony of the Divine Attributes*, 109.

ոչ կգամ շուտով քեզ մոտ և քո ճրագակալը կշարժեմ իր տեղից, եթե չապաշխարես»: Թվում է, թե մենք հակում ունենք մեղքերը դասակարգելու որպես ավելի մեծ և ավելի փոքր: Մենք իրավացիորեն համարում ենք, որ սպանությունը և անբարոյականությունը Աստծո օրենքի սարսափելի խախտումներ են, հետևաբար վախենում ենք դրանցից և որոշակի պարամետրեր սահմանում, որպեսզի պաշտպանված լինենք դրանց մեջ ընկնելուց: Եվ եթե հանկարծ մենք կամ ուրիշ մեկն ընկնում է նման ցավալի մեղքի մեջ, մենք ամոթահար ենք լինում և սգում: Այդուհանդերձ, հաճախ սխալ ենք վերաբերվում այն մեղքերին, որոնք պակաս հրապարակային խայտառակություն են բերում կամ ավելի տանելի են թվում: Եվ սակայն արդյոք Քրիստոսի և Նրա Ավետարանի հանդեպ անտարբերությունը չէ՞, որ ծնունդ է տալիս մեղքի բոլոր տեսակներին: Արդյոք դա չէ՞ մեր անկման սկիզբը: Արդյոք դա չէ՞ Պանդորայի արկղը, որը երբ բացվում է, շատ վտանգներ է առաջ բերում:

Երբ հայտնաբերում ենք, որ մեր սիրտը գոլ է Քրիստոսի և մեր փոխարեն կատարած Նրա փրկագնող գործի նկատմամբ, ապա պետք է խստագույնս վարվենք ինքներս մեզ հետ: Պետք է ընդունենք, որ հիմարություն ենք անում, և մեր անտարբերությունը խելագարությունից ոչնչով պակաս չէ: Այնուհետև պետք է անմիջապես հակահարված տանք ապաշխարությամբ՝ նորոգելով մեր նվիրումը և մեր կյանքերը հագեցնելով Աստծո Խոսքով, աղոթքով և աստվածային ընկերակցությունը փնտրելով: Էդուարդ Փեյսոնը գրել է.

> «Բարեկամնե՛րս, չկա հոգևոր ճշմարտության հանդեպ մեր հիմար անզգամության ավելի աչք զարնող և բավարար ապացույց, քան այն անտարբերությունն է, որով մենք վերաբերվում ենք Քրիս-

տոսի Ավետարանին: Բոլոր այն հրաշալի բաների մեջ, որ Աստված հանձնել է Իր ստեղծածների խորհրդածությանը, որևէ մեկն այնքան արժան չէ բորբոքելու մեր խոր հետաքրքրությունը և ուշադրությունը, որքան նրանք, որոնք Ավետարանն է բացահայտում»[10]:

Ուիլիամ Բեյթսը նույնպես համաձայնել է, որ Ավետարանն ուսումնասիրելը շատ ավելի մեծ ձգողականության ուժ ունի, քան բոլոր երկրային ձգտումները.

«Ավելի մեծ զարմանք պիտի առաջացնի այն, որ մարդիկ իրենց կյանքի թանկ ժամերով գնում են անպտուղ հետաքրքրություններ, որոնք անօգուտ են վերջերի վերջի համար: Ինչպե՞ս կարող է դատապարտված հանցագործը, ով գտնվում է կյանքի և մահվան միջև, նվիրվել բնության և արվեստի ուսումնասիրությանը, երբ նրա բոլոր մտքերը զբաղված են նրանով, թե ինչպես կանխարգելել իր դատավճռի իրականացումը: Ոչ այլ ինչ, քան խելագարություն է փրկության համար անկարևոր բաների վրա գլուխ կոտրելը և Ազատարարին անտեսելը, երբ գալիք բարկությունից խուսափելու համար կարճ և անորոշ ժամանակ է մնացել: Հատկապես, երբ Նրա հայտնությունն այդքան պարզ է, և հավատքից եկած արդարությունը չի պահանջում, որ բարձրանանք երկինք կամ իջնենք երկրի խորքերը՝ այն հայտնաբերելու համար, այլ մեզ մոտ է այն խոսքը, որը բացահայտում է ճանապարհը դեպի երջանիկ անմահություն (Հռոմ. 10.6-7)»[11]:

10 Payson, *Complete Works of Edward Payson*, 3:148.

11 Bates, *Harmony of the Divine Attributes*, 109.

13

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՀՈՐԴՈՐ

Սիրելի՛ քույրեր և եղբայրներ Քրիստոսում, ավելին ի՞նչ կարող եմ ասել, քան այն խոսքերը, որոնք արդեն ուղղվեցին Ձեր սրտերին և մտքերին: Արդյոք Քրիստոսի փառքը ներկայացնելը վեր չէ՞ լեզվական կարողություններից՝ լինի մարդկային թե հրեշտակային: Արդյոք Քրիստոսի նույնիսկ աղքատիկ ճանաչողությունը չի՞ գերազանցում բոլոր ակնկալիքները: Արդյոք բոլոր ակադեմիական գիտաճյուղերի մեծագույն թեմաները ոչ այլ ինչ չե՞ն, քան Նրա լեռան ստորոտը: Արդյոք որևէ մեկը կարո՞ղ է Նրա կողքին դրվել առանց ամոթի: Ինչպես Ֆլեյվելն է սովորեցնում՝ «Բոլոր գեղեցիկ բաները սև են, տձև և գեղեցկությունից զուրկ, երբ դրվում են ամենագեղեցիկ Տեր Հիսուսի կողքին»[1]:

Աղերսում եմ Ձեզ, ինչպես ինքս իմ սրտին եմ աղերսում, որ Աստծո փառքը փնտրեք Քրիստոսի Ավետարանի մեջ: Դարձրե՛ք դա Ձեր կյանքի կարգն ու կանոնը և Ձեր ամենօրյա աշխատանքը: Կա՞մ մեկը կամ մի բան, որն ավելի է արժանի Ձեր նվիրմանը, ժամանակին, ուժին և կյանքին: Չկա՛: Գիտեք, որ չկա: Եթե հավատացյալ եք, ապա գիտեք, որ Նա բազմիցս ապացուցել է դա: Ամեն անգամ, երբ անմտորեն այլ սերերի հետևից եք վազել, մնացել եք դատարկ, կեղտոտ, սպառված և կարոտած: Ամեն անգամ, երբ դեպի Նրան եք վերադարձել, ավելի, քան ակնկալում էիք, գտել եք Նրա ողորմածությունը, գթասրտությունը և սերը:

Ուրեմն եկե՛ք ամուր որոշում կայացնենք և ամեն օր թարմացնենք մեր որոշումը, որ փնտրելու ենք մեր Փրկչին և բացահայտելու մեծությունը Նրա Անձի և գործերի՝ Նրա ապրած կյանքի, կրած չարչարանքների, տարած հաղթանակների և մեր

1 Flavel, *Works of John Flavel*, 1:xix–xx.

փոխարեն իրագործած փրկության: Եկեք ավելի խոր, ավելի բարձր և ավելի երկար ժամանակ անցկացնենք Նրա հետ մեր անձնական հանդիպումներում: Արդյոք մենք կանտեսե՞նք թագավորի հետ անձնական հանդիպումների արտոնությունը, այն էլ այսպիսի Թագավորի: Աշխարհը ձգտում է դեպի մեզ և անվճար առաջարկում է իր անտաշ ու անարժեք քարերը: Արդյոք մենք թույլ կտա՞նք, որ այս փուչ բաները շեղեն մեզ երկնային ադամանդները փնտրելուց: Մենք պետք է հետ քաշվենք այս աշխարհի ունայնության տոնավաճառներից և գնանք փառքի նեղ ճանապարհով, քանի որ «արդարների ճանապարհը ծագող լույսի պես է, որ գնալով լուսավորվում է, մինչև որ կատարյալ օր է դառնում» (Առակ. 4.18): Թեև երբեմն ստիպված ենք լինում մթության մեջ քայլել, որտեղ լույս չկա, եկեք վստահենք Տիրոջ անվանը և հենվենք մեր Աստծո վրա (Ես. 50.10): Մթությունն ի վերջո կվերածվի ստվերի, իսկ ստվերը՝ լույսի, լույսն էլ՝ պայծառ օրվա: Եթե որոշենք փնտրել Նրան, մեր որոնումները ապարդյուն չեն լինի: Օվսե մարգարեն հորդորել է՝ «Եվ կճանաչենք և էլ կհետևենք ճանաչելու Տիրոջը», ինչին հետևում է խոստումը՝ «Արշալույսի պես պատրաստ է Նրա ելքը, և Նա պիտի գա մեզ համար անձրևի պես, վերջին անձրևի պես, որ ոռոգում է երկիրը» (Օվսե 6.3): Հորդորը հետևյալն է. «Եկեք հետևենք Նրան, որպեսզի իմանանք»: Եկեք հետևենք Նրան այնպես, ինչպես որսորդը հետևում է եղջերուին: Եկեք զարմանահրաշ ընթացքով հետևենք Նրան: Այնուհետև, երբ Նա թույլ կտա, որ հասնենք Իրեն, եկեք միանանք Հակոբին և Մովսեսին իրենց համարձակ պահանջի մեջ. «Քեզ բաց չեմ թողնի, մինչև չօրհնես ինձ Քո փառքի ավելի մեծ դրսևորմամբ» (տե՛ս Ծնն. 32.26, Ելից 33.18):

Գուցե հարցնեք. «Կարո՞ղ ենք նման համարձակությամբ խոսել մեր Տիրոջ հետ: Կարո՞ղ ենք վստահ լինել, որ Նա կհանդիպի մեզ հետ»: Օվսեն պատասխանում է. «Արշալույսի պես պատրաստ է Նրա ելքը, և Նա պիտի գա մեզ համար անձրևի պես, վերջին անձրևի պես, որ ոռոգում է երկիրը»: Հավատո՞ւմ եք, որ վաղը արեգակը ծագելու է, և նոր օր է սկսվելու: Այդ դեպքում տրամաբանությունը պահանջում է, որ էլ ավելի մեծ վստա-

հությամբ հավատաք, որ Քրիստոսը ոչ միայն կգա Ձեզ մոտ, այլև կգա որպես անձրևի աղբյուր՝ ոռոգելու Ձեր անձերը: Ամեն բանից ավելի հաստատ է Տիրոջ պատրաստակամությունը՝ գտնվելու նրանց կողմից, ովքեր փնտրում են Իրեն: Նա ասել է Երեմիային. «Եվ դուք Ինձ կորոնեք և կգտնեք, որովհետև Ինձ կխնդրեք ձեր ամբողջ սրտով» (Երեմ. 29.13): Դավիթը հորդորել է Սողոմոնին. «Եթե Նրան որոնես, Նա կգտնվի քեզնից» (Ա Մնաց. 28.9): Այս խոստումները մարգարեների, թագավորների և նահատակների բացառիկ արտոնությունը չեն. դրանք պատկանում են Աստծո ժողովրդի անգամ ճանապարհից շեղվածներին: Աստված խոստացել է Իսրայելին, որ կգտնվի նրանց կողմից անգամ աքսորի ժամանակ. «Եվ այնտեղից կորոնես քո Եհովա Աստծուն և կգտնես, եթե բոլոր սրտովդ և բոլոր հոգովդ Նրան խնդրես» (Բ Օրինաց 4.29): Աստված Իր խոստումը ավելի է ընդլայնում Իր մարգարե Եսայիայի միջոցով. «Ես որոնվեցի նրանցից, որ չէին հարցնում. Ես գտնվեցի նրանցից, որ Ինձ չէին խնդրում: Եվ ասացի՝ «Ահա Ես, ահա Ես», այն ազգին, որ Իմ անունը չէր կանչել» (Ես. 65.1): Ունենալով այս խոստումները՝ եկեք չուշացնենք «Տիրոջը խնդրելը, քանի որ Նա գտնվում է. Նրան կանչելը, քանի որ Նա մոտ է» (Ես. 55.6): Եթե մենք ճաշակել և տեսել ենք, որ Տերը քաղցր է (Սաղմ. 34.8), ապա եկեք երկար մնանք Նրա սեղանի շուրջը, որ ամեն օր ավելի ու ավելի տեսնենք ու ճաշակենք Նրան:

Որպես եզրափակում՝ թողնում եմ Ձեզ մի մարդու խոսքերի հետ, ով ինձնից ավելի գիտակ է, որպեսզի այդ խոսքերը նորոգեն Ձեր ջերմեռանդությունը՝ Ավետարանի մեջ Քրիստոսին փնտրելու և Ձեր նվիրումը անբեկանելի կապով ամրացնելու.

> «Օ՜, բոլոր սրտերը պետք է գերվեն այս Քրիստոսով: Քրիստոնյանե՛ր, ուղղեք Ձեր աչքերը Տիրոջը: «Նորից ու նորից նայե՛ք Հիսուսին»: Ինչո՞ւ եք սևեռված նայում այս աշխարհի խաղալիքներին, երբ Ավետարանի մեջ Ձեզ նման Քրիստոս է տրված: Կարո՞ղ է աշխարհը մեռնել Ձեզ համար: Կարո՞ղ է աշխարհը հաշտեցնել Ձեզ Հոր

հետ: Կարո՞ղ է աշխարհը մոտեցնել Ձեզ Երկնային արքայությանը: Քրիստոսը ամենն է ամենի մեջ, և ուրեմն թո՛ղ Նա լինի մեր ցանկության, հույսի, հավատի, սիրո և ուրախության ամբողջական առարկան: Թո՛ղ որ Նա լինի առաջին միտքն առավոտյան և վերջին միտքը՝ գիշերը: Կարո՞ղ եմ մի խոսք էլ ասել ձեզ՝ հավատացյալներիդ: Հիսուս Քրիստոսի կատարած բոլոր գործարքները կիրառե՛ք ձեր կյանքում: Հիշե՛ք, թե ինչպես Նա իր Հոր ծոցից Ձեզ համար եկավ երկիր, Ձեզ համար արտասվեց, Ձեզ համար արյուն թափեց, Ձեզ համար Իր կյանքը տվեց, Ձեզ համար Երկինք վերադարձավ և նստեց Հոր աջ կողմում, Ձեզ համար տիրում է աշխարհին, Ձեզ համար բարեխոսում է և աշխարհի վերջում կրկին կգա Ձեզ համար, որ ընդունի Ձեզ Իր մոտ, որ հավիտյան ապրեք Նրա հետ: Վստահաբար, եթե սրան հավատաք և այսպես ապրեք, Ձեր կյանքը կլինի հարմարավետ, իսկ մահը՝ քաղցր: Եթե երկրի վրա երկինք գոյություն ունի, ապա Դուք այն կգտնեք՝ ամեն օր վարժվելով և կատարելով Ավետարանի պարտականությունը, այն է՝ Հիսուսին նայելը[2]:

Երբ հասնում ենք Քրիստոսի մարմնացմամբ և խաչելությամբ կատարված փրկագնման մասին լուրջ մտքերի, չպետք է մեր սրտերն արագ շեղենք դրանցից, այլ պետք է ջանանք մնալ և ավելի խոր քննել այդ քաղցր թեման, որն արժանի է գրավելու մեր հույզերը և զբաղեցնելու մեզ սրբության ուսումնասիրությամբ»[3]:

Թանկագի՛ն պարոն, Քրիստոսն է արտում պահված աննման մարգարիտը [Մատթ. 13.46]: Կլինե՞ք Դուք այն իմաստուն վաճառականը, որը կորոշի ձեռք բերել և պահել այդ գանձը, ինչ էլ որ այն արժենա: Օ՜, պարո՛ն, Քրիստոսի համար երբեք հնարավոր չէ չափից թանկ գին վճարել»[4]:

---

2 Ambrose, *Looking unto Jesus*, 694.

3 Alexander Nisbet, *Geneva Series Commentaries: An Exposition of I & II Peter* (Carlisle, Pa.: Banner of Truth, 1982), 46.

4 John Flavel, *The Fountain of Life Opened Up*, ed. Anthony Uyl (Woodstock, Ontario: Devoted Publishing, 2018), 5.

Աստվածաշունչը գրավիչ կերպով ցուցադրում է Հիսուսի Բարի լուրի անհամեմատելի գերազանցությունը: Աստծո սերն է Ավետարանը լսելի դարձնում, իսկ Վոշերը մանրամասն ներկայացնում է դրա բովանդակությունը՝ ցույց տալով, թե ինչպես է այն անփոփոխ մնացել ամբողջ պատմության ընթացքում, և թե որքան գերազանց է Հիսուս Քրիստոսի Ավետարանը միաժամանակ հայտնության, փրկության, սրբագործման, ուսումնասիրության, քարոզչության և մեր պարծանքը լինելու համար: Չնայած որ մենք մարդկայնորեն միտված ենք մեր կարիքները դիտարկելու որպես կենտրոնական, Վոշերը հորդորում է մեզ չանտեսել Ավետարանը, որն անըմբռնելիորեն մեծ է, և նախանձավորությամբ փնտրել Քրիստոսին Ավետարանի մեջ:

«Աշակերտները Պայծառակերպության լեռան վրա տեսան Հիսուսին արևի նման փայլելիս: Այսօր մենք Ավետարանի մեջ ենք տեսնում Քրիստոսի փայլը: Փոլ Վոշերն օգնում է բարձրացնելու մեր աչքերը և տեսնելու Ավետարանի գերակայությունը քրիստոնյայի կյանքում և ծառայության մեջ: Օգտվելով անցյալի մեծ քարոզիչների և ուսուցիչների իմաստությունից՝ Վոշերը մարդկային հոգու համար վայելք է առաջարկում, ինչպես նաև խստորեն հորդորում՝ մեր աչքերը կենտրոնացած պահելու Ավետարանի վրա, ինչ էլ որ անենք»:
Ջոել Ռ. Բիք. Պուրիտանական բարեփոխված աստվածաբանական ճեմարանի նախագահ, Գրանդ Ռափիդս, Միչիգան

«Այստեղ Փոլ Վոշերը լավագույնս նեկայացնում է մեկնության ենթակա ամենամեծ թեման՝Հիսուս Քրիստոսի գերազանցությունը: Այս գրավիչ էջերումնա ցույց է տալիս, որ Տեր Հիսուսի Անձն ու կատարած գործն են սկիզբն ու վերջը՝ Ավետարանի ուղերձի բուն իմաստն ու ամփոփումը: Ուշադրությամբ ընթերցեք այս գիրքը, քանի որ այն պարունակում է ամենակենսական ճշմարտությունը, որ երբևէ կլսեք»:
Սթիվեն Ջ. Լոուսոն. «OnePassion Ministries» ծառայության նախագահ

«Ինչպես ցանկացած ճշմարիտ հավատացյալ գիտի, Քրիստոսը մեզ համար պետք է լինի ամենը կամ ոչինչ: Սրա պատճառը Նրա Ով լինելն է որպես անսահմանորեն փառավոր Աստված-մարդ, և այն աննկարագրելի հրաշափառ փրկությունը, որը Նա մեզ համար գնել է: Փոլ Վոշերը հրաշալի աշխատանք է կատարել՝ ներկայացնելու մեզ այս ցնցող իրողությունները Աստծո Խոսքով հագեցած և պատմությամբ հաստատված իր գրքում: Այն կդրդի Ձեզ երկրպագելու Աստծուն, քանի որ Ձեր անձը նորովի կհագենա Քրիստոսի անքննելի հարստություններով»:
Քոնրադ Մբեուե. Կաբվաթայի մկրտական եկեղեցու հովիվ և Զամբիայի Լուսակա քաղաքի Աֆրիկյան քրիստոնեական համալսարանի հիմնադիր կանցլեր